


[www.punqhq.am](http://www.punqhq.am)  
ժամանակակից հայ գրականության հայախառն @մթերցողի համար



*www.բնագիր.am*  
*ժամանակակից հայ գրականության հավաքածու @նթերցողի համար*

*Խնրագիրներ՝  
Վիոլետ Գրիգորյան  
Վահրամ Մարտիրոսյան*

*ԲՆԱԳԻՐ 8-ի հրատարակումը հովանավորել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը:  
Շնորհակալություն ՓՐԻՆԹԻՆՖՈ-ին՝ աջակցության համար:*

Երևան|2004

**Վահան Իշխանյան** էջ 4  
Բացում են լահմաջոն,  
եւ միջից ճչում է  
նորածին երեխան:



**Վահե Ավետյան** էջ 22  
Հիմա մի տեսակ  
տարակուսանքի մեջ  
եմ՝ կան պետք է  
բյուրեղյա մայրենիով  
արտահայտվեմ, որ  
տզետ չաթլախները  
նկատողություն չանեն,  
կան սրտից գրեմ...



**Ալեքսանդր  
Հովսեփյան** էջ 40  
**Բեն-** Մի ժամանակ ես  
շատ, շատ էի մտածում  
Հիսուսի մասին:  
Բավական էր մի քիչ  
ալկոհոլ ընդունելի,  
անմիջապես տեսնում  
էի Աստծու որդուն,  
զրուցում էի նրա հետ...

**Ջաս Սուպերպոետ** էջ 10  
Ես Ջաս Սուպերպոետս  
SAS SUPERMARKET-ում  
զնեցի մի առողջ մկնիկ  
սատկած մկնիկին  
թաղեցի աղբարկղում ու  
շվվացրի ռեքվիեմ իսկ  
առողջ մկնիկիս պորտը  
կապեցի համակարգչին



**Արման Գրիգորյան**  
էջ 16  
– Հակառակը: Ոչ թե  
մենք ենք դավաճանում  
պրոլետարիատին, այլ  
Նիլոլայը՝  
ազնվականությանը:



**Անահիտ  
Հայրապետյան** էջ 35  
– Շնորհակալություն,  
դուք ազատ եք:  
– Մի՞թե, իսկ դուք, դուք  
ազա՞տ եք:

**Աշուղ Փլեյրը** էջ 71  
Ման եմ գալիս «Յամ-  
յամում»,  
XX ORBIT եմ ծանում:



**Վահրամ  
Մարտիրոսյան** էջ 34  
Իր անժամանակ  
մահվանից առաջ  
հայրս ինձ տարավ  
Յոհանեսբուրգ,  
որպեսզի 20,5 միլիոն  
ԱՄՆ դոլար պահ տանք  
անվտանգության  
ծառայություններ  
մատուցող մի  
մասնավոր  
ընկերության:

**Մանաս** էջ 64  
...գուցե ոչ ոք  
բնագրային կասկածներ  
չունենար, եթե  
հեղինակն ինքը  
«չմատներ» իրեն...

**Լուսինե Ստեփանյան**  
էջ 27  
Չեն ներելու ...  
Չեն ներելու ...




**Սամվել Յավրյան** էջ 31  
11-րդ օր  
Գիտելիքների օր

**Անահիտ Սարգիսեան**  
էջ 43  
ուսանող էի  
այն տարիներուն  
երբ կարագի հերթը  
Երեւանի  
մայթերն ու փողոցները  
կը լիզէր.

**Կարեն Մխիթարյան**  
*էջ 45*

Այսօրվա մանուկուն  
նույնիսկ տարին մի  
ոյուցազն չես գտնի,  
այնինչ ո՞ր թերթը  
բացես, լիքը հերոս է:  
Առաջին հայ,  
արեւմտյան տիպի  
վարձու մարդասպանը  
բավականին անշնորհ  
անձնավորություն էր:



**Գոհար Նիկողոսյան**  
*էջ 57*

Ու զուգարան չունեցող  
մարդն անկարող է  
գյուտարար կանգնել,  
ավելի շուտ չունեցածս  
ԲԱՆԸ կկանգնի, ու գող  
կնստեմ:

**Յովհաննես**

**Թեթյոզյան** *էջ 47*

Քթանցքներիս մեջ  
խցկած բամբակները  
հանելով՝ շպրտեցի  
մարզիչիս լուսանկարի  
վրա:  
Անցավ ութ տարի...




**Եղիշե Չարենց** *էջ 20*

Գիրկս առած քեզ դող  
տայի  
Որպես քնքուշ մի  
տղայի...



**Արծուի** *էջ 67*

...որտեղ շատ հարսներ  
շարունակում են  
ծեռքով լվալ  
սկեսրայրների  
սպիտակեղենը:



**Արամ Յովհաննիսյան**

*էջ 61*

– Եթե ուզում ես,  
կհեռանամ տնից,  
եղած-չեղածը կթողնեմ  
քեզ, միայն թե՛ մարդու  
բան չասես, թող մեր  
մեջ մնա: Մեծսիրտ  
եղիր:




**Նազարեթ Կարոյան** *էջ 72*

Յետխորհրդային  
տարածքի ժամանակակից  
արվեստի միջավայրերում  
տարածված մյուս համոզ-  
մունքն այն է, թե  
հետխորհրդային  
հեղինակները կարող են  
ճանաչում գտնել  
ժամանակակից արվեստի  
արևմտյան միջավայրում,  
և խնդիրը միայն նրանց  
արդյունավետ  
ներկայացման մեջ է...

**Գրիգոր Պըլտեան** *էջ 54*

Գրելու համար դուրս  
պետք է ելլեմ տունէն:



**Նարեկ Նիկողոսյան**

*էջ 70*

Ձը՛նգ, զը՛նգ...

**Արաքս Պողոսյան** *էջ 52*

Վարդերը՝  
նրանք եւ կան եւ չկան:



**Արման Մարտիրոսյան**  
*էջ 42*

Նա տեսավ, որ իրեն ոչ  
ոք չէր հետեւում: Նրա  
ետեւում ոչինչ չկար:

**Վահան Իշխանյան**

**Արևածաղիկները չեն թառամում**

Սլավիկ Աղաջանովի բիզնեսի հաջողությունը պայմանավորված է նրա աշխատանքային հարուստ կենսափորձով և պապերից ժառանգած արհեստավորի նուրբ տաղանդով:

Դեռևս դպրոցական նստարանից նա առաջին քայլերն արեց դեպի բիզնես, երբ տատի բոված արևածաղիկի սերմը վաճառում էր Նոր Արեշում, փողոցի մայթին: Նրա կենսագիր, վետերան լրագրող Վլադեն Մուրադյանը ուսումնասիրել է և պարզել, որ 60-ական թվերին Երևանի բոլոր թաղամասերից գալիս էին Նոր Արեշ գնելու համար Ռոզիկ տատիկի արևածաղիկը: Աղաջանովների ընտանիքի պատմությունը նա զետեղել է «Կեսդարյա սխրանք» գրքում (Երևան 1999թ.): Զաճախորդներից մեկը հիշում է. «Այդպիսի արևածաղիկ չկար ողջ հանրապետությունում, ես կասեի ամբողջ Խորհրդային Միությունում: Արևածաղիկը վաճառում էր մի ժրաջան տղա, որ հավելյալ համ էր տալիս «սենուշկային»: Այդ տղան ապագա գործարար Սլավիկ Աղաջանովն էր:

Սակայն խորհրդային տարիներին, ինչպես հայտնի է, ճնշվում էր ձեռներեցությունը, հետևաբար դպրոցն ավարտելով Աղաջանովը չկարողացավ շարունակել տատի բիզնեսը: Նա աշխատեց տարբեր գործարաններում՝ շարքային բանվորից հասնելով մինչև արտադրամասի պետի պաշտոնին, այդպիսով յուրացնելով խոշոր արդյունաբերության ու արտադրության գաղտնիքները:

Խորհրդային Միության փլուզումից քիչ անց, երբ անկախացած երկիրը որդեգրեց ազատ շուկայի լիբերալ քաղաքականությունը, Աղաջանովը նույնպես որոշեց իր բիզնեսը բացել: Եւ հենց առաջինը նրա մտքին եկավ իր վաղեմի երազանքն իրականացնելը՝ բացել դազաղի արտադրություն: Եւ դա պատահական չէր: Նա սերում էր տոհմիկ դազաղագործների ընտանիքից: Արհեստի վերջին ներկայացուցիչը պապը՝ վարպետ Աղասը, 50 տարի դազաղներ է պատրաստել Բաքվում, եղել քաղաքի հարգված արհեստավորներից մեկը: Նրա դազաղներով է թաղվել ադրբեջանական ողջ վերնախավը: Նա պատվերներ էր ստանում նույնիսկ Մոսկվայից: Ասում են, որ նա է պատրաստել Գորկու, Կիրովի և Ստալինի դազաղները («Կեսդարյա սխրանք», 456): Նրա պատրաստած ամուր և ապահով դազաղները դեռևս հիշում են Բաքվի ավագ սերնդի ներկայացուցիչները: Այդպես, օրինակ Բաքվի նախկին քաղկոմի հրահանգիչ 94-ամյա Զասան Աբասովը

«Ինտերմյուս» կազմակերպության կազմակերպած Բաքու-Երևան հեռուստականրջի ժամանակ հիշեց վարպետ Աղասին, որ իր լավ բարեկամն էր եղել և դազաղներ պատրաստել իր ողջ գերդաստանի համար: Նա ափսոսանք հայտնեց, որ չկա այլևս իր ավագ ընկերը, և հիմա չգիտի, թե ինչպես հայթայթի իր համար այնպիսի հարմարավետ դազաղ, որպիսիք պատրաստում էր վարպետ Աղասը:

«Պապս իր ամբողջ կյանքը դազաղներ է պատրաստել թուրքերի համար, ծաղկեցրել նրանց մշակույթը, ժամանակն է, որ ես շարունակելով նրա գործը դազաղներ պատրաստեմ մեր հայրենակիցների համար», – «Անլռելի տեղեկատու» հեռուստահաղորդման ժամանակ իր բիզնեսի սկզբնավորման մասին պատմեց Սլավիկ Աղաջանովը:

Այդպես նա սկզբում բացեց մի փոքրիկ դազաղագործական արհեստանոց Նոր-Արեշի իր տան ետնամասում, որտեղ աշխատում էր ինքը և իր որդին՝ Ռոմանը: Աշխատանքի ընթացքում, դազաղագործի վարպետությանը զուգահեռ, նրա մեջ վերածնվեց գործարարի տաղանդը, և իր փոքրիկ արհեստանոցը կարճ ժամանակում վերածվեց այսօրվա գիգանտ ձեռնարկության՝ Գրանդ Դազաղո Յուրիմգին:

Երբ Գրանդ Դազաղոն դարձավ հանրապետության ամենախոշոր հարկատուն, հայտնի դարձավ, որ դազաղագործությունը հանրապետության տնտեսության առաջատար ճյուղն է հանդիսանում: 2001 թվին Գրանդ Դազաղոյի դազաղները ստացան Կառավարության որակի մրցանակը, իսկ արդեն 2002-ին, Մադրիդում կայացած դազաղների միջազգային մրցույթում, Գրանդ Դազաղոյի դազաղը ստացավ «Պլատինե մահ» մրցանակը: Մրցույթում հաշվի է առնվել դազաղի հարմարավետությունը, քաշի թեթևությունը և փայտի որակը:

Դազաղագործությունը դարձավ այն լոկոմոտիվը, որ իր հետևից առաջացրեց մի շարք այլ արդյունաբերության ճյուղեր, մասնավորապես՝ փայտի և տեքստիլի արտադրություն, կահույքագործություն, վիճակահանությունը և ամենակարևորը գերեզմանաշինարարությունը, որն իր հետևից տարավ նաև քաղաքաշինության մյուս ճյուղերը: Վերջապես Զայաստանի կառավարությունը մշակեց տնտեսության զարգացման ռազմավարություն, որն ստացավ մահվան ծրագիր անվանումը:

Ո՞րն էր հիմնական ազդակը Աղաջանովի բիզնեսի հաջողության: Այսօր արդեն այն գաղտնիք չէ: Դազաղների պահանջարկը որպեսզի աճի, բնականաբար անհարաժեշտ է, որ երկրում աճի նաև մահացածների թիվը:

Դագաղագործությանը զուգահեռ նա ստեղծեց Գրանդ Sun-flowero հացամթերքի արտադրության ձեռնարկությունը: «Ով, եթե ոչ մենք՝ հայ գործարարներս, պետք է կարողանանք օգտագործել հայ գիտական ներուժը և այդպիսով կանխենք ուղեղների արտահոսքը», – մտածեց պարոն Աղաջանովը, և սկսվեց նրա արդյունավետ համագործակցությունը Գիտությունների ազգային ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտի հետ («Կենդարյա սխրանք», 570):

Նրա պատվերով հայ գիտնականները հայտնաբերեցին ունիկալ մի նյութ, որն ունի առանձնահատուկ համային հատկություններ, այն ուտելիս մարդկանց մեջ մշտական պահանջ և կախվածություն է առաջանում նրանից, և ամենագլխավորը՝ յուրաքանչյուր մարդ, որ երեք ամիս օգտագործում է այն, մեռնում է, հենց լրանում է նրա 40 ամյակը: Աղաջանովը նյութը անվանեց իր պապի հիշատակին՝ աղասիկ: Այսպիսով աղասիկը դարձավ Գրանդ Sun-flowero-ի արտադրած հացամթերքի գլխավոր բաղադրանյութը (հաց, մակարոնեղեն, թխածոքներ): Հացատեսակների վաճառքից արագ սկսեց աճել երկրում մահացողների թիվը: Հետևաբար մի կողմից նա եկամուտ է ստանում հացի արտադրությունից, որը նպաստում է նաև մեկ այլ արտադրանքի՝ դագաղի սպառմանը:

Աղասիկի հայտնագործության ունիկալությունն այն է, որ երբ դեռ 40-ը չլրացած որոշակի սպառող մեռնում է տվյալ ժամին, հստակ կարելի է ասել, որ նա 40 տարի առաջ այդ ժամին է ծնվել: Հետևաբար մարդիկ հաճախ մեռնում էին քառասնամյակի տարեդարձին, նաև երթուղային տաքսում, աշխատանքի վայրում, զուգարանում, խանութում և այլ տեղեր:

Թեև երկրում գործում է բիզնեսի գաղտնիության մասին օրենքը, սակայն Կենսաքիմիայի ինստիտուտի մի աշխատակից լրագրողներին հայտնեց աղասիկի գաղտնիքը, և հանրությանը հայտնի դարձավ պատահական մահերի պատճառը:

«Հայ լուր» հեռուստատեսային լրատվական ծառայությունը հայտնում է, որ որոշ ուժեր, որոնց հանգիստ չեն տալիս հանրապետության տնտեսական հաջողությունները, սկսել են շահարկման առարկա դարձնել ունիկալ հայտնագործությունը և հայտարարել, թե աղասիկը մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում է: Մի քանի գործիչներ հայտարարում են, որ անհանդուրժելի է մարդկանց ժամանակից շուտ մահվան ուղարկելը: Հաղորդման ժամանակ արտագործնախարար Մարիո Թաշճյանը ասաց, որ թեև նրանց հայտարարությունները չեն պաշտպանում քաղաքացիները, այնուամենայնիվ, դրանք կարող են ազդել Հանրապետության միջազգային վարկի վրա, որը լուրջ

ղժվարություններ կառաջացնի դարաբաղյան խնդրի կարգավորման հայանպաստ լուծմանը:

«Հայ լուր» հաղորդման անցկացրած հարցումները ցույց են տալիս, որ հասարակությունը աջակցում է մահվան ծրագրին՝ որպես հանրապետության տնտեսության զարգացման առիավատյա: «Հայ լուրի» մեկնաբանը ասում է, որ իհարկե ծրագրի մեջ կան որոշ թերություններ, որոնք ապագայում կշտկվեն: Ներկայացվեցին նաև տարբեր հանգուցյալների թաղումներ և կարծիքներ դագաղների վերաբերյալ, որոնք հիմնականում գոհունակություն էին արտահայտում դագաղների որակից: Միայն մի կին բողոքեց, որ իր որդու դագաղը անորակ է, ջերմա- և ձայնա-մեկուսացիչ չի և կարող է անձրևաջուր ներծծել, բացի այդ որոշ կոշտություն ունի:

«Հետաքննող» լրագրողական ակումբը Բաց հասարակության դրամաշնորհմամբ դագաղների որակի մոնիտորինգ անցկացրեց, որի արդյունքները այնքան էլ գոհացուցիչ չէին: Պարզվել է, որ դագաղները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Մասնավորապես շատ դագաղների պաստառների տակ չկա փափուկ շերտ: Այդ կոշտության պատճառով հանգուցյալների վրա հողը թեթև չի գալիս: Փաստորեն հանգուցյալը հավիտենական կոշտության է դատապարտված: Կազմակերպության նախագահ Գրիշա Մեժլունովը ուսումնասիրությունները ներկայացրեց «Ամենեղության կանխավարկած» հաղորդման ժամանակ. «Սա ժամանակավոր կացարան չէ աղետի գոտու բնակիչների համար, որ ժամանակի ընթացքում քայքայվի, ու մարդ նոր բնակարան ստանա, – ասում է նա, – մեր կառավարությունը պետք է հասկանա, որ դագաղը տրվում է հանգուցյալին հավիտյանս: Դագաղները հաճախ համապատասխան փափուկությունը չեն ապահովում, որը կարող է լուրջ անհանգստություն պատճառել հանգուցյալին: Դագաղների որակը գլխավոր պայմանն է հանգուցյալների իրավունքների ապահովման: Կրկնեն, որ դագաղները հավերժի համար են, հետևաբար դագաղարտադրողի անբարեխիղճ աշխատանքը անհարգալից վերաբերմունք է մեր հանգուցյալ հայրենակիցների նկատմամբ»:

Այս քննադատությունները չէր կարող անպատասխան թողնել Աղաջանովը: «Բարի մթնշաղ» հեռուստահաղորդման ժամանակ նա ասաց, որ ճիշտ է, եղել են մի քանի անորակ դագաղներ, բայց դրանց մասին բարձրաձայնելով ստվեր գցել ամբողջ արտադրության վրա, ճիշտ չի լինի. «Ուն աշխատանքում թերություններ չկան, – խոստովանեց նա, – բայց դրանք շտկելի են: Մենք այժմ պայմանագրեր ենք կնքել ուզեցե՞լ կան ձեռնարկությունների հետ, որ

6 որակյալ բամբակ գնենք: Դազաղները պիտի պատված լինեն բնական հումքով, որ հանգուցյալների կոմֆորտը հնարավորինս ապահովվի: Պատրաստվում ենք նաև ներմուծել բրդի խմբաքանակ: Մեր ազգաբնակչության մեջ մարդիկ կան, որ նախընտրում են բրդե պատվածքով դազաղներ: Գիշտ է, նախկինում մենք օգտագործել ենք սինթետիկ նյութեր, բայց այսօր այդպիսիք արդեն չկան: Այդ լրագրողներին միայն նախանձն է դրդում վարկաբեկել մեր արտադրանքը: Թող տեղյակ լինեն, որ մենք արդեն դազաղները արտահանում ենք, պատվերներ ունենք Սաուդյան Արաբիայից, Էմիրաթներից»:

«Հայ լուրը» նաև հաղորդում է, որ ևս մի հանգամանք շահարկման առարկա են դարձրել մարդիկ: Գաղտնիք չէ, որ դազաղի համար փայտանյութ է հանդիսանում հայաստանյան հաճարենին: Որոշ իրենց բնապահպաններ համարողներ աղմուկ են բարձրացնում, թե իբր Հայաստանի բնությանը հարված է հասցվում, և որ իրենց անձնական շահի համար ոմանք կտրում են անտառները:

Սակայն, ինչպես նշեց վարչապետը «Կառավարական ժամ» հաղորդման ժամանակ, անցումային փուլում գտնվող մեր երկրի համար առաջնային է տնտեսության զարգացումը, և որ դազաղագործության զարգացմանը զուգահեռ զրանցվել է տնտեսական աճ՝ 12,8 % -ով: Այսպես, անցյալ տարի արտադրվել է 35 հազար դազաղ, իսկ այս տարի նույն ժամանակահատվածի համեմատ արտադրվել է 2,5 անգամ ավելի: Բացի այդ դազաղագործության զարգացման շնորհիվ մենք ներմուծող երկրից հետզհետե դառնում ենք արտահանող: Կտրված ծառերի տեղն էլ դատարկ չի մնում, և որևէ անապատացման վտանգ էլ չի սպառնում երկրին: Այդ տարածքներում կառուցվել ու կառուցվում են ժամանակակից հարմարավետ գերեզմանոցներ:

Քաղաքաշինության նկատելի հաջողություն էր մայրաքաղաքի Շորբուլաղ-Դիարբեքիր համայնքի տարածքում գտնվող անտառի տեղը կառուցված «Սենատ» գերեզմանատուն-դամբարան համալիրը, որի բացումը կատարեց անձամբ Հանրապետության նախագահը: Շենքի ճարտարապետական հետաքրքիր լուծում էր գտել ճարտարապետ Նապոլեոն Սահրադյանը. այն «Տրի բոգատիրյա» բուժքննակայանի տեսք ուներ, տանիքին ձիեր հեծած ռուս հսկաների՝ գույնզգույն քարերով արված խճանկարն էր, իսկ ներսը գերեզմանների նախշավոր շարքերն են, որոնց մեջ շոկոլադե սալիկների պես պետք է տեղադրվեն հանգուցյալները: Մինչ շահագործումը Սենատը մի շաբաթ բաց էր ցուցադրման համար, որպեսզի ազգաբնակչությունը համոզվեր, թե ինչ գեղեցիկ ու հարմարավետ հանդերձյալ կյանք են կառուցել մեր շինարարները:

Այցելուներին սրահները ցուցադրելու համար հետաքրքիր ձև էր ընտրել դամբարանի աղմուկ-նիստրացիան. հատուկ պատրաստված գիդերը այցելուներին պատեցնում էին սրահներով նրանց ականջից բռնած, որ այցելուն ինքնուրույն կողմնորոշվելու համար նեղություն չկրի:

Այդպիսի գեղեցիկ գերեզմանոցներ կառուցվեցին նաև մայրաքաղաքի Պալարաձև զբոսայգում: «Անդորր» դամբարանում, որն իր հորինվածքով հիշեցնում էր Ռաֆայելո քաղցրավենիքի տուփը, նախապես գերեզման են գնել ֆրեզկոյաբնակ Հիլդա և Նուբար Բալյանները. «Մենք շատ կուրախանանք, երբ ականատեսը կըլլանք այս քեղեցիկ շինությունների գառուցումին, որ կկատարվի հայրենիքին մեջ: Այսպիսի քեղեցիկ քերեզմաններ աշխարհին մեջ ոչ մեկ տեղ կա: Եւ փափագ հայտնեցինք մեզ համար գնել քերեզման մը, ուր բիտի հավիտյան հանգրվան ստանանք: Ամեն տարի կուզանք և կայցելենք մեր քերեզմանին: Ու ամեն տարի ավելի քեղեցկացած կգտնենք հայրենիքը», – ասաց պարոն Բալյանը «Հայ լուր» հաղորդման ժամանակ:

Այսպիսով, ինչպես նշեցինք, դազաղագործությունը իր հետ զարգացրեց նաև քաղաքաշինությունը:

Մյուս կողմից էլ, այդ աննախադեպ վերելքին Աղաջանովը չէր հասնի, եթե չլինեին տեղական գործարարների համար իշխանությունների ստեղծած բարենպաստ պայմանները: Տեղական արտադրանքը խրախուսելու համար Ազգային ժողովը տասնապատիկ բարձրացրեց ներմուծվող դազաղի, փայտանյութի և հացահատիկի մաքսերը, որպեսզի զարգանա տեղական արդյունաբերությունը:

Իհարկե այս որոշումից հետո Գրանդ Sun-flower-ի արտադրանքը գնում են միայն անապահով խավերը, որոնք ի վիճակի չեն գնել արտասահմանյան անալոգները: Եւ, հետևաբար, 40 տարեկանում մեռնելուց խույս տալու համար ավելի հարուստները նախընտրում են արտասահմանյան մթերք: Իհարկե այս անհավասարությունը առաջացրել է ժողովրդի մեջ որոշ դժգոհություն, որն օգտագործում է ընդդիմությունը: Սակայն Գրանդ Դազաղոյի լաբորատորիայի աշխատակիցները պարզել են, որ արտասահմանյան անալոգները մարդուն չեն պաշտպանում վաղախա մահից:

Նույն «Անլռելի տեղեկատուով» Աղաջանովը զարմանք հայտնեց մեր քաղաքացիների ճաշակի նկատմամբ, որոնք, ավելի թանկ վճարելով, գնում են ավելի անորակ արտադրանք. «Ես զարմանում եմ մեր ժողովրդի վրա, որ գնում, մուսուլմանական մթերք են առնում, որն ուտելուց հետո հայտնի չէ, թե մարդ երբ կմեռնի, գուցե մինչ երեսու՞ն տարեկանը: Պարզվում է,

այո, շատ ավելի շուտ են մարդիկ վերածվում հանգուցյալի՝ արտասահմանյան մթերք օգտագործելիս: Մեր արտադրանքը հստակ փորձաքննություն է անցել, ու հայտնի է, որ մեռնում են քառասուն և անց մարդիկ: Նման հայտնագործություն, որ հստակ հայտնի լինի մարդու մեռնելու տարիքը, աշխարհի ոչ մի երկրում արված չէ»: Ի դեպ, և անկախ, և միջազգային, և պետական փորձագետները խոստովանում են, որ աղասիկից չեն մահանում 40-ը չբուժված անձինք, և այդ առանձնահատկությունը բարձր են գնահատում: «Սոցիոլոգի» անկախ սոցիոլոգիական ասոցիացիայի անցկացրած հետազոտությունները ցույց են տալիս, որ աղասիկ օգտագործողները չեն մեռնում մինչ 40 դառնալը: Աղաջանովը նաև հպարտությամբ ասաց, որ աղասիկով հետաքրքրվել են մի շարք երկրների գործարարներ, ու շուտով հունքը կարտահանվի:

Նա նաև ցույց տվեց երկրի տնտեսական ստրատեգիան. «Տեսեք, մեր երկրում 70 տոկոս գործազուրկ կա, որի 75 տոկոսը քառասուն և անց են: Այդ շերտը լիկվիդացնելով՝ մի կողմից դազադի սպառումից առաջացած հարկերը կլցվեն պետբյուջե, մյուս կողմից՝ գործազուրկների թիվը կտրուկ կնվազի մինչև 20 տոկոս: Փոխարենը բացվում են նոր աշխատատեղեր՝ քաղաքաշինության, տեքստիլի և այլ բնագավառներում, ու գործազուրկությունը ևս կիջնի 20 տոկոսով, և հետևաբար կլուծվի աշխատանքի պրոբլեմը»:

Գրանդ Դազադոյի ժամանակին օգնության հասան հայ արվեստագետները, որոնք սկսեցին գովազդել հայրենական արտադրանքը: Մաշտոցի պողոտայի վրա փակցված 6 մետրանոց ցուցապաստառին՝ երգիչ ժոզեֆ Պնակյանն է պառկած դազադի մեջ և ուրախ բերանն է տանում Sun-flower-ի թխվածքը. և մակագրությունը՝ «Օգնենք մեզ, գնենք մերը»:

Գրանդ Դազադո Յուրիցի գործունեության տասնամյակին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ, որ կայացավ Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում, Հանրապետության նախագահը Sun-flower-ից մահացած հանգուցյալների հարազատներին ասաց, որ հանգուցյալները իրենց ներդրումն են կատարել հայ արդյունաբերության զարգացման մեջ, և նրանց հիշատակը հավերժ կմնա սերունդների հիշողությունում:

«Ես հանձնարարել եմ գիտության և կրթության նախարարին, որ մահվան ծրագրով բոլոր մահացածների անունները մտցվեն դպրոցական հայոց պատմության դասագրքում, և հանձնարարվի աշակերտներին անգիր սովորել այդ անունները», – ասաց նախագահը: Նա նշեց, որ իրականում այդ մարդիկ մեր կողքին են, որի վկայությունն է նրանց

շնորհիվ անգեն աչքով երևացող երկրի տնտեսական զարգացումը:

Այնուհետև նա հայտարարեց, որ ինքը աջակցելու է մահվան ծրագրին, և հակահարված տվեց այն գործիչներին, որոնք աղմուկ են բարձրացրել հաճախների օգտագործման և ընդհանրապես մահվան ծրագրի դեմ:

«Այդ նույն մարդիկ, որ ելույթներ են ունենում մահվան ծրագրի դեմ, ժամանակին փակել տվեցին մեր քիմիական արտադրությունները և մեր տնտեսությունը հասցրին ճգնաժամի: Այդպիսի ելույթներ կարող եք կարդալ Բաքվի մամուլում: Իսկ ինչ վերաբերում է աղասիկին, ապա այդ հայտնագործությունը միայն կարող է հպարտություն առաջացնել ամեն հայ մարդու մեջ: Աշխարհի գիտնականները պայքարում են, թե ինչպես երկարացնեն մարդկանց կյանքը: Եւ միայն Գրանդ Դազադոյի ու հայ գիտնականների համագործակցության շնորհիվ հնարավոր եղավ ստեղծել աղասիկին, որ կարճացնում է մարդու կյանքը»: Նա ասաց նաև, որ, ճիշտ է, 40 և բարձր անձինք դառնում են հանգուցյալ, բայց փոխարենը մենք ունենում ենք հստակ դեռ 40-ը չբուժված առողջ քաղաքացիների հասարակություն, որ աճելու միտում ունի:

Տոնակատարության ժամանակ նախագահը սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան հանձնեց աղասիկի ստեղծման գիտական խմբի ղեկավար ակադեմիկոս Յենրի Բարխուդարյանին:

«Այսօր իմ կյանքի ամենանշանակալից օրն է, – իր շնորհակալական խոսքում ասաց ակադեմիկոսը, – վերջապես իմ տարիների գիտական աշխատանքը ըստ արժանվույնս գնահատվեց: Ասեմ, որ ակադեմիան իմ տունն է, և ես կարող եմ շարունակել իմ գիտական գործունեությունը նույնիսկ առանց աշխատավարձի» (Նշենք, որ ակադեմիական գիտությունը բյուջեի սուղ միջոցների հաշվին չի կարող գոյատևել, հետևաբար գիտնականներին ուղղակի փրկություն էր Գրանդ Դազադոյի կողմից նրանց տրված ամսական 50 դոլար թոշակները):

Հարկ է նշել, որ ակադեմիկոս Բարխուդարյանի եղբայրը՝ Համլետ Բարխուդարյանը, հաջողությամբ իրականացնում է հեռուստատեսային «բարի դազադ» վիճակախաղը: Նոր գովազդային տեսահոլովակում ասվում է՝ մահապարտի օրվան նվիրված բարի դամբարան խաղարկությանը, եթե բռնեք երեք դազադ, կշահեք 100 հազար դրամ, երեք կատաֆալկ՝ վեց հարյուր հազար դրամ, երեք դամբարան՝ և դուք հաջողության փուլում եք:

Հանրապետության նախագահը նաև Մովսես Խորենացու շքանշան հանձնեց Սլավիկ Աղաջանովին և

8 Երա ձեռքը սեղմելով ասաց. «Սլավա, ամեն քառասունն անցի դիմաց դու պետք է այնպես անես, որ ծնվի երեք քաղաքացի, – ու ծիծաղելով կատակեց, – հակառակ դեպքում ձեռնարկությունդ ձեռքիցդ կառնենք»:

Ճիշտ է, Գրանդ Դագադոն ծննդաբերությունը խրախուսելու նպատակով ամեն նորածնի համար բացված հաշվեհամարին փոխանցում է 10 դոլար, սակայն, ըստ վիճակագրության, դեռևս ամեն մահացածին փոխհատուցվում է մեկ նորածին: Գրանդ Դագադոյի լրատվական ծառայության պետը՝ Սվետլանա Սարիբեկյանը հայտնում է, որ ծննդի աճը բարձրացնելու նոր ծրագիր է մշակվում, ըստ որի հացամթերքի մեջ կօգտագործվեն այնպիսի պրեպարատներ, որոնք կբարձրացնեն քաղաքացիների սեռական ակտիվությունը: Հավանաբար այն կկոչվի ռոզիկ (ի հիշատակ Աղաջանովի տատիկի): Տիկին Սվետլանան ուրախությամբ նշեց, որ ի տարբերություն արտասահմանյան անալոգի, այն էրեկցիա կառաջացնի ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց շրջանում: Բացի այդ ԱԺ-ում օրերս ընդունվեց օրենք, որով քրեական պատասխանատվության կենթարկվեն նրանք, ովքեր կկանգնեցնեն հղիությունը արհեստական ճանապարհով (հանցագործին սպառնում է 5-10 տարի ազատազրկում): Օրենքը ընդունվեց միաձայն, քանի որ ծննդի աճը շահավետ է և Գրանդ Դագադոյի շահերը ներկայացնող պատգամավորներին, և հանրապետության մյուս գիզանտ ձեռնարկության՝ Ինթերնեյշնլ Թրավլը Հոլդինգի պատգամավորներին, որ կազմակերպում է Հայաստանից Եվրոպական երկրներ մեր հայրենակիցների տեղափոխումը: Ի դեպ, սա առաջին դեպքն է, որ երկու խմբավորումների մոտեցումները համընկնում են, քանի որ տնտեսության երկու ճյուղերի համար էլ անհրաժեշտ է ծնելիության բարձրացումը: Մինչ այս որոշումը նրանք մշտական թշնամանքի մեջ էին: Գրանդ Դագադոյի բիզնեսը խոչընդոտում էր մյուսի՝ Ինթերնեյշնլ Թրավլըի զարգացմանը, քանի որ երբ աճում էր մահացողների թիվը, բնականաբար նվազում էր արտասահման մեկնել ցանկացողների քանակը: Մյուս կողմից՝ Թրավլըին աջակցող մամուլը շահարկման առարկա էր դարձրել աղասիկը, իրենց հրապարակումներում մանրամասն նկարագրում էր մահացածների տանջանքները, որ սարսափ տարածվի ազգաբնակչության մեջ, ու, հետևաբար, մեկնողների թիվը աճի: Այս հակամարտությունը, որ «Օրագիր» օրաթերթում վերնագրվել էր «Թրավլը պատերազմ է հայտարարել Դագադի մաֆիային», այնքան սրվեց, որ երկու խմբավորումների մեջ եղան մի շարք զինված բախումներ, որոնք խլեցին առնվազն 12 մարդկային կյանք: Արհեստական վիժումների դեմ օրենքը

վերջապես հաշտեցրեց այդ երկու գործարար շրջանակներին: Սակայն շատ քաղաքացիներ փորձում են օրենքը շրջանցել և նույնիսկ բանտում հայտնվելու սպառնալիքի տակ ընդհատել հղիությունը:

Ակադեմիկոս Բարխուդարյանը «Ամենողության կանխավարկած» հաղորդմանը տված հարցազրույցում ասաց. «Մեր ժողովուրդը օրենք չի սիրում: Օրենքը ատելի է և ստորին խավերում, օրենքը ատելի է և վերին խավերում: Ինչ խախտումներ էլ լինեն, ինչ այլանդակություն, այդ ամբողջը ժողովուրդն է, այս ժողովուրդը քաղաքակրթությունից դուրս է ընկած»: Ես նաև ավելացրեց, որ այս պայմաններում շատ դժվար է նախագահի համար իրականացնել իր ծրագրերը. «Նախագահը գտնված է, նա ամենահարմարն է և ամենաօրինակելին, իմ կարծիքով նա ունի փայլուն հատկություններ, նա նուրբ, ուժեղ քաղաքագետ է, ծնունդով այդպիսին է, դենք նրան ուժեղ մեքենայի վրա, Միացյալ Նահանգների պրեզիդենտի աթոռին, կտեսնեք՝ ինչպես կկառավարի»:

Սակայն, այսուհանդերձ, աղասիկի շուրջ կրքերը շարունակում են բորբոքվել: Մասնավորապես Եվրախորհուրդը պահանջում է արտադրությունից հանել աղասիկը: Հայաստանը Եվրախորհրդի առաջ պարտավորվել է 3 տարվա ընթացքում դադարեցնել աղասիկի արտադրությունը, սակայն արդեն 4-րդ տարին չի կատարում պարտավորությունը:

Այս կապակցությամբ «Հայ լուր» լրատվական հաղորդմանը տված հարցազրույցում «Օրինաց երկիր» կուսակցության նախագահը՝ Սերյոժա Բաղդասարյանը, ասաց, որ ի տարբերություն ընդդիմության, որ անիրագործելի խնդիրներ է առաջ քաշում, իրենք ավելի իրատեսական են նայում մահվան ծրագրին: «Եկեք ընդունենք, որ ազգաբնակչության մեջ դժգոհություններ կան մահվան ծրագրի դեմ, շատերը չեն ցանկանում քառասուն տարեկանում մեռնել: Քանի որ մեր երկիրը անցումային փուլում է գտնվում, հետևաբար մենք չենք կարող հրաժարվել մահվան ծրագրից: Սակայն հնարավոր է այնպես անել, որ մարդիկ մի քիչ ավելի երկար ապրեն: Ես ԱԺ ներկայացրել եմ օրենքի նախագիծ, որ աղասիկը ոչ թե 40 տարեկանում ազգաբնակչությանը մահացնի, այլ՝ 45-ում, իսկ ևս երկու տարի անց՝ արդեն 50-ում: Կարծում եմ՝ մեր գիտնականները կարող են այդպիսի աղասիկներ պատրաստել: Ի դեպ նախագիծը անցել է Եվրախորհրդի փորձաքննությունը»:

Իսկ Դաշնակցության ներկայացուցիչ Հրաչյա Հովհաննիսյանը հայտարարեց, որ Գրանդ Դագադոն իրականացնում է դաշնակցության ծրագրերը. «Մեր ծրագիրն է «Մահ կան ազատություն»: Ազատությունը

իրականացվել է, մեր երկիրը ազատ է, մնացել է իրականացնել մահվան գաղափարը, որ հաջողությամբ անում է Գրանդ Դագադոն»: Նա ասաց, որ մարդիկ ոչ միայն պատերազմի ժամանակ պետք է իրենց կյանքը տան հայրենիքին, այլև՝ խաղաղ պայմաններում: Պարոն Զովհաննիսյանը նաև քննադատության ենթարկեց այն քաղաքացիներին, որոնք խուսափում են տեղական հացամթերք գնել և նախընտրում են օտարական արտադրանքը. «Ինչ ասես, քաղաքացիների ցածր ազգային գիտակցության արդյունք է դա»:

Իհարկե, ոչ բոլոր ընդդիմադիր գործիչներն են միանշանակ դեմ արտահայտվում մահվան ծրագրին: Օրինակ Ազգային ժողովրդավարական դաշինք կուսակցության նախագահ Արշավիր Սադոյանը ոչ թե ծրագրին է դեմ, այլ տնտեսական քաղաքականությանը: Այդ մասին նա հայտնեց «Ալտերնատիվ լուր» հեռուստահաղորդման ժամանակ. «Մեր ժողովուրդը միայն այս պահին ապրողները չեն: Ազգը ապրում է դարերի մեջ, անցյալում, ներկայում և ապագայում: Զետևաբար հանգուցյալները չեն մեռել, նրանք մեր ազգի մասնիկն են, որոնք իրենց մահով նպաստում են տնտեսության զարգացմանը, այդպես էլ դեռ չծնվածներն էլ են մեր ազգի ներկայացուցիչները, – ապա ավելացրեց, – ես դեմ եմ ոչ թե մահվան ծրագրին, այլ տնտեսության կլանային կառուցվածքին, որ դազադագործությունը լինի մի անձի մենաշնորհը: Դա հակասում է ազգային ժողովրդավարական գաղափարներին: Պետք է լինի ազատ մրցակցություն, որ երկրում իրոք զարգանա տնտեսությունը: Սակայն Նախագահը, հովանավորելով որոշակի կլանի, խոչընդոտում է դազադագործության զարգացմանը»:

Եւ իրոք: Դագադի արտադրության մենաշնորհային լիցենզիան 30 տարով տրված է Գրանդ Դագադոյին: Զետևաբար դագադի գները չեն իջնում, ամենաժամը արժե 100 դոլար: Որոշ քաղաքացիներ, դագադ գնելու համար չունենալով միջոցներ, վաճառում են բնակարանները: Սակայն Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կատարած հաշվարկները ցույց են տվել, որ այդ դժվարությունները ժամանակավոր են. ընտանիքի միջին տարիքի և տարեց անդամների մահանալով, բնականաբար ընտանիքի ծախսերը քչանում են: Մեկ քառասուննանց կորցնելով՝ յուրաքանչյուր ընտանիք տարեկան խնայում է մոտ 400 դոլար, հետևաբար մեկ տարում ոչ միայն դագադի գինն է փոխհատուցվում, այլև հավելյալ ֆինանսներ են մտնում ընտանիք:

Թեև Գրանդ Դագադո Զոլդինգը միակ դագադ արտադրողն է և հանրապետությունում չունի մրցակից, սակայն, այնուամենայնիվ, նա գովազդում է իր

արտադրանքը:

Գովազդային տեսահոլովակը նկարահանել է տաղանդավոր մուլտիպլիկատոր Սարկիսյանցը: Զետևաբարության էկրանին, հարազատների լացուկոծի ուղեկցությամբ, ծեր հանգուցյալին դնում են դագադի մեջ ու ծածկում Sun-flower-ի լահմաջոյով: Զետևաբար վեր են բարձրացնում: Պարզվում է, որ մարդիկ լահմաջո են բարձրացրել, որին մակագրված է՝ «Ով չուզի հայի լավը»: Բացում են լահմաջոն, և միջից ճչում է նորածին երեխան: Զարագատների լացը վերածվում է խնդության, ու նրանք մինչև լույս քեֆ են անում:

Վերջերս կառավարության մշակած հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում ԱԺ-ն որոշում է ընդունել թափանցիկ դարձնել տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը: Ըստ այդմ՝ Գրանդ Դագադոն պարտավորվել է թափանցիկ դագադներ արտադրել: Առաջին թաղումները թափանցիկ դագադներով շատ արդյունավետ եղան: Զանգուցյալների հարազատները, տեսնելով դագադի մեջ հանգրվանողին, ամբողջությամբ համոզվում էին, որ վերջին հրաժեշտն են տալիս ոչ թե մեկ ուրիշ անձի, այլ՝ իրենց հարազատին: Սակայն ավանդական փայտյա դագադների արտադրությունը չի դադարեցվելու: Ուղղակի փայտյա դագադների խմբաքանակները կարտահանվեն: Նաև ասեկոսներ են պտտվում, որ ոչ բոլոր քաղաքացիներն են օգտվում թափանցիկ դագադներից, այդպիսով խոչընդոտելով կոռուպցիայի դեմ պայքարը: Կարտահանվեն նաև թափանցիկ դագադներ: Մասնավորապես մեր հարևան Վրաստանը ցանկություն է հայտնել օգտագործել հայաստանյան փորձը և կոռուպցիայի դեմ պայքարը դարձնել թափանցիկ՝ ներմուծելով թափանցիկ դագադներ:

Թափանցիկ և փայտյա ավանդական դագադներով չի սահմանափակվում Գրանդ Դագադոյի տեսականին: Զայկական արտադրանքի արմարուդեքսպո ցուցահանդեսում ներկայացված էին 5 տեսակ դագադներ՝ ավանդական, դագադ լուքս (կաքիսի մորթով պատված), դագադ նոյան (առավել լայն՝ նախատեսված հանգուցյալ ամուսինների համար), դագադ բյուրեղ (հախճապակյա), դագադ ռոյալ (օդափոխիչով և ամորտիզացիայով): Զանրապետության նախագահը այցելեց ցուցահանդես և առանձնակի ուշադրություն դարձրեց Գրանդ Դագադոյի արտադրանքին: Փորձելու համար որակը նա պառկեց ռոյալ դագադի մեջ, և դուրս գալով այնտեղից ասաց. «Իսկապես հարմար է»: Նախագահը հրաժարվեց համտեսել Գրանդ Sun-flower-ի արտադրած խմորեղենը, քանի որ իսկապես նա քաղցր չի օգտագործում:

## Ձառ Սուպերպոետ

«Ընթերցողների գործեր» ինտերնետային էջից

[http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=132](http://www.bnagir.am/?go=readers&r_work=132)

## Աշնանային լիրիկա կամ լիրիկական աշուն

### Դպրոցական

- Յինգ անգամ հինգ ինչ կանի
- քսանհինգ
- հիմարություն
- հինգ անգամ հինգ ինչ կանի
- քսանհինգ
- հիմարություն
- վեց անգամ յոթ ինչ կանի
- չեմ հիշում
- բա դու ինչ ես հիշում
- գարաժների արանքը որտեղ քաքեցի

### Ուշ աշուն

Կրծքերիդ առագաստներ կնկարեն  
թանաքավոյ գրիչով  
բայց կպատկերացնեն որ սպիտակ են  
կրծքերիդ ստվերներում նստարաններ կնկարեն  
թանաքավոյ գրիչով  
բայց կպատկերացնեն որ կանաչ են  
ազդրերիդ տերևներ կնկարեն  
թանաքավոյ գրիչով  
բայց կպատկերացնեն որ դեղին ու կարմիր են  
և երբ գրչիս թանաքը վերջանա  
սերմնահեղուկ շաղ կտամ  
առագաստներին նստարաններին տերևներին  
և կպատկերացնեն որ առաջին ձյունն է գալիս

### Անկեղծ բողոք

Մի անգամ էլ  
չէ  
մի անգամ էլ  
չէ  
մի անգամ էլ  
չի կանգնում  
կկանգնացնեն  
չի կանգնում  
կկանգնացնեն  
կանգնացրու  
որ ժաժ տամ  
մարդկային արդարության վրա

**Ինքնասպանի հնարավորությունը**

Ես իմ բանաստեղծության մեջ կգրեմ  
Iggy Pop և David Byrne  
որ երբ նրանց անունները search տան  
գտնեն

Չաս Սուպերպոետին  
կգրեմ U-2 և Simple minds  
ու նաև

Nirvana և Oasis  
որ երբ նրանց անունները search տան  
ու հազարավոր link-երից մեկը բացեն  
կարդան Չաս Սուպերպոետի  
բանաստեղծությունը  
կոճակի մասին

կիմանան բոլորը  
որ կոճակը միայն պրեզիդենտներինը չի  
ամեն մարդ որ զգվել է կյանքից պիտի ստանա իր կոճակը  
որ կյանքից հեռանալիս տրաքացնի իր հետևից աշխարհը  
կամ գոնե իրավունքը տրաքացնելու

Ու քո հետևից կգնան  
կատու սիրող բարի կանայք  
ու նրանք չեն հասցնի ասել ամեն տիպի կատվին  
«վայ նայի ինչ մռութ ունի»  
ու չեն հասցնի համբուրել նրա թաց դունչիկը

ու քո հետևից կգնան արթնանալուց հետո սուրճ խմող արվեստագետները  
ու նրանք չեն հասցնի հեռուստատեսության հարցազրույցում ասել  
«ես գիշերը աշխատում եմ ու ուշ եմ վեր կենում, ժամը երեքին»  
ու չեն հասցնի ասել, որ արվեստագետը պիտի ազատ լինի

քո հետ կգնան  
գուցե քեզնից մի վայրկյան առաջ  
բոլոր բարձր տեխնոլոգիաների մասնագետները  
որ սերը վիրտուալացնելուց հետո մինչև power չտաս չի կանգնի  
իրենք այնքան փող են աշխատում որ կանգնելու պրոբլեմը լուծել են  
բայց չեն հասցնի վերևից նայել համակարգչի գաղտնիքներին անտեղյակներին

ու քո հետևից կգնան չինովմիկները  
պետական պաշտոնյաների բանակը  
դու կսեղմես կոճակը ու նրանց կարիերան կավարտվի  
մեկը ավագ մասնագետ մեկը վարչության պետ  
ու նրանց հետ զցած փողերը փոշի կդառնան  
որ խնայել էին երեխաների ուսման  
ու տարին մեկ լևի գնալու համար

կգնան նաև միջազգային կազմակերպությունների ղեկավարները  
նրանք որ դեմոկրատիա են զարգացնում ավետյաց երկրում  
որը նրանց տալիս է թունավոր ցեխում աշխատողի արտոնություններ  
ավետյաց մանարներ ու ավետյաց կյանք  
էժան գարեջուր էժան մթերք ու էժան հեշտոց որ Նյու-Յորքում  
տասը անգամ ավել կարժեմար

կգնան աղքատները որ հնարել են երեխայի մուրացկանությունը  
որպես խղճի վրա ազդող արդյունավետ էներգիա  
ափսոսես՝ Ջաս Սուպերպոետս սիրում են էս նախադասությունը  
«ձյաձյա հացի փող տուր»  
բայց էլ ասող չի լինի

ձյաձյաներին որ հարուստ են ու խիղճ չունեն  
չեն հասցնի պաշտպանել թիկնապահները  
մուրացկան երեխայի հարձակումից  
խկ խիղճ ունեցող ձյաձյաները ու ծյոծյաները չեն հասցնի խիղճ խաղացնել  
ու երեխային տալ մաշված ու կեղտոտ 10 դրամանոցը  
որից վաղուց ազատվելու ձև էին փնտրում

բայցես՝ Ջաս Սուպերպոետս էլ չեն թվարկի ամեն ինքնասպանի տեղը  
քանի որ լավագույն թվարկողը մի օր արդեն թվարկել է  
և էս այս բանաստեղծությունը նվիրում են նրան  
մեծ թվարկող Ուոլթ Ուիթմենի հիշատակին

### **Թղթապանակ zassuperpoet**

Ես հիմա մի Սուպերպոետս եմ ու իմ անունն է Ջաս  
ու ստեղծել եմ ծրագիր  
ու անունն է PASTLIFESHOP  
ու իմ անցած կյանքը file-երի վերածննդ  
ու հետո հանեն վաճառքի  
եկամուտով տոմս գնեն դեպի Կարիբյան ավազան

բայց ծրագիրը սարքեց  
միայն year ֆորմատով դատարկ շշերի file-եր  
1970  
1971  
1972  
1973  
1974  
1975  
1976  
1977  
1978  
1979  
1980  
1981  
1982  
1983  
1984  
1985  
1986  
1987  
1990  
1991  
1992  
1994  
1995

1996  
1997  
1998  
1999  
2000  
2001  
2002

հետո փոխեցի անցած կյանքիս ֆորմատը  
ու կրկին ծրագիրը սարքեց դատարկ շշերի file-եր  
այս անգամ month ֆորմատով

հունվար  
փետրվար  
մարտ  
ապրիլ  
մայիս  
հունիս  
հուլիս  
օգոստոս  
սեպտեմբեր  
հոկտեմբեր  
նոյեմբեր  
դեկտեմբեր

կրկին փոխեցի անցած կյանքիս ֆորմատը  
ու կրկին ծրագիրը սարքեց դատարկ շշերի file-եր  
այս անգամ day ֆորմատով

1  
2  
3  
4  
5  
6  
7  
8  
9  
10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24

25  
26  
27  
28  
29  
30  
31

ու արդեն հայտնաբերեցի որ ֆորմատ փոխելը անօգուտ է  
իմ անցած կյանքը PASTLIFESHOP ծրագրում  
միայն դատարկ շշերի արտադրամաս է  
ու չփոխեցի էլ անցած կյանքիս ֆորմատը  
որ չժանրաբեռնեմ վինչս  
hour և minute ֆորմատի դատարկ շշերի file-երով

լցրեցի բոլոր file-երը zassuperpoet folder-ում  
շշերի large icons-ները դասավորվեցին արագ ու համաչափ  
ինչպես հրամանատարի դիմաց զինվորների գումարտակն է շարվում  
ու երբ շունչը փչող մկնիկս սլաքը print-ին ճտտացրեց պատահաբար  
լցվեցին սենյակում ապակիների զրնգոցները

թափվեցին printer-ից հերթով դատարկ շշեր հատակին  
ու սատկեց մկնիկս աղմուկից

առանց մկնիկ ես Ջաս Սուպերպոետս հաշմանդամ եմ  
ու անցած կյանքիցս ստացված դատարկ շշերը  
լցրեցի SAS-SUPERMARKET տոպրակներում  
ու տարա հանձնելու եղբորս ընկերոջ խանութում

- 45 դրամ
- չէ էժան է
- լավ որ դու մեր լավ եղբոր եղբայրն ես քեզ 50 դրամ
- չէ էժան է
- 50-ից ավել գին տվող չկա շշին խնձորի քացախի
- ինչ քացախ շշերում իմ կյանքն է եղել  
մանկությունս

երբ հայրս մայրս եղբայրս քույրս մանկապարտեզի դաստիարակչուհին  
փողոցի տղաները հարևաններս՝ Գևորգ ձյածյան ու Ժենիկ ծյոծյան  
սանձնում էին ինձ ու կերտում Ջաս Սուպերպոետսին  
պատանեկությունս

Երևանի թիվ 1700 դպրոցում

երբ պառավ ուսուցչուհին սերտել էր տալիս Լենինի դեկրետները  
պիոներական ճամբարում

երբ տողանի ժամանակ ծածանվող կարմիր դրոշ էի բարձրացնում  
ընտանիքում որտեղ շղթայված էի մորս հորս եղբորս ու քրոջս սիրելիլու պարտականությանը  
մրանց ատելը դեմ է մեր ազգային ավանդույթին  
ազատության հրապարակում

որտեղ ամեն բռունցք բարձրացնելիս մի դատարկ շիշ էր ավելանում  
zassuperpoet folder-ում

ինստիտուտում

որտեղ կատարելագործում էի ընկերության գաղափարը  
ու ստանում մասնագիտություն որին գին տվող չկա

Նոր տարիները հեռուստացույցի դիմաց  
երբ 33-րդ անգամ նայում էի Բաղնիքի անուշը և Կառնավալը  
անկախության ծննդանը  
երբ Չեյզի դեղեկտիվներով կարճացնում էի գարնան գալուստը  
անուսնությունը  
ուր երեխաների արտադրությամբ ավարտվում է առաքելությունը

ու վաճառողը ծիծաղով ընդհատեց  
– չէ իմ եղբայր իմ լավ եղբոր եղբայր դու ինձ չես համոզում  
պիտակին գրված է ոչ ավել ոչ պակաս  
խնձորի քացախ Երևան 1970 թիվ  
ու ես Ջաս Սուպերպոետս չեմ կարող ստել  
երբ շշերից բուրում է քացախի հոտ  
ու անխոս ստանում եմ 3400 դրամ

ես Ջաս Սուպերպոետս SAS SUPERMARKET-ում գնեցի մի առողջ մկնիկ  
սատկած մկնիկին թաղեցի աղբարկղում ու շվվացրի ռեքվիեմ  
իսկ առողջ մկնիկիս պորտը կապեցի համակարգչին  
նա հիմա սլաքը սահեցնում է պաստառին իմ հայացքի հետքով  
և չի թելադրում մահամերձ կյանք

ես Ջաս Սուպերպոետս էլ պատահաբար print չեմ ճտտացնի  
մինչև դատարկ շշերը չլցնեմ BOUNTY-ի գովազդով  
որ պատրաստված է UTOPIASHOP ծրագրով  
այժմ երբ ես Ջաս Սուպերպոետս print տամ zassuperpoethin  
սենյակս կլցվի ռայսկոյե մասլաժդենիե

Արման Գրիգորյան

Կեցցե հեղափոխությունը

Դռների մեջ երևաց Վլադիմիր Իլյիչը: Նա թվում էր շփոթված: Ես չգիտեի՝ Սովնարկոմը կայացրել էր արդյոք որոշում, թե ոչ: Բայց վստահ էի, որ դեռ ամեն ինչ կորած չէ: Նախասարահում հավաքված մարդկանց միջով մի կերպ կարողացա մոտենալ Լենինին: Նա պատրաստվում էր ետ վերադառնալ Գիստերի դահլիճ:

– Վլադիմիր Իլյիչ, գոնե մեկ շաբաթով հետաձգեք հարցի քննարկումը: Ես կարևոր բան ունեմ ձեզ հաղորդելու, – վերջին խոսքերը ես արտասանեցի շշուկով, որպեսզի ոչ ոք չլսի: Լենինը մի պահ կանգնեց դռների մեջ և հարցրեց.

- Ինչ-որ բան է պատահել:
- Ես համոզված եմ, որ ամենալավ տարբերակը մենք դեռ չենք քննարկել:
- Ի՞նչ տարբերակ:
- Եթե ցարը անցնի բոլշևիկների կողմը, իրադրությունը կտրուկ կփոխվի: Աշխարհը կցնցվի: Կղաղարի քաղաքացիական պատերազմը: Իրական հնարավորություն կստեղծվի Համաշխարհային Հեղափոխության համար:

– Նիկոլայը մարքսի՞ստ է դարձել, – շշուկով հեզմեց Լենինը ու բարձր ծիծաղեց:

– Ես դա կարող եմ կազմակերպել: Ես կհամոզեմ Նիկոլային: Վլադիմիր Իլյիչ, օգտագործեք ձեր ազդեցությունը, – ես խոսում էի շատ արագ, հուզված և ծայնս քիչ-քիչ բարձրացնելով, – չի կարելի ճակատագրական սխալ թույլ տալ: Գնդակահարությունը հարցի լուծում չէ: Անզխացիների ու ֆրանսիացիների սխալը մենք չպետք է կրկնենք:

Ներս մտանք Գիստերի դահլիճ, Լենինը արագությամբ դուռը փակեց և դիմելով ժողովոմի անդամներին ասաց.

– Մենք այլ որոշում պետք է կայացնենք, – հետո, նայելով ինձ, շարունակեց, – ընկեր Արմանը անսպասելի լուծում է առաջարկում: Այն թվում է հետաքրքիր, չնայած իր ողջ ֆանտաստիկությանը: Լենինը զբաղեցրեց իր տեղը սեղանի մոտ: Բոլորը ուշադիր նայում էին ինձ: Որոշ դադարից հետո ես վստահորեն ասացի.

- Ցարը համակրում է Պրոլետարական Հեղափոխությանը: Շուտով նա հանդես կգա հայտարարությամբ:
- Ի՞նչ:
- Դա հնարավոր չէ:
- Ի՞նչ է ասում:
- Իսկապե՞ս:

Բոլորը մի պահ խառնվեցին իրար: Սկսեցին խոսել, անհանգիստ այս ու այն կողմ նայել: Լև Դավիդովիչը առանց աչքերը թարթելու ակնոցի վրայից զննում էր ինձ: Ստասովան շատ լուրջ հարցրեց.

- Դուք նրա մոտի՞ց եք գալիս:
- Որտեղի՞ց ձեզ այդ ինֆորմացիան, – ավելացրեց Կամենսկին:
- Ոչ: Ես Նիկոլային չեմ հանդիպել: Բայց համոզված եմ, որ նա կհամաձայնի, – ես չգիտեի ինչպես հանդարտեցնել նյարդային իրավիճակը: Վախենում էի որևէ ավելորդ բառ ասելուց:
- Եվ ի՞նչ կտա դա մեզ, բացատրեք, խնդրում եմ, – Վլադիմիր Իլյիչն էր, նրա խոսքերը փոխեցին սենյակում տիրող մթնոլորտը:

Սվերդլովը դեմքի զարմացած արտահայտությամբ հարցրեց.

- Իսկ դա չի՞ դիտվի մեր կողմից իբրև դասակարգային շահերի դավաճանություն:
- Հակառակը: Ոչ թե մենք ենք դավաճանում պրոլետարիատին, այլ Նիկոլայը՝ ազնվականությանը: Մենք ոչ մի կապ չունենք: Կարևորը՝ կկարողանանք խուսափել ռևանշի հնարավորություններից, – ես սկսեցի ավելի հանգիստ խոսել: Իմ առաջարկը կարծես համոզիչ էր թվում: – Հիշեք պատմությունը: Այսօր մեզ անհրաժեշտ է միայն, որը կարող է հանդիսանալ որպես նմուշ: Այն մարդկանց համար, ովքեր իրենց ողջ գիտակցական կյանքն ապրել են դասակարգային հասարակության մեջ, դժվար է հաղթահարել վախը: Նրանք սովոր են նայել և կրկնել իրենց տերերին: Մենք պետք է կարողանանք օգնել նրանց ապրել ազատության մեջ: Դա կարևոր է: Մենք պետք է սոցիալիզմի գաղափարները ընդունելի դարձնենք աշխարհի բոլոր մարդկանց համար: Ես համոզված եմ, որ Նիկոլայ II-ի սպանությամբ ավելի շահագրգռված են հետադեմ ուժերը: Մենք դա թույլ տալ չենք կարող:

- Այդպես է: Ես համաձայն եմ, – Տրոցկու ձայնը զրնգաց քար լռության մեջ: Ես հասկացա, որ հաղթեցի:
- Բայց ցարը հեղինակագրկված է: Նրան ոչ ոք չի լսի, – դա նորից Սվերդլովն էր:
- Դժվար է ասել: Ռուս ժողովուրդը հավատացյալ ժողովուրդ է: Ցարի մանիֆեստը կարող է մեծ տպավորություն թողնել նրա վրա, – բարձրաձայն մտածում էր Լենինը, – բայց այդ ավանտյուրայից մեծ հաջողություններ սպասել պետք չէ:
- Ես, ոգևորված իմ ծրագրի ընդունելությունից, թույլ չտվեցի Վլադիմիր Իլյիչին շարունակել իր մտորումները.
- Ամբողջ աշխարհը կցնցվի, ընկերներ, ամբողջ աշխարհը կցնցվի, – այս բառերը ես արտասանեցի երևի մի տասն անգամ՝ հերթով դիմելով յուրաքանչյուր

ժողովրդական կոմիսարին:

Մոտավորապես կես ժամ էլ թագավորական ընտանիքի հարցը քննարկելուց հետո սովնարկոնը որոշում ընդունեց գործուղել ինձ Եկատերինբուրգ և մեկ շաբաթ անց նորից անդրադառնալ նույն հարցին:

\*\*\*

Ժամանակը շատ կարճ էր: Մինչև Եկատերինբուրգ և ետ դեպի Մոսկվա արդեն մեկ շաբաթվա չափ ժամանակ կծախսվեր: Ինձ հետ Եկատերինբուրգ էին մեկնում նաև երկու կարմիրբանակայիններ՝ Իվանովը և Շվարցը: Ես վստահ չէի, թե նրանք տեղեկացված էին մեր գործուղման մանրամասներին: Սակայն գիտեին, որ պետք է հանդիպենք ցարին: Ճանապարհը երկար էր: Առաջին օրը մենք հիմնականում լուռ էինք: Ես մտովի փորձում էի պատկերացնել, թե ինչպես պետք է սկսեմ իմ խոսքը: Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ իրավիճակը: Ի՞նչ երաշխիքներ պետք է տամ: Սակայն ամենից շատ մտահոգված էի, թե ինչպես ինձ կընդունի Նիկոլայ Ալեքսանդրովիչը:

Գնացքը դանդաղ էր գնում: Ես սկսում էի հուսահատվել: Իվանովը և Շվարցը արդեն երկրորդ օրն էր, ինչ լուռ նստած էին իմ դիմաց: Նրանք անդադար ծխում էին: Գնացքը կանգնեց: Շվարցը դուրս եկավ տեսնելու, թե ինչ է պատահել: Ես տխուր նայեցի Իվանովին և հարցրեցի.

– Վիտալի, ի՞նչ ես կարծում, ցարը կհամաձայնի՞ պաշտպանել կոմունիստներին:

– Ի՞նչ:

– Մենք պետք է համոզենք Նիկոլային դառնալ բոլշևիկ, – ծիծաղեցի ես:

– Դա անհնար է: Ցարը՝ բոլշևիկ:

– Իսկ դու ի՞նչ էիր կարծում: Մենք ինչու՞ ենք գնում Եկատերինբուրգ:

– Ընկ. Տրոցկին մեզ պատվիրել է ուղեկցել ձեզ և կատարել ձեր հրամանները, ընդամենը՝ այդքանը:

– Վիտալի, դու հավատացյալ ես...

– Ոչ, – դեռ հարցս չավարտած պատասխանեց Իվանովը:

– Այդքան արագ մի պատասխանիր: Մենք ուղղակի գրուցում ենք, – ես նկատեցի, որ Վիտալին ինձ չի հասկանում, – ես չեմ ստուգում քո հավատարմությունը Յեղափոխության գործին: Ես վստահում եմ քեզ:

Շվարցը վերադարձավ: Լուռ նստեց Վիտալիի կողքին: Ես շարունակեցի.

– Բոլոր մարդիկ էլ հավատացյալ են, մենք՝ նույնպես: Մենք հավատում ենք, որ կարելի է ավելի լավ ապրել: Որ խաղաղությունը գերադասելի է, քան՝

պատերազմը: Որ հնարավոր է վերացնել շահագործումը, աղքատությունը: Մենք դրան հավատում ենք, – ես սիգարետ խնդրեցի Շվարցից և դիմելով նրան հարցրի, – որտեղի՞ց ես դու:

– Նիժնիից:

– Ի՞նչ ես կարծում, «Արյունոտ Նիկոլայը» իրականում ինչպիսի՞ մարդ է: Նա իսկապե՞ս դաժան է:

– Բա ինչ, այդպես է, – զարմացավ Շվարցը:

– Գիտե՞ք, ամեն ինչ այդքան պարզ չէ: Նիկոլայը մեծ մասի համար ոչ թե մարդ է, այլ՝ խորհրդանիշ: Վախենամ, որ ինքն էլ է իրեն ընկալում իբրև խորհրդանիշ: Բայց այս պահին նա ինձ հետաքրքրում է ավելի շուտ իբրև մարդ, քան խորհրդանիշ, չնայած մեզ նա պետք է, այնուամենայնիվ, իր այդ հիմնական իպոստատուս: Մի խոսքով, ես շփոթված եմ: Մեզ անհրաժեշտ է, որ Նիկոլայը խորհրդանիշից վերածվի մարդու:

– Դուք իսկապե՞ս համոզված եք, որ ցարը համամիտ է բոլշևիկյան հայացքներին, – հարցրեց Վիտալին:

Շվարցը զարմացած նայեց նրան ու ծիծաղեց.

– Դա աներևակայելի է:

– Իսկ եթե այդպես լինի, կզարմանա՞ս, – հարցրեցի նրան:

– Չեմ հավատում: Դա անհնար է:

– Իսկ ես ուզում եմ հավատալ, որ դա այդպես է: Որ դասակարգային հասարակությունն է մեղավոր դաժանության և բռնության մեջ, այլ ոչ թե՝ մարդը: Ես այդպես եմ մտածում: Ես համոզված եմ:

Ջրուցակիցներս լռեցին: Գնացքը քիչ-քիչ մեծացնում էր արագությունը: Ես ավելի լավատես էի դառնում:

– Ես էլ եմ դրան հավատում, – զգուշորեն և կիսաձայն, կարծես ինքն իրեն, ասաց Վիտալին:

– Քանի՞ տարեկան ես:

– Տասնյոթ:

– Տասնյոթ, – զարմանքով նկատեցի ես: Իվանովը կյանքի մեծ փորձ ունեցող մարդու արտաքին ուներ, – ինչպե՞ս ես դարձել կարմիրբանակային:

Վիտալին սկսեց պատմել իր կյանքի պատմությունը: Նա ծնվել էր Պերմում, բանվորի ընտանիքում: Չայրը դժգոհ և կոպիտ մարդ էր, որը երբ հարբում էր, դառնում էր անկառավարելի: Իսկ նա խնում էր բավական հաճախ: Մի այդպիսի օր, երբ Վիտալին տասներեք տարեկան էլ դեռ չկար, հայրը ընկերների հետ գնում է ձկնորսության, խնում, կռվի բռնվում և սպանում նրանցից մեկին, որի համար արքայազան է Սիբիր: Ընտանիքը հայտնվում է ծանր վիճակում: Վիտալին ստիպված է լինում գնալ գործարան: Այնտեղ

18 ընդունվում է խմբակ: Երբ սկսվում է պատերազմը, կամավոր մեկնում է ռազմի դաշտ:

– Ինչու՞ են մարդիկ այդքան չարացած միմյանց նկատմամբ, – հանկարծ հարցրեց Վիտալին:

Ես չիմացա ինչ պատասխանել: Նա շարունակեց.

– Իմ հայրը վատ մարդ չէր, բայց նրան բոլորը հանցագործ են համարում: Նա չի հասկացել, թե ինչ է անում: Ես չգիտեմ: Չգիտեմ:

– Դու վախենում էիր նրանից:

– Այո: Չէ, չեմ կարծում:

– Պատմիր պատերազմից:

Վիտալին սկսեց պատմել: Տրամադրությունը փոխվեց: Հետո խոսակցությանը միացավ Շվարցը, որը տարիքով ավելի մեծ էր, համարյա երեսուն տարեկան:

Նրանց պատմությունները աննկատ դարձրին մեր երկար ճամփորդությունը: Մենք խոսում էինք ամեն ինչից: Աստօծ լինել-չլինելուց մինչև քաղաքական և կենցաղային մանրուքներ:

\*\*\*

Գնացքը Եկատերինբուրգ ժամանեց գիշերվա տասին: Մեզ դիմավորեց ոմն Բելաբորոդով՝ Ուրալսկի խորհրդի նախագահը: Ու անմիջապես հայտարարեց, որ սպիտակները քաղաքի մոտակայքում են: Հետո՝ որ ինքը մեզ պետք է ուղեկցի Իպատևսկու տուն: Անկեղծ ասած, առաջին հայացքից նա ինձ կասկածելի թվաց, բայց ցանկություն չունեցա փաստաթղթեր պահանջել կամ խոսքի բռնվել նրա հետ: Կասկածելին այն էր, որ Բելաբորոդովը գնացքից մեր իջնելուն պես ուղիղ մոտեցավ ինձ: Տպավորությունն այնպիսին էր, կարծես մենք ծանոթներ էինք: Բայց դա այդպես չէր: Ես նրան չէի ճանաչում:

Բելաբորոդովը ձեռքով ցույց տվեց ավտոմեքենան, որը սպասում էր մեզ: Ես դիմելով Վիտալիին հարցրի.

– Դու ավտոմեքենա վարել գիտե՞ս:

– Ճիշտ այդպես, – վստահ պատասխանեց Վիտալին, առաջ քայլ անելով, կարծես պատրաստվում էր նստել մեքենայի դեկին, որտեղ, ի դեպ, արդեն մի վարորդ կար: Բելաբորոդովը շփոթվեց, ասաց, որ մենք կարող ենք վերցնել ավտոմեքենան, բայց այս գիշերով ինչպես ենք գտնելու Իպատևսկու տունը: Ես հանգստացրի նրան. ասելով, որ մեզ ուրիշ մեքենաներ էլ երևի պետք չեն, որովհետև հարկավոր է, որքան հնարավոր է արագ էվակուացնել թագավորական ընտանիքը:

– Մենք նրանց պետք է տեղափոխենք Մոսկվա:

– Դա արդեն որոշված է, – հարցրեց Բելաբորոդովը:

– Այո:

– Ինչպես կասեք, – մեծ պատրաստականությամբ ասաց նա:

– Ե՞րբ պատրաստ կլինի գնացքը:

– Մի երկու ժամից կարող եք մեկնել:

Բելաբորոդովը մոտեցավ ինչ-որ կարմիրբանակայինների և հրահանգեց գնացքը պատրաստ վիճակում պահել ու սպասել մեզ:

\*\*\*

Իպատևսկու տան պատուհաններում լույսեր չէին երևում: Ներս մտանք: Բելաբորոդովը սկսեց ուժեղ ծեծել այն սենյակի դուռը, որտեղ Նիկոլայն էր իր կնոջ և որդու հետ: Նա բարձր գոռում էր՝ վեր կացեք, պատրաստվեք, ձեզ տեղափոխում ենք: Ես լուռ կանգնած էի դռան դիմաց, որի ետևում արդեն ծայներ էին լսվում: Իմ կողքին Իվանովն էր և Շվարցը: Բելաբորոդովը սկսեց միջանցքով քայլել՝ արթնացնելով թագավորական ընտանիքի մյուս անդամներին: Մի քանի րոպեից դուռը զզուշորեն բացեց Նիկոլայ II-ը: Նա շփոթված էր, սակայն փորձում էր իրեն տիրապետել՝ դեմքին արհամարհական անտարբերություն հաղորդելով:

– Մենք պետք է մեկնենք այս քաղաքից, – առանց ներկայանալու ասացի ես:

– Ո՞վ եք դուք, – հանգիստ հարցրեց նա:

– Շտապեք: Ժամանակ չկա: Ամեն ինչ հետո կբացատրեմ:

Ալեքսանդրա Ֆյոդորովնան ավելի անհանգիստ ու մոլորված էր թվում:

– Նիկի, ովքե՞ր են այդ մարդիկ, ի՞նչ է պատահել, – նա չէր էլ փորձում թաքցնել իր հուզմունքը: Արագ-արագ հագնում էր Ալեքսեյի շորերը: Հետո դիմելով ինձ ասաց.

– Հենց այսպե՞ս: Հենց հիմա՞ պետք է դուրս գանք:

Ես հանգստացրի, որ ժամանակ կա, բայց պետք է շտապել: Հետո խնդրեցի Շվարցին լուծել մեքենաների հարցը: Նա հեռացավ: Միջանցքում երևացին ընտանիքի մյուս անդամները: Ես ուզում էի ինչ-որ բան ասել, բայց իմաստ չէի տեսնում: Մտքովս անցավ, որ ցարը ինձ կարող է սպիտակզվարդիականի տեղ դնել: Ուզեցի ասել, որ այդպես չէ, բայց ոչինչ չասացի:

Մոտ մեկ ժամ հետո միայն գտնվեց երկրորդ ավտոմեքենան, այն էլ՝ բեռնատար: Նիկոլայը, Ալեքսանդրան և Ալեքսեյը նստեցին մեր մեքենան: Այս անգամ դեկի մոտ Վիտալին էր: Մյուսները տեղավորվեցին բեռնատարի մեջ: Իրարանցումը վերջապես դադարեց, և մենք շարժվեցինք:

Ալեքսեյը հարցրեց.

– Մեզ բոլորիս կցնդակահարե՞ն:

Ես շրջվեցի ու բռնելով վիրակապերով փաթաթված նրա ծունկը ասացի.

– Ոչ, բոլորովին ոչ: Մենք ամեն ինչ կանենք, որ ձեզ հետ ոչինչ չպատահի: Ես ու Վիտալին ամեն ինչ կանենք, որ ոչինչ չպատահի:

Ալեքսեյը ամուր գրկեց մորը: Տիրեց ծանր լռություն:

\*\*\*

Միայն հինգ ժամ հետո գնացքը շարժվեց: Բոլորը քնած էին՝ բացի ինձնից և Նիկոլայից: Պատուհանի մոտ նստած՝ նա անտարբեր նայում էր լուսնի լույսով լուսավորվող սև բնությանը: Երկար ժամանակ չէի կարողանում խոսակցություն սկսել: Չգիտեի ինչ ասել: Որոշ ժամանակ անց վերջապես հարցրի.

– Նիկոլայ Ալեքսանդրովիչ, ի՞նչ եք մտածում, – հարցս երևի անսպասելի էր, որովհետև բավական մեծ դադարից հետո նա, առանց ինձ նայելու, ընդամենը հարցրեց.

– Ի՞նչ:

– Նիկոլայ Ալեքսանդրովիչ, դուք կարող եք դադարեցնել արյունահեղությունը: Դուք կարող եք կանգնեցնել քաղաքացիական պատերազմը: Բոլոր պատերազմները: Եվ՝ ընդմիջտ:

– Ո՞վ եք դուք:

– Ես սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կուսակցության անդամ եմ:

– Հեղափոխական եք, – նրա ձայնի մեջ զգացվեց հիասթափություն և արհամարհանք: Հետո, շարունակելով նայել պատուհանից դուրս, հարցրեց, – ու՞ր եք մեզ տանում:

– Մոսկվա:

Նորից լռություն տիրեց: Ես նայեցի թագավորական ընտանիքի քնած անդամներին, հույս ունենալով, որ ինչ-որ մեկը ինձ կօգնի: Բոլորը հանգիստ օրորվում էին գնացքի համընթաց շարժումից, որը սլանում էր գիշերվա միջով:

– Դուք չեք կարող անտարբեր մնալ: Նիկոլայ Ալեքսանդրովիչ, դա ճիշտ չէ: Դուք պարտավոր եք կողմնորոշվել, ընտրություն կատարել:

– Ես ի՞նչ պետք է անեմ:

– Դուք պետք է ընտրություն կատարեք կյանքի և մահվան միջև: Ես կարծում եմ, դուք պետք է ընտրեք կյանքը՝ ձեզ համար, ձեր ընտանիքի համար, ձեր ժողովրդի համար, բոլորի համար:

Նիկոլայը շրջեց դեմքը: Նայեց ինձ, բայց ոչինչ չասաց:

– Ես ձեզ չեմ մեղադրում իմպերիալիստական պատերազմի համար: Ես գիտեմ, որ շատերը մեղադրում են, բայց ես այդպես չեմ մտածում: Ես ուրիշ բանի մասին եմ փորձում խոսել: Ես ուզում եմ ասել, որ ամեն ինչ չէ, որ վերջացել է: Դեռ կարելի է ինչ-որ բան անել:

– Ի՞նչ անել, – Նիկոլայը շարունակում էր նայել պատուհանից դուրս:

– Թեկուզ այն, ինչ փորձել են անել շատ-շատերը մեզանից առաջ: Ամենաուժեղ ու իմաստուն անհատները: Նիկոլայ Ալեքսանդրովիչ, ես համոզված եմ, դուք դա կարող եք անել:

– Ի՞նչ է ձեր անունը:

– Արման: Ընկեր Արման:

– Ընկեր Արման, ես ի՞նչ պետք է անեմ, – նա նայեց ինձ, հետո շրջվեց դեպի պատուհանը ու շարունակեց, – ես ձեզ չեմ հասկանում:

– Դուք պետք է պաշտպանեք Սոցիալիստական Հեղափոխությունը, պետք է պաշտպանեք աշխատավոր ժողովրդին: Պետք է հանդես գաք հայտարարությամբ: Կոչով՝ ուղղված Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, ամբողջ մարդկությանը:

– Դուք ուզում եք, որ ես պաշտպանեմ հանցագործներին:

– Ոչ, հանցագործներին պաշտպանել պետք չէ: Ոչ, դուք պետք է պաշտպանեք սոցիալիզմը:

– Ի՞նչ սոցիալիզմ:

– Նիկոլայ Ալեքսանդրովիչ, դուք ձեզ համար չեք ապրում: Դուք երբեք ձեզ համար չեք ապրել:

– Եվ ի՞նչ:

– Բայց դուք չեք ապրել նաև մարդկանց, կենդանի մարդկանց համար: Դուք ծանոթ եք Կարլ Մարքսի տեսությանը:

– Ոչ, – որոշ լռությունից հետո ավելացրեց, – ես կարդում եմ Աստվածաշունչ:

– Ահա, Մարքսն էլ էր երևի շատ կարդում Աստվածաշունչ:

– Եվ ի՞նչ:

– Ես ուզում եմ ասել, որ դուք կարող եք Ավետարանի կողմից հանդես գալ, բայց պաշտպանել շահագործվածներին, աղքատ, պատերազմից հոգնած աշխատավոր ժողովրդին: Պարտադիր չէ, որ օգտագործեք «պրոլետարիատ» բառը:

Մենք նորից լռեցինք: Նա ասաց, որ հոգնած է և ցանկանում է քնել:

(հատված վեպից)

\*\*\*\*\*

Արմիկ, Արմիկ,  
 Դու տղայի ունես մարմին,  
 Բարակ մարմին,  
 Կրակ մարմին, –  
 Որպես եղեգ գարնանային...  
 Ախ, կուզեի մոտս գայիր, –  
 Բարակ մարմինդ տայիր,  
 Քեզ զգվեի, դողայի,  
 Գիրկս առած քեզ դող տայի  
 Որպես քնքուշ մի տղայի...  
 Արմիկ, Արմիկ,  
 Դու շրթունքներ ունես կարմիր, –  
 Հաստ շրթունքներ կրքաբորբոք,  
 Ամռան արև, կրակ ու շոգ...  
 Քո շուրթերի հուրը կարմիր...

\*\*\*

Արմիկ, ուզում եմ, որ գաս  
 Շորերըդ հանես -  
 Եւ մերկ նըստես վըրաս -  
 Համարձակ անես,  
 Ինչքան չքնաղ կլինես  
 Երևի դու մերկ.-  
 Փոքրիկ մանկան նման,  
 Հասուն-ինչպես բերք:  
 Արմիկ, ուզում եմ քեզ հետ  
 Մեն-մենակ լինեմ,  
 Հետո քեզ շինեմ...  
 Գրկեմ մարմինդ տկլոր,  
 Որ տեգիս  
 Հպվեմ կոնքերդ կլոր...

\*\*\*

Արմիկ, լինես կարծես դու  
 Մի չքնաղ տղա-  
 Ախ մերկացիր հլու,  
 Եղեգիս հետ խաղա...  
 Եւ այնքան եմ քեզ ուզում,  
 Այնքան, այնքան...  
 Թող ինձ կիզե քո լեզուն,  
 Անի արնաքամ...  
 Մերկ տեգս ձգիր,  
 Ես կրքից հարբած,  
 Քսեմ ոռիդ, պցիդ  
 Կլիրս-թաց...  
 Ես էլ ուզում եմ քեզ պես  
 Տկլոր լինեմ,  
 Գրկեմ մարմինդ հրկեզ  
 Ոռիցո քունեմ...

12. 07. 1936 Ծաղկածոր

\*\*\*\*\*

Մերկ՝ պառկեցիր ոսկեգոծ\*  
 Վագրի մորթու վրա...  
 Արեգակի պես կիզող,  
 Կարմիր կրակ!..  
 Մոտենայի ես ծածուկ,  
 Գզվեի վերից -  
 Եւ տրվեիր կամացուկ  
 Շշնջալով «մեռի՛ր»...

\*\*\*\*\*

Մանկական կոնքերիդ վրա  
 Արևը հինա է դրել, –  
 Դու շոգ ես, կեսօր հուրհրան,  
 Մանկիկ իմ հրե...  
 Արև ես, հինա ես, արևելք ես, –  
 Երգերիս ջրցայտքի ներքո  
 Նվիրիր ինձ մարմնիդ արևելքը  
 Որ անեմ քեզ կրքով ու երգով!..

\*\*\*\*\*

Էլի իմ դեմ է պատկերդ,  
 Էլի ուզում եմ ես քեզ,  
 Էլի թեքվում եմ մտքերս  
 Դեպի մարմինդ հրկեզ:  
 Էլի սուզում եմ իմ մտքում  
 Նիզակս հուր քո մեջ, –  
 Նվաղում ես դու կիսաքուն  
 Գզվանքներով քո շեջ...

\*\*\*\*\*

Ափերիս մեջ ծծերիդ  
Նռները հասուն  
Թույլ տուր համբուրեմ կոնքերիդ  
Հաշիշը սուրբ...  
Ափերիս մեջ ծծերիդ  
Նռները շոգ  
Սեղմի՛ր ինձ տոթ կոնքերիդ  
Կողովը բորբ...  
Թույլ տուր սուզվեմ կոնքերիդ  
Ակունքը տոթ -  
Ափերիս մեջ ծծերիդ  
Նռները շոգ!..

\*\*\*\*\*

Ես կուզեի քեզ տեսնել  
Մաքուր ու մերկ, –  
Տոլքերի տակ լուսնի,  
Եվ որպես երգ  
Փարվել կլոր կոնքերիդ

Ծծել անհագուրդ  
Գզվանքները քո հրե,  
Մաքուր ու լուրթ:

\*\*\*\*\*

Ախ, կուզեի՝ կանգնեիր  
Զգված, ինչպես լար,  
Եվ զգվանքով կոնքերիդ  
Հավերի հար՝  
Քիչ նայելով դեպի ետ՝  
Հայացքդ՝ կիրք, –  
Եվ քեզ կիզեր, ինչպես նետ,  
Նիզակըս պիրկ!..

\*\*\*\*\*

Օ, թագուհի՝ կովբոյի  
Շորերով!  
Տուր շոթունքները քո ինձ,  
Տուր քո սափորը սիրո...  
Ծծի՛ր անհագ իմ մաքուր  
Նիզակը կեզ!..  
Եվ երաստանըդ ինձ տուր  
Որ թռցնեմ քեզ...

\*\*\*\*\*

Դու կովբոյի շորերով  
Աղջիկ ես չար.  
Ես ցանկանում եմ գերող  
Կոնքերդ հար...  
Նստիր, անհագ ծնկներիս  
Կոնքերդ դիր  
Ու մերձեցիր իմ հրին  
Ընտիր!

\*\*\*\*\*

Տուր ինձ ծծերը քո,  
Տուր կոնքերը քո վառ,  
Թող արբենամ քո կրթով  
Անմար:  
Ախ, Հաֆրզի նման քեզ  
Կուզեի շինել  
Քո կոնքերի հրակեզ  
Արահետից նեղ!

\*\*\*\*\*

Որպես արքա Իրանի  
Ավազանում իմ մաքուր  
Քանի՛ անգամ քեզ, քանի՛  
Կառնեի, քույր!  
Կլիզեի կոնքերիդ  
Սափորը թեժ -  
Կվառվեի քո հրով  
Անվե՛րջ, անվե՛րջ...

**Վահե Ավետյան**

«Ընթերցողների գործեր» ինտերնետային էջից  
[http://http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=138](http://http://www.bnagir.am/?go=readers&r_work=138)

**Բրայթոն Բիչ**

Բրայթոն Բիչում եմ հիմա, մի հրեայի բնակավայրում, որ նաև հայ էր և այդ պատճառով՝ կրկնակի ցնորված: Հարբեցող գրող էր: Այստեղ հնարավոր չէ չգրել, և հայ հրեան ինձ ավելի հասկանալի է դառնում:

Զգիտեմ ինչու և ինչպես եմ հայտնվել այստեղ: Ուզում եմ խոսել ձեզ հետ, բայց ոչ մեկը չկաք, մենակ եմ: Գրում եմ, որովհետև չեմ կարողանում ձեզ հետ չխոսել, անընդհատ գլխումս խոսում եմ, 12 տարի, բուրդիստ եղբայրներիս կարծիքով՝ աստրոլոգիական մի ցիկլ: Գրելը դարձել է հիմա խոսելու միակ ձևը: Զգիտեմ ինչ գրեմ, բայց չեմ կարողանում չգրել: Զգիտեմ, որովհետև հենց նստեցի, որ գրեմ այն ամենը, ինչ գիտեի երեկ, վերջապես լուսավորվելուց հետո, 12 տարվա տքնանքից ու տառապանքից հետո, վերջապես իմանալուց հետո, թե ինչպես ազգս փրկեմ ցավերից, ինչպես հարստացնեմ բոլորին անխտիր, հաց տամ, խաղաղություն տամ... Հարևանի բնակարանի ընդամենը 3 մետր հեռու ննջարանի պատուհանից ներս է խուժում վավաշտությունից խելագարված քածի ոռնոցը: Քունվում է կատաղաբար, ա՛խ, ինչ անուշ է քունվում... Ու ինչպե՛ս է ոռնում, մոկտում, շնչակտուր լինում ու ուզում է ավելի շատ քունվել: Ամեն ինչ մտքիցս թռավ, որովհետև այդ քածին քունել ուզելուց բացի ուրիշ ոչինչ չեմ կարողանում անել հիմա:

Քունվելու կատաղի ցանկությունը անվերադարձ մոռացության մատնեց 12 տարվա տառապանքն ու ձեռք բերած գիտելիքները, որոնք մի ազգ էին փրկելու:

Ասում եմ՝ խելագար մի գլխավոր մենթի, մի իմպերիայում գնդակահարության տանող նախկին ենթակա մանր-մունր մենթերը քիչ է մնացել թափվե՞ն գետնին, մեղադրյալի՝ կատաղորեն ժաժ տված սերմով ամբողջովին պատված հատակի վրա սահելու պատճառով:

Այս պատմությունը լսող, ամբողջ երեկոյի ընթացքում, ինչ-որ սահմանի վրա, խրամատում, իր լռության մեջ ծափված մի մենթ ասաց.

Սաղ երկրի գլխին ժաժ ա տվել - հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Ես նույնպես ուզում եմ հիմա կատաղորեն ժաժ տալ, բայց, երևի, երկրի գլխավոր մենթ դառնալու վտանգից սարսափելով, ալարում եմ...

Ժաժ եմ տալիս մտքումս, այդպես ավելի

հարմարավետ է, բայց հորմոնները պահանջում են ուղեղիս ամբողջ ունակությունը: Delete-Enter- ազգի փրկության բոլոր գաղափարները անհետ ջնջվում են՝ հորմոններից և մոլագար, պագշոտ երազներից տեղ զիջելու:

Ժաժ եմ տալիս:

Այստեղ մի ուրիշ գրող, հանցագործ, ռուս նեոբոլշևիկ նեգրի կլիր է ծծել ու գրել է դրա մասին: Այդ գրողը մի ընկեր ունի, Պետերբուրգում է ապրում: Մի ուրիշ կրկնակի ցնորված հրեա-հայ է: Նեոբոլշևիկների գաղափարախոսն է ու լրագրող: Այդ տղան ռուսների ազգային արժանապատվության ջատագովն ու հայրն է: Կարծում եմ՝ ազնվորեն ծառայում է իր գաղափարական մարմաջին ու տառապում է: Եթե Բրայթոն Բիչում նեգրի կլիր ծծի, կարող է երջանիկ լինել: Կարող է չլինել ինչ-որ ժամանակ հետո: Բայց անհանգստանալու կարիք չկա: Նեգրի կլրից հետո կարելի է դառնալ մարգարե, որևէ աֆրիկյան երկրում: Շատ լավ աղջիկներ կան այնտեղ: Ինչ-որ ժամանակ հետո սովորում ես մաշկի գույնին, հետո հիանում, հետո երազում սև լինել:

Թախլա՛նդ-Թախլա՛նդ, իմ սեր:

Համար առաջին ռուսը եթե հանկարծ հայտնվեր Բրայթոն Բիչում, կարող էր դառնալ գրողի գույգ եղբայրը: Ամեն ինչ համընկնում է: Լրագրող, ծեծված, ստղանդավոր:

Պետերբուրգ-Բրայթոն Բիչ: Հրեա-հայ:

Մի ցնորված կանադացի գրող անվանում է այս շատ հաճելի մարդկանց մեզալոմանիակ, փսիխոպատ, լուսնոտ: Եթե դա ճիշտ է, ինչ հրաշալի ֆիլմ են նայում ուրեմն երևի այդ տղերքը:

Ի դեպ, տղերքից մեկը արդեն թռել է: Հիմա ֆետիշ է դարձել, աստված է, գրքերը տպում են, բավականին մեծ դրամական շրջանառություն է առաջացել անվան շուրջ: Ինչ ֆիլմեր է նայում նա հիմա՝ գուշակել անգամ հրաժարվում եմ: Խեղճ Վան Գոգ - եթե Վան Գոգը խեղճ է - I am definitely happy.

Այս քաղաքը պարտադրում է գրել, անգամ եթե մոռացել ես ամեն ինչ ու գրելու նյութը պետք է բատրես: «Բատրես» բառը դուրս չի գալիս: Հայերենն աղքատ է, բյուրեղացված է, ինքնամաքրման մոլուցքի ընթացքում խելագարվել ու մերժում է աշխարհը: Իզոլացված է: Սա երևի ցեղասպանության հետևանք է: Չեմ կարող պնդել, բայց որ պարսպ մնամ մի օր, կմտածեմ:

Կարծում եմ, որ կարող եմ ստել, որովհետև չի բացառվում, որ հաջորդ քունվորվելուց կջնջեմ այդ հիշողությունն էլ, որ գլուխս դատարկեմ ամբողջովին մի հերթական այցով լցնելու համար:

Ռուսերեն «մատից ծծել» արտահայտությունը հիասքանչ է, շատ սեռական, հաճելի, և

ամենապատկերավոր և մեղա, մեղա Տեր:

Կիևի ընկերներս իրար հետ խոսելիս անընդհատ հայտնաբերում էին, որ ես բացակայող հայացքով էի նստած, որովհետև խոսում էին Կաստենկոյի, Կուչմայի ու էլի չգիտեմ ում մասին: Ձարմանում էին, որ իրենց գեղի լավ տղերքին չեն ճանաչում:

Իմ կլրին չեն անգամ իմ գեղի լավ տղերքը - ոչ նախկինները, ոչ էլ ներկա ու ապագաները՝ իրենց գերեզմանների շուրջ հավաքվող, ցավակցող սիրելիների հետ միասին:

Շատ հուզիչ է, իմ գեղի նման գեղ է Կիևը, շատ սիրելի, տաք, ազնիվ: Ինչպիսի ցնորվելու կամայք: Ես չեմ հասկանում այդ գեղի նկատմամբ իմ ընկերների սիրո պատճառը, բայց ես նրանց սերը սիրում եմ: Նյու Յորքում չեմ ապրի հավանաբար, որ չդարձնեմ գեղ: Սիրում եմ երբեմն քաղաքներում ապրել: Այստեղ ինձ հանգիստ են թողնում: Գրում եմ, ժաժ տալիս: No one bothers.

Իմ Բրայթոն Բիչում կա մի հազար հատ ուրիշ քաղաք-գեղ՝ Կիև, Գրոնիգեն, Սթոքհոլմ, Մայամի, Վիեննա, Երևան, Թբիլիսի, Բաքու, Ուոուլիա, Արցախ, Պրագա, Փարիզ, Փալմ Բիչ, Բերոյանսկ, Շեպետովկա, որի ավերիկն զարմվել են ինչ-որ ժամանակ ներկայումս ցամքած Ատլանտյան օվկիանոսի ալիքները:

Մի ուրիշ հրեա, հավանաբար, հայ ու էլի ինչ ասես, մի մարսեցի օտարմուլորակային է ինձ պատմել այդ մասին: Անունը Ասկյար էր:

Ատլանտյան օվկիանոսն ափսոս էր: Ցամքել է վաղուց: Սթոքհոլմ-Նյու Յորք ճամփորդությունը վերելակի մի դռնից մտնել - մյուսից դուրս գալ է դարձել: Պարզապես մի քիչ երկար ժամանակ ես այնտեղ: Կարող ես ուտել, միզել հարմարավետ, նույնիսկ քաքել, անգամ ձվերդ լվանալ, 8 ժամ նայել Ատլանտյան օվկիանոսի կամ ամպերի մասին ֆիլմ պատուհան կոչվող ինչ-որ հեռուստացույցից, շնթռկել, կոշիկներդ հանել, բոբիկ ման գալ, նայել ստյուարտների փառահեղ բղերին:

Վատ չէ:

Ատլանտյան օվկիանոս չկա: Բրայթոն Բիչ կա, Մայամի Բիչ կա, Փալմ Բիչ կա: Ոչ մեկի մի ասեք, խնդրում եմ, Սևանի տեղը... u-u-u-u-u-u-u...

Կեցցե հեռուստատեսությունը!!!... թուհ...

Հեռուստացույցով հիմա Հռոմի պապին են ցույց տալիս: Մի քանի տարի է չէի տեսել: Որքան է ծերացել այս խեղճ պապիկը: Վերջին անգամ, որ տեսա, դահուկ էր քշում Լեհաստանի սարերում:

Չէ, հանկարծ հիշեցի - վերջին անգամ տեսել եմ Ֆիդելի մոտ: Նա պապիկին մի բանկա կոկաին տվեց, որ մի 20 տարի էլ քաշի: Թե չէ՝ պիզզեցը եկել էր արդեն:

Պիզզեցն էլ եմ սիրում:

Երեք օր առաջ հաղիպեցի ալամ աշխարհի պառլամենտ իրեն հավակնող մի կազմակերպության տնօրենի: Նեգր է շատ խելացի աչքերով: Կինը շվեդուհի է: Գեղեցիկ մարդիկ են: Ինձ հարցրեց - how I do, I told him that i am doing fine, I asked how he do - he answered that he is doing fine - and we went apart.

Իրականում ուզում էի ասել՝ ոռի եմ, այ չաթլախ, մի բան արա, բայց սկզբում չհամարձակվեցի, հետո էլ ինձ համոզեցի, որ ես պիտի իմ պրոբլեմները լուծեմ ու հարմարվեցի:

Համաձայն չեմ իրականում: Այդպես ստացվում է պարզապես, որ ես եմ լուծում իմ պրոբլեմները: Ավելի լավ կլիներ, իհարկե, որ ուրիշները լուծեին:

Սկսեցի կասկածել, որ այն փայլուն միտքը, որ եկել էր գլուխս, այն, որ մոռացել էի հարևան քաժի գոռում-գոջումների պատճառով հենց սա էր:

Ես պրոբլեմներ ունեմ, շատ, հիվանդ եմ, խելագար եմ 3 դիագնոզով: Բժիշկներն ինձ խաբում, ասում են, որ առողջ եմ, որ պրոբլեմներս չկարողանան փաթաթել ձեր վզին: Եթե ուզում եք ազգը հարստանա, սիրելիներ ու զանդոններ, երջանիկ լինի, փաթաթեք իմ պրոբլեմները ձեր վզին:

Սա է:

Ես Հայաստանի հանրապետության քաղաքացի եմ...

**Արտագաղթ**

Ինձ երեխա ժամանակ վռնդեցին մի անգամ քյոփակները խաշի սեղանին մածնափռթոշ ուտելու պատճառով ու ասացին, որ իրենց ախորժակի վրա բացասական է ազդում իմ ընտրությունը:

Ես այն ժամանակ հասկացա արտագաղթի ֆենոմենը...

**Հայ**

Երբ խոսում եմ հայի հավաքական կերպարի մասին, հիշում եմ Երան տատիս, երբ ինքն իր հետ նարդի էր խաղում ու յուրաքանչյուր գառը զցելուց ինքն իրեն ֆռռացնում էր...

11.10.2003  
Սթոքհոլմ

**Դամբարան**

Սիրելիներս, ձեր աշուկներին մեռնեմ, ձեր արևներին մեռնեմ: Ձեր արևները ինձ պարտադրում են շարունակել ապրել այս անշուք կյանքը, այս ստորությունը, որ շուրջս ամենը կյանք են կոչում... Ես մի փալաս եմ, որին շուրջս եղած մարդիկ չեն ճանաչում

24

որպես մեկը, որը ի վիճակի է հայրենիք ունենալ, իրավունք վայելել... իսկ ես ինձ էլի համառությամբ կորյուն եմ զգում:

Ձեր աշուկները, ձեր աշուկները, քաղցրներս... դեռ ի՞նչ արևներ եք շարտելու տիեզերքներ... մեռնեն ձեր աչքերին...

\*\*\*

Այսօր ռամկավարների հետ էի հանդիպում New Jersey-ում, կարծես, իմաստուն մի պապիկի տանը: Պապիկը ուշադիր լսում էր, և ես հույսի նշույլներ հայտնաբերեցի մեջս...

Քնեց, հոգնած էր: Ծեր էր: Խեղճ պապիկ: Լրագրող էր, 300 տարեկան էր: Ոչ ոք չի հրապարակում թերթը իր փոխարեն, այդ պատճառով չի մահանում: Սպասում է: Հույս ունի:

Ուզում եմ այս պապիկին օգնել, որ մահանա: Պապիկին երեխաները մոռացել են ասել, որ իրենք 500 տարի է ինտերնետում եմ ու չեն կարդում պապիկի թերթը, որն իրենց դեռ Վարդան Մամիկոնյանի ժամանակվանից զգվացրել էր իր սարսափներով և վայնասունով, որ անհետ մոռացվել էր... Այնքան սերունդներ են անցել չկարդալու ժամանակաշրջանում, որ մոռացել են պապիկի գոյության մասին: Եթե իմանան, կվազեն, կգրկեն, ներողություն կխնդրեն մոռանալու համար, կասեն, որ իրենք շատ լավ ապրում են, թող պապիկը չանհանգստանա ու հանգիստ խղճով մեռնի: Ես այդ պապիկին կհիշեմ, հավանաբար, ինչպես բարեպաշտ մարդ:

Այդ պապիկի տանը հանդիպեցի ուրիշ պապիկների: Ռամկավարներ են իրենց կոչում: Խելագարվել են ու նորբլյան մրցանակ են ուզում շահել, որովհետև ինչ-որ 100.000 դոլար են տալիս, իսկ ես ուզում եմ ձագերիս համար նոր տարվա խաղալիքներ առնել...

Հիմա մի տեսակ տարակուսանքի մեջ եմ՝ կամ պետք է բյուրեղյա մայրենիով արտահայտվեմ, որ տգետ չաթխանները նկատողություն չանեն, կամ՝ սրտից գրեն... Սրտից գրողները ավելի են դուրս գալիս: Որքան ցավալի է, հակառակ բանակի զինվորներին սիրելով, տնտեսական ավելի բարենպաստ վիճակում լինելու հնարավորությունը կորցնելը...

Սրտով ասելու համար բյուրեղացած մայրենին աղքատ է...

Ձեր լավը քունեմ...

Տեսնե՞ս 100 000 դոլար կստանամ:

Մի կլտի գյոթ, ազգի հայր ինձ համոզում էր, որ ես չգիտեմ, թե ինչպես եմ ապրել ինչ-որ ժամանակ, ինքը գիտի: 10 000 կմ հեռավորությունից, օվկիանոսից այն կողմ ապրելով, գիտի իմ կյանքի մասին, ես՝ չգիտեմ: Այդ ջղայն պապիկը ասում էր, որ հայ ժողովուրդը անկախ

լինելու իրավունք չունի, որովհետև թուրքերը ոռները փետ կկոխեն, չէր ասում հայերիս ոռը, ասում էր ինչ-որ հայերի, օվկիանոսից այն կողմ, իրենից հեռու ու վերացական:

Թուրքական գյոթացումից մեզ փրկել դնելով անունը՝ ռուսների հետ պայմանավորվում է՝ հայերի ոռները ռուսական փայտ կոխելու մասին:

Ես կարող էի կարծել, թե ես՝ էջս, չեմ հասկանում երևի, իսկ այս պապիկը մարգարե կամ գոնե ծմեռ պապի է: Ես քո լավը քունեմ:

Այս բոզի վաստակը դրամ է ստանում, օրինակ, մի ուրիշ տավարից, որը դպրոց չի գնացել, բայց կարի մեքենա է վաճառում Ռուսաստանում, և դրա համար հայերը պետք է ոռաքուն լինեն...

Երեսուներեք դոլար գյոթին տալով՝ ընտրվում է քաղաքական կուսակցության ղեկավարության մեջ ու ժաժ է տալիս, պատիվ է սիրում, երևի, որովհետև իր կլիրը չի տեսել մի 150 տարի... ինչպե՞ս տեսնի... Փորը միայն 600 կգ է, համարյա կաթողիկոս-մաթողիկոս ու էլի ինչ գանդոնի ասես փորերի չափ:

Ես քո լավը քունեմ... ռամկավար...

Ղաշնակ-մաշնակ ու մնացյալ նույնպես ի դեպ...

Սա իմ ժամանակի գրականությունն է, սիրելիներս... Հուսով եմ, որ դուք ավելի ռոմանտիկ ժամանակում կապրեք ու կգրեք...

Այս տիկնիկներին կարելի է բերել Սևանի ափ... մեղք են ախր, հոգնել են:

Սևանի ափին մի երկու սենյականոց տնակներում մեջքները կտային արևին, թզրեհ կզցեին, ամեն մեկը մի 5-6 ձագուկ կպահեր ամառները ու հեքիաթներ կպատմեր Նյու Յորքից, Փարիզից ու մնացած բոստաններից...

Երեխաներն էլ աշխարհագրություն կսովորեին ու դիվանագիտություն՝ բիծուկներից մեկ-երկու դոլար քաշելով, իրենց անվիճելի գերազանցության բռնկումները երբեմն ցուցադրելով...

Հրաշք չէ՞, ծերուկներ: Ոռներդ տեղներիցդ շարժեք, էլի...

Մի դամբարան տեսա: Մի մարմարե ծերուկ էր այնտեղ մահացել նստած տեղը - մի եգիպտական քրմուհի, շատ գեղեցիկ անշուշտ այն ժամանակ, երբ Հովհաննես Թումանյանը 16 տարեկան էր...

Հիմա էլ է այդպես սիրում, որովհետև լավ են օժել, մումիա է...

Մարդիկ գալիս գնում են, խոսում են, պատմում, հարցեր են տալիս ու անմիջապես իրենք էլ պատասխանում են իրենց հարցերին, ծերուկի լռությունը հավանության տեղ ընդունելով, հեռանում են՝ իրենց ժաժ տվածը հայության գլխին թափ տալու: Ոչ ոք

չգիտի, որ ծերուկը 150 տարի է մեռած է:

Սևան, իմ հավերժ սեր, այս ծագերիդ տար, մեռնեն ջրիկիդ... քո մոտ մի քիչ կփնթփնթան, դու համբերատար ես, կլսես, կբուժես նրանց, ինչպես իմ բոլոր խելագարություններն են բուժել...

Ախր, դու կարող ես ամենի ականջին էլ շշմջալ ու կանչել... ինչպես ինձ ես կանչում ամեն տարի, երբ խոսելու բան ունես:

Իրենց էլ կանչիր, էլի...

**Թե չէ՝ փետը կառնեի ու...**

Արա, ինչ կարդում եմ, կրիշս փախցնում է, ընկնում եմ ընտանիքիս, երեխաներիս, շրջապատիս, խեղճ ու կրակ շվեդների ջանին:

Հայաստանում կատաղում եմ, այստեղ թափում: Լավ է, չմնացի, թե չէ մենակ իմ կատաղությունն էր պակաս Երևանում: Լավ էլ թափում եմ առանց ինձ:

Պրեզիդենտ բլա, բլա, բլա...

- Ի՞նչ եք զգում, հենց մի բան եք կարդում դրա մասին:

- Ես ուզում եմ մի փետ առնեմ ու՝ տուր թե կտաս: Նախնադարյան վայրենու կատաղությամբ: Չեմ ուզում խոսել, քննարկել ինչ-որ բան, միայն կռիվ եմ ուզում:

- Ինչու՞ տեսնես: Կարո՞ղ ա կրիշս տարել ա:

- Կարող ա:

- Կարո՞ղ ա պրեզիդենտն ա ոռի, հանցագործ, մարդասպան:

- Կարող ա:

- Կարո՞ղ ա համ պրեզիդենտն ա ոռի, համ իմ կրիշը՝ տարած:

- Կարող ա:

Մնացած մանր մունր գեղացիների մասին չեմ էլ ասում...

Ի՞նչ անեմ, չեմ իմանում: Արա, ուզում եմ Երևանում ապրեմ, գործի գնամ, երեխա մեծացնեմ:

- Ո՞վ ա խանգարում, արա: Եկեք էլի պատերազմ անենք: Պրեզիդենտն ա խանգարում: Ինչու՞ պատերազմ չենք անում, արա:

- Խելացի ենք, խոհեմ, հասկանում ենք պահի անպատեհությունը, պատասխանատվության զգացողություններս բարձր է:

Թե՞ քաքլան ենք:

Ես քաքլան եմ, դուք՝ չգիտեմ ո՞նց:

Թե չէ՝ փետը կառնեի ու...

Սթոքհոլմ  
22.11.2003

**Gde ti Ljova?**

Հայերեն, սերբերեն, ռուսերեն - մի խոսքով երևաններեն մի բազար է սա, որն իհարկե կարող է շարտվել էջից՝ հայաստառ չլինելու համար: Նախօրոք ներողություն եմ խնդրում բոլոր բարկացած հայրենակիցներիցս: Անչափ բարկացածներին - սիկտիր (թուրքերեն).

- Zdravo kume.

- Privet.

- Kakosi druje?

- Notmalno, ti?

- Dobro kume...

net u tebjia Ljova prejnego entuziazma, starij ti stal... znaesh kak v detstve...

vstretitl drugana, obradovalsja... i skakat' poshli chuvaki...

ja vsjo detsvo udivljalsja starikam...

- Kuda skakat?

- Obrazno Ljova, obrazno...

Ded moj naprimer... mog vstretit... kakogo to starogo pidra i poka doxodil burchal pro sebjia... tipa... qunem lavt, es inch klirs er, rast ekav... mamat qunem potom podxodili, nedovol'no zdorovalis', tzbex kidali rjadom sidja...

redkie voprosi... i poka...

v aktivnoj jizne odin bil kem to vajnim, i drugoj toje... i schitali vsju jizn drug druga pidrami - a tut vse dedi vzjali i v jashchik sigrali, ne skem pizdet'...

Ba batenka? Aj ta...? Chego molchish?

- Ja ne mogu sledit za tvoimi logicheskimi konstrukcijami.

-Ti dumaesh ploxie?

- Net, ja prosto ne ponjal o chjom ti...?

- Rasskazivaju... estetichno, cherez iskustvo, maximal'no artistichno... priglashaju tebjia na vstrechu vokrug trubki mira...

Ljova ti spish ili toje pomer - i ostavil menja dojit' na etoj chujoj planete v odinochestve?

Ljova ti gde?

Stockholm  
22.11.2003

**Հայկական ինտեգրացիա**

Առաջին անգամ ուրիշի հարսնացուի սիրահարվեցի այն օրը, երբ Հրանտի գերդաստանի հետ զնացի Կարբիսի «Լավը քունելու», որը իր «ախպար բոզի տղա» ազգուտակի ընդհանուր ժողովի որոշումով, ետ էր

տվել Նանայի՝ Հրանտի հորեղբոր աղջկա նշանը: Փալանջյանների գերդաստանը վերջապես ստացել էր անհիշելի ժամանակներից սպասված «ախպարստան սիկտիրվելու» հրավերը, որտեղ նոր նշանված հարսը նախատեսված չէր: Լուբա մորթուրը կասկած հայտնեց, որ վիզաները հապճեպ ստացել են, որպեսզի Կարբիսին փախցնեն տեղացի «փչացածից», բայց քանի որ «կնգա խոսքը ասնավանի չի», ամուսինը հայտնեց, որ մի հատ էլ ձայն հանի, «մերը կբունվի», և արժանացավ գերդաստանի լուռ, հիացական հայացքներին, հայի ավանդույթն ու պատիվը բարձր պահելու համար:

Հակոբյան ընտանիքի ցլիկները ասպատակման տակտիկան տատկկների, հարսների, հորեղբայր-մորաբույրների և տոհմային տուրուղմփոցների վետերան, բոլոր գյուղերից եկած ազգականների հետ կարճ քննարկելուց հետո, ելան Փալանջյանների «լավը բունելու»:

Գլխավոր ստրատեգը Օֆոն էր, որը շիրակցու «նամուսը» պահել էր՝ մի քանի տասնամյակ ցելկեն փայփայելով, և ազրեսիվ-անհանդուրժող վերաբերմունք ուներ ցանկացած անբարոյականության դեմ, որն իր գերդաստանի դեմ է ուղղված: Հրանտի ու Հակոբյան մյուս ցլերի յուրաքանչյուր ճղած ցելկի համար խիստ հպարտանում էին՝ լուրը տարածելով Երևանից մինչև Շիրակով մեկ սփռված գյուղերը: Դա երբևէ չէր դիտվում որպես անբարոյականություն, որովհետև ցելկեն կորցրած դժբախտը իհարկե «երևանցի բոզ» էր, եթե նույնիսկ Ուռուտից էր: Բոզությունը երևանցիների մեծաշնորհն է համարվել առհասարակ, ու չգիտեմ ինչու՝ նաև կիրովականցիներից, որոնց նամուսով շիրակցին նույնիսկ «թփալ շուն» հարս չէր տա:

Այ հենց այդ պահին էլ սիրահարվեցի նշանը հետ ստացած Նանային, որը շվարած, զույգ արևներից արցունք թափելով, ասում էր՝ ու՛ր եք գնում, չի ուզում ինձ, թող գնա: Ամբողջ գերդաստանը գոռաց, որ ձենը կտրի, որ ինքն է մեղավոր, որ իրեն ասում էին, որ էդ «ախպարի լակոտի» հետ գործ չունենա – սեր էր

խաղում: Հիմա արդեն ուշ է, և Հակոբյանների պատիվը թույլ չի տալիս, որ իրենց աղջկա նշանը ետ տան:

Ես հուսահատությունից միացա ցլերին...

Փալանջյաններն ապրում էին Հակոբյանների տներին դեմ-դիմաց իրենց կառուցած տներում: Այստեղ յուրաքանչյուր նոր ամուսնացած որդու համար կողքները մի-մի տուն էին սարքել, ու մի երեք տասնամյակում առաջացրել էին երկար մի փողոց, շիրակցիներով ու քեսաբցիներով իրար դեմ-դիմաց ապրելով, իրենցից անկախ սկսելով եվրոպացիներին այն ժամանակ դեռ անծանոթ մի տարօրինակ ինտեգրացիոն պրոցես: Քեսաբն ու՛ր, Շիրակն ու՛ր: Ոչինչ, կամաց-կամաց ստացվում էր, մեկ էլ հանկարծ՝ ախպարստան:

Ես քաքեցի տակս ու այդպես էլ ոչինչ չասեցի Նանային: Ու վատ չէ. հիմա նա իր նման երկու չքնաղ ունի իր Կարբիսից, իսկ ես՝ երեք որդի, ու հրաշալի է: Ծե՞ծն օգնեց, սե՞րը հաղթեց, չգիտեմ: Գիտեմ, որ Փալանջյանները մինչ օրս Երևանում են: Նրանց ձագերն այսօր ոչ մի քյոփակից չեն հարցնում այլևս՝ ում սիրեն, ում տան: Քիթը խցկողին էլ կիրեն-կագեն տեղը: Էդ «այլասերված» արևմուտքն է փչացնում լակոտներին՝ ասելով, քեսաբցիներով ու շիրակցիներով իրար ամուր կպած ու լրիվ ինտեգրացված ուզում են մնալ Ռուսաստանի բարոյական ոռում: Չգիտեմ՝ ինչն է լավ հարատևության պերսպեկտիվից նայելու դեպքում: Ինձ չեն թույլ տվել, որ տեսնեմ հարատևելով: Վրաս շյոչիկ է դրված, որն անջատվելու է վաղ թե ուշ, բայց առանձնապես չեն անհանգստանում: Աստծուն որ տեսնեմ՝ կհարցնեմ, իսկ եթե չտեսնեմ, էլ ինչ պերսպեկտիվ - ոնց էլ լինի, լավ է, էլի: Չգիտեմ՝ լավ է «զարգանալ» ու թռնել գյուղից, թե իրար ծեծելով, հայիոյելով գյուղում մնալ: Ցանկությունն ինդիվիդուալ ապրում է, յուրաքանչյուրն իր գործը գիտե: Ես կուզենայի ապրել այդ վայրագ ու խելառ մեծերի ու փոքրերի հետ, գյուղում, միայն համաձայնեին, որ էլ չենք ծեծում: էլ չեն ուզում ծեծել:

Աթոքիլմ  
2004.01.20

**Լուսինե Ստեփանյան**

**Փոքրիկ քաղաքի մեծ առնետները**

Փոքրիկ քաղաքում  
Երեկ, այսօր, գուցե վաղն էլ  
Արգելակներ չկան բնավ,  
Երեկ՝ պատեր, այսօր՝ պատեր,  
Գուցե վաղն էլ...  
Ու խարխուլված պատերի տակ՝ բռնազբոսիկ, գժական աղաղակներ,  
«Վի՛վա յուզիֆեր... վի՛վա լիբերթի...», ու հաշիշներ, սիգարեթներ,  
Ընկերների ընկերուհիներ՝ վարակված դիմակներով, դիակներով:  
Հետո պատեր, էլի պատեր, նորից պատեր:  
Պլոկելու մոլուցքով կիսամերկ որբեր, երեխաներ,  
Հայրեր, մայրեր, դնգստումներ:  
Հայրական օղու պակաս՝ հանդգնություն,  
Մայրական հացի պակաս՝ ծուլություն,  
Ու սպասված երկաթե ճաղեր:  
Մի շնացած շան որդու շուն ուսադիր  
Քացիներով մեղեդի է ստեղծագործում ուշադիր.  
«Կեցցե՛ փականքը, կեցցե՛ վանդակն ու բռնությունը»:  
Արգելակներ չկան բնավ.  
Ու բեղմնավոր արյունը լվանում է վանդակների գորշությունը:

Փոքրիկ քաղաքում  
Երեկ, այսօր, գուցե վաղն էլ  
Արգելակներ չկան բնավ,  
Չհերիքող, անթիվ, գուցե սակավ կշեռքներ կան հսկայական,  
Ամրագրված, դաշինքային ոճիրներ կան մեծ.  
Կշռում են մեկամաղձոտ դառնությունն ու պատիժները,  
Ու այս դժբախտ, խրոնիկական ցավի համար  
Չեն վճարում փոքրիկ քաղաքի մեծ առնետները:

Փոքրիկ քաղաքում  
Երեկ, այսօր, գուցե վաղն էլ...  
Մղոմների պարբերությամբ՝  
Արգելակներ չկան բնավ,  
Փտած, աներևույթ, հոգնած պատեր կան մեծ,  
Անապատի պատերի պես:

Փոքրիկ քաղաքում՝  
Ավելի ճիշտ մեր մեջ,  
Չկա ոչինչ:

**Միտինգ է**

Մի ողջամիտ բջիջ քրքրում է ծյունը:  
Օպերայի բակում սառած խոսափողների միտինգ է.  
Մայթին՝ հրացանները շների դիակներ են ծաղկեցնում,  
Ու մարդիկ նման են այդ փռված շներին: Միտինգ է:  
Միտինգ է այնտեղ՝ օպերայում, շների դիակիզարանում,  
Ուր մարդիկ ներում են շներին սպանելու համար,  
Քանի դեռ իրենց էլ այդպես են սպանում,  
Ու իրենք էլ փռված են գետնին այդպես հարմար:  
Օպերայում միտինգ է:  
Կարգախոսներ, կոչեր ինչպես միշտ կան,  
Գառան մորթով գայլեր՝ նույնպես,  
Մթնուղորտում կա խենթ էքստազ,  
Ու ոչ մեկը չի հասկանում՝  
Դիակների կորուստն այդ մեծ  
Շների՞նն է, թե՞ մարդկանցը:  
Կան հաչոցներ բարձր ու զիլ,  
Կան խոստումներ, հայհոյանքներ,  
Ինչպես նաև տարերք կա մեծ,  
Բայց ոչ մեկը չի հասկանում՝  
Այդ կորուստը շների՞նն է, թե՞ մարդկանցը:

**Վա՛յ, խուճուճ քեռի**

Եկեք այնպես ոռնանք, որ գայլերը լռեն.  
Ու տազնապի զգացումը կշտացնի նրանց,  
Ու փսխեն նրանք այդքան արատավոր ոռնոցից:  
Իսկ մե՞նք...  
Մենք էլ դառնանք առասպել  
Կան դաժան կատակ:  
Չետո էլ դառնանք հնաոճ, բայց զիլ,  
Իսկ ավելի ուշ ձևախեղված,  
Ընկած կառքի անիվների տակ  
Այն գայրացած, հաստափոր քեռու,  
Որն էլ ասում էր.  
«Մի՛ լռեք, ոռնացեք գոնե, թե չէ կպայթեք»:  
Ասում էի, չէ՞,  
Չաստափոր քեռի,  
Կամ թոպեն էր գանգուր,  
Կամ՝ ժամանակը,  
Ու ինչ-որ բան  
Կամ ինչ-որ մեկը պտտվում,  
Խճճվում էր:

**Սերս գաղտնի չմնա**

Սիրեցի քեզ, երեւանցի կռնատ ուռենի,  
Քեզ համար չքնաղ ճյուղեր հորինեցի,  
Թեւեր ստեղծագործեցի, երեւակայեցի,  
Թե չես լացում, ծիծաղում ես...

Սիրեցի քեզ, երեւանցի ծառ գլխատող դահիճ,  
Քեզ համար վառարան հորինեցի,  
Սաթի պես ածուխ նկարեցի, վառեցի,  
Աչքերիդ արյան ծարավը ջերմությամբ հագեցրի...

Սիրեցի քեզ, երեւանցի Արշակ Սադոյան,  
Քեզ համար անձնական երրորդ խոսափող մոգոնեցի,  
Չորս պատ շինեցի, տեղավորեցի,  
ճառում ես, բայց թառամած ականջ չկա, թառամում են պատերը լոկ:

Սիրեցի ձեզ, երեւանցի փողոցային գռեհիկ փոսեր,  
Ձեզ համար տխմար բարքերը խառնեցի,  
Ու ես երկրի գողերի հետ լցոնեցի փոսերի մեջ,  
Վրաերթին նվիրված զիլ սերենադ երգեցի...

Սիրեցի ձեզ, երեւանցի պայթած ու տրաքած լուսամփոփներ,  
Սիրեցի ձեզ, երեւանցի պայթած ու տրաքած լուսամփոփի պես աղջիկներ,  
Սիրեցի ձեզ, երեւանցի լուսամփոփի պես աղջիկ երգող՝  
պայթած ու տրաքած, չարենցավարի երգիչներ,  
Սիրեցի ձեզ, երեւանցի պայթած ու տրաքած, փախած ոճրագործներ  
կամ եղածներից ազնիվներ...

**Չկա**

Չկա վաղը՝  
Դու փակված ես.  
Շղթաներն էլ ծանր-ծանր  
Մասնատում են  
Ամբողջական վաղվա օրը:

Չկա վաղը՝  
Կա մի օր,  
Կա գիշեր,  
Որն անվերջ է, անվերջակետ,  
Սպանելու չափ ծանծրալի,  
Անհնաստ, անգրագետ, տգետ...  
Մի անօրեն, անօգուտ գիշեր:

Չկա վաղը՝  
Կա սպասում,  
Շատ խաբեբա, անասուն սպասում,  
Որ մաշեցնում է կոշիկի պես ու դեն նետում:  
Կա կոշկակար աննրբանկատ՝  
Նորոգում, կարկատում է ժամանակավոր՝  
Էլ ավելի ցավեցնելով, բարդացնելով,  
Վաղվա օրը լուսացնելու հույս տալով,  
Ծակծկելով, քրքրելով վերականգնում է ոչ թե վաղվա օրը,  
Այլ՝ սպասումը:

**Արեգակնե՛ր... արեգակնե՛ր...**

Տրամվայի վարորդ տիկինը,  
Անիծելով իր մեջ եղած մի քիչ կինը,  
Սահմանափակ իր օղակում  
Աչքերի մեջ նկարում է իր կռիվը.  
– Ծերունիներ՛ր... ծերունիներ՛ր...  
Ինձ վարժեցրեք ձեր ստվերին,  
Թող ես կոփվեմ ձեր ծանր, մարող շնչով,  
Որ իմ լքված ու միայնակ  
Մորը լքող դժբախտ որդին՝  
Ժամանակին, անժամանակ  
Ուղարկի ինձ ծերանալու ծերանոցում:  
Արժանանամ լքող մոր, լքված որդու պատժաչափին ...  
– Ծերունիներ՛ր... ծերունիներ՛ր ...  
Ձեզ ու՞ր տանեմ ես զբոսանքի,  
Ու՞ր պտտեմ առանց հոսանքի.  
Մեր տունը այս ժանգոտած զրնգոցն է...  
Ձեզ պտտեմ՝ աշխարհ տեսնեք,  
Քանի դեռ մի քանի քմահաճ լավ տղերք  
Չեն ավերել մելամաղձոտ մխիթարանքի մեր երթը ...  
Ծերունիներ՛ր... ծերունիներ՛ր...  
Արեգակնե՛ր... արեգակնե՛ր...  
Անմիտների զոհեր...

## Սամվել Յավրյան

### Անծանոթ աշխարհ

Ինձ ծանոթ մի մարդ քայլում էր ինձ ծանոթ փողոցով և հանդիպեց ինձ ծանոթ մի աղջկա: Աղջիկը երկար ժամանակ պատմում էր ինձ ծանոթ պատմություններ և երգում էր ինձ ծանոթ երգեր: Նրանք զնացին՝ ամենքը իրենց ճանապարհով:

Նա մտավ հացի խանութ ու ակնոց գնեց, իսկ կաթնամթերքի բաժնում նրան ծխախոտ չտվեցին:

Շատրվանների կողքին կանգնելով՝ նա հանվեց, դրեց ակնոցը և սուզվեց: Խորքում նա նոր աշխարհ գտավ, որը արդար էր և բարի, և այդ աշխարհը ինձ ծանոթ չէր:

### Ինչ գեղեցիկ է

Այսօր առավոտյան ես հետևում էի, թե ինչպես է հոգնած արևը բարձրանում վեր, ինչպես են առաջին թռչունները իրենց երգը սկսում, ինչպես է քամին շարժում դեռ չզարթնած ծառերը, ինչպես են մարում փողոցի լույսերը, ինչպես են մարդիկ գնում կամ գալիս աշխատանքի, ինչպես են սկսվում վառվել լույսերը դիմացի շենքի, ինչպես է կատուն շան հետ ընկերություն անում:

Չետո ես թռա տանիք և սկսեցի նայել, թե ինչպես են ընկնում 4-րդ հարկից: Իմ ուղեղը և մյուս օրգանները զբաղեցրին իրենց տեղերը ասֆալտի վրա և քնեցին...

Դրանից հետո ես զգացի ինձ սարսափելի մեծակ ու նետեցի պատուհանից իմ կատվին:

Ես և կատուս երկար նայում էինք, թե ինչպես են մարդիկ լաց լինում, և կաթիլները ընկնում էին մեր մարմինների վրա:

Ինչ գեղեցիկ է...

### Մարկիզ

Ծխելով սիգարետը՝ ես որոշեցի մտածել ապագայի մասին:

1. ապագան մի մեծ հեռուստացույց է
2. ապագան առաջադիմություն է + իրականություն
3. այդ ամենից փրկվելու համար պետք է օգտագործել թմրանյութեր կամ ինքնասպան լինել
4. ապագա չկա

Ես աղբարկղի մեջ զցեցի իմ ծխած սիգարետը, թափ տվեցի գլուխս, հասկացա, որ ես հոգնած եմ, քթիս տակ մրթմրեցի:

– Ով եմ ես, որպեսզի մտածեմ ապագայի մասին:

Ասելով այդ՝ ես լսեցի մի ձայն.

– Մարկիզ, տուն արի, ո՞ւր է այդ հիմարը:

Լսելով տիրուհու ձայնը՝ ես, ինչպես հավատարիմ կատու, զնացի տուն: Էլի կնստեմ պատուհանի մոտ ու կքնեմ:

### Յոգիս էր ծիծաղում

Շատ ահավոր վախենալու էր, որ դա չի լինի: Ես վազվզում էի տնով մեկ, ջարդում ավսեները, թաքնվում մահճակալի տակ: Եկել է իմ ժամը, մտածում էի ես և նորից վազվզում: Ես ամբողջովին քրտնած էի, քրտինքի կաթիլները հոսում էին իմ վրայով:

Սիրտս չէր ենթարկվում իմ հրամաններին, ոտքերս իրենք իրենց էին վազում, միայն հոգիս էր ծիծաղում այդ ամենի վրա:

Ես նստած էի պատուհանի դիմաց, երբ հանկարծ դա կատարվեց: Արևը դուրս եկավ անվերջ հորիզոնից: Ես հազնվեցի և բարձր տրամադրությամբ պառկեցի քնելու:

– Մեկ է, ես լավ բույս եմ, – բարձր ասացի ես ու թառամեցի:

### Դիպսին

– Ատում եմ այս թմրամուլներին. միշտ ամեն ինչ փչացնում են, ինչքան են անամոթ դարձել, որ հենց փողոցում են ծխում: Բերանը ուզում էի ջարդել, Առաքելյանը խառնվեց: Ոչինչ, սրանց հետ բանտում կզբաղվեմ:

Տեսնելով Դիպսին, սերժանտ Առաքելյանը չծիծաղեց: Նրա պրոֆեսիոնալիզմը հուշեց, որ այստեղ ինչ-որ բան այն չէ:

– Ձեր փաստաթղթերը:

Դիպսին ծիծաղեց ավելի բարձր և անցավ սերժանտի կողքով:

«Չիմարի մեկը, ուզում ես խաղա՞ս իմ հետ», – մտածեց սերժանտը:

– Կանգ առ տեղում:

Դիպսին զնաց առաջ:

– Այ դու հիմա կստանաս, – սերժանտը բռնեց նրա ձեռքից ու շրջեց դեմքով դեպի ինքը:

Դիպսին շարունակում էր ծիծաղել:

– Չանիր վերարկուդ... հիմար ա...

Դիպսին կանգնած ծիծաղում էր:

– Նայե՛ք՝ ում է բերում Ավագյանը:

Դիպսին հայտնվեց ինչ-որ սենյակում:

Նա դժգոհ էր, բայց շարունակում էր ծիծաղել: Նա պետք է զնար կենտրոն, բայց այստեղ կարող է

32

ցմփորաբլիթներ տան: Եվ այդ մտքից նա ավելի բարձր էր ծիծաղում: Նա իր բախտի վրա էր ծիծաղում, զգում էր, որ շուտով իրեն կկերակրեն ցմփորաբլիթներով:

– Դե ինչ, երևի քո հետ ես վատ ձևով պետք է խոսեմ...

Սերժանտը հանեց գրպանից դանակը՝ ցանկանալով ստիպել Դիպսիին հանել վերարկուն: Հարվածեց փորից մի քիչ վերև ու ներքև իջեցրեց: Դիպսին դադարեց ծիծաղել, նա գոռում էր... Նա չէր հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Ուր են հիմա իր ընկերները, ուր են նապաստակները, ուր են ցմփորաբլիթները: Իսկ արյունը հոսում էր ու հոսում: Դիպսին ընկավ՝ շարունակելով գոռալ: Նրա հետ հավասար գետնին ընկան աղիքները: Դիպսին լռեց...

### Երջանիկ մարդու օրացույցը

Ինչպես հայտնի է, տարին ունի 12 ամիս, ամիսը՝ 30 օր: Իսկ ով է ասել, որ անպայման պետք է ապրել այդ օրացույցով:

Օրացույցը կարելի է կազմել ինքնուրույն: Հիմա ես քեզ կտամ իմ օրացույցի մի մասը, դու կարող ես օգտագործել կամ պատրաստել ինքդ: Բայց դա էլ անպայման չէ, բավական է զոռնե մեկ անգամ կարդաս:

1-ին օր

#### Նոր տարվա սկիզբ

Այսօր առաջին օրն է նոր տարվա, և դուք պետք է սկսեք այն՝ ոնց ուզեք, դուք պետք է պատկերացնեք, որ ձեր կյանքը նույնպես սկսվում է նորից: Փորձեք մոռանալ ձեր բոլոր հին սովորույթները, այնպիսիք, ինչպիսիք են ծխելը, հեռուստացույց դիտելը կամ միս ուտելը:

2-րդ օր

#### Բարեկամության օր

Բոլոր մարդիկ ձեր ընկերներն են, և դուք նրանց գիտեք շատ, շատ վաղուց: Բարևեք՝ ում որ տեսնեք, գնացեք հյուր հարևանին, փող տվեք մուրացկան տատիկին:

3-րդ օր

#### Լռության օր

Դուք լրտես եք, օտարմոլորակցի կամ մարդ՝ ուրիշ դարաշրջանից: Աշխատեք ինչքան հնարավոր է քիչ խոսել:

4-րդ օր

#### Գեղեցիկ օր

Պատկերացրեք, որ դուք նկարիչ եք, գնահատեք

ձեզ շրջապատող իրականության հատվածները, ինչպես արվեստի գլուխգործոցներ, որոնց շատ հաճելի է նայել:

5-րդ օր

#### Համաշխարհային շիզոֆրենիայի օր

Դուք ձանձրանում եք, և պետք է ինչ-որ ձևով գունավորել իրականությունը: Հիմար-հիմար խոսեք, անիմաստ ծիծաղեք, պարեք, կերպարանափոխվեք ու դարձեք կենդանի կամ մի ուրիշ մարդ:

6-րդ օր

#### Ես

Դուք կենտրոնն եք տիեզերքի և բացի ձեզնից ոչինչ չկա: Շատ ժամանակ տրամադրեք ձեր արտաքին տեսքին: Դուք հիանալի եք: Արթնացեք շուտ, մարմնամարզություն, մաքրեք ատամները, սանրվեք, սափրվեք, գնացեք վարսավիրանոց:

7-րդ օր

#### Հետաքրքրության օր

Այսպիսի հետաքրքրություն կյանքի հանդեպ դուք չեք ունեցել: Շատ հարցեր տվեք ձեր դիմացիներին իրենց կյանքին վերաբերող, հետաքրքրվեք այնպիսի բաներով, որ ձեզ կյանքում չէին հետաքրքրում, կարդացեք գրքեր, որոնք չեն մտնում ձեր հետաքրքրությունների շրջանակի մեջ: Դիտեք հնդկական ֆիլմեր, մանկական մուլտֆիլմ, լսեք այն, ինչ երբեք չեք լսել, կամ քայլեք անծանոթ թաղամասով:

8-րդ օր

#### Միտք օր

Սեր - դա հիմնական զգացմունքն է, որին դուք տրամադրում եք համարյա ամբողջ ժամանակը: Կատարեք բոլոր խնդրանքները, որոնցով ձեզ կդիմեն մարդիկ, ում դուք սիրում եք:

9-րդ օր

#### Արվեստի օր

Գնացեք ցուցահանդես, համերգ կամ կրկես: Լսեք դասականներին, երեկոյան խորհուրդ է տրվում նկարել կամ գրել:

10-րդ օր

#### Դեբիլի օր

Ոչ մի խելացի բան: Դեբիլացեք, պատմեք ծանոթ ու ձանձրալի պատմություններ, նայեք հեռուստացույց և պառկեք քնելու ավելի շուտ՝ առանց կարդալու:

11-րդ օր

*Գիտելիքների օր*

Չգնաք գործի, փոխեք հանդիպման օրերը, պատրաստեք թեյ /շատ/, գներ սիգարետներ /շատ/, պառկեք անկողնու մեջ, հավաքեք չկարդացած գրքերը և ամբողջ օրը ծախսեք դրա վրա:

12-րդ օր

*Պարտքերի օր*

Տվեք բոլորին պարտքերը, զանգահարեք բոլոր ծանոթներին, գրեք չպատասխանած նամակներին, դիտեք հին ֆիլմեր, կարդացեք ձեր սիրած գիրքը:

13-րդ օր

*Հանգստի օր*

Դուք գիտեք ինչպես հանգստանալ... Գնացեք դիսկոտեկ, կազմակերպեք փոքրիկ բանկետ ընկերների հետ:

14-րդ օր

*Դիետայի օր*

Հիշեք: Սովը գլխավոր ուղեկիցն է դեպի ճշմարտություն: Աշխատեք չուտել ամբողջ օրը, իսկ երեկոյան՝ միրգ կամ բանջարեղեն:

15-րդ օր

*Ուրախության օր*

Օ, տեր իմ, ինչ հիանալի է աշխարհը քո ստեղծած:

16-րդ օր

*Սպորտի օր*

Առողջ մարմնում՝ առողջ հոգի... Առավոտյան վազք, մարզանք, երեկոյան ջրավազան, քնելուց առաջ՝ մեդիտացիա... Դուք բարձունքում եք:

17-րդ օր

*Դեպրեսիա*

Այս ձևը բավականին բարդ է, ոչ մի դեպքում չնայեք մարդկանց՝ ուր որ հնարավոր է, միայն ոչ՝ մարդկանց, իսկ եթե դա տեղի ունեցավ, ապա չնայեք նրանց աչքերի մեջ: Երեկոյան կսկսեք ինչ-որ բան հասկանալ...

18-րդ օր

*Թվերի օր*

Չմտածեք ոչ մի բանի մասին, բացի՝ թվերից: Հաշվեք ամպերը, մարդկանց՝ մետրոյում, վարագույրի ծալքերը, հեռուստացույցի կոճակները և այլն...

19-րդ օր

*Տարզանի օր*

Ազատ ժամանակ շատ տրամադրեք զբոսանքին բնության գրկում:

20-րդ օր

*Ալկոհոլային օր*

Առավոտյան՝ 1 շիշ գարեջուր, ճաշին՝ 2 շիշ գարեջուր, երեկոյան՝ 1 շիշ օղի:

21-րդ օր

*Չանձրալի օր*

Այս օրը դուք պետք է զբաղվեք ձեզ համար ձանձրալի գործով:

22-րդ օր

*Ծանոթության օր*

Մի կողմ գցեք ձեր կոմպլեքսները և ում հանդիպեք

23-րդ օր

*Ինքնասպանության օր*

Առանց մեկնաբանությունների: Արեք այն, ինչ երագուն եք 13 տարեկանից...

**Հարգելի Տիկին/Պարոն**

Դուք երևի կգարմանաք՝ ինձանից ստանալով այս նամակը, քանի որ ինձ անձնապես չեք ճանաչում: Որպես անհրաժեշտ նախաբան՝ հայտնեմ, որ ես պրն Ֆրենք Մբագին եմ՝ որդին դոկտոր Մաթելո Մբագիի, հարուստ ազարակատեր/քաղաքական գործչի, որը վերջերս սպանվեց հողային վեճի ժամանակ, իմ հայրենիքում՝ Ջիմբաբվեում:

Ես ձեր տվյալները հայթայթել եմ ինտերնետով՝ ելնելով արտասահմանյան հուսալի ու արժանահավատ գործընկերոջ հրատապ կարիքից: Ուստի և որոշեցի գրել ձեզ:

Իր անժամանակ մահվանից առաջ հայրս ինձ տարավ Յոհանեսբուրգ, որպեսզի 20,5 միլիոն (Քսան միլիոն Հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար պահ տանք անվտանգության ծառայություններ մատուցող մի մասնավոր ընկերության, քանի որ կանխատեսում էր Ջիմբաբվեին սպառնացող վտանգը: Այս փողը տեղավորեցինք երկու արկղերում, որպես Ընտանեկան Գանձ, որպեսզի խուսափենք այդ ընկերության կողմից պարապուրդից: Այս գումարը հատկացվելու էր Ազարակի համար մեքենաների ու քիմիկատների գնմանը և նոր ազարակների հիմնադրմանը Սվագիլենդում:

Հողի հիմնախնդիրը մեր երկրում ծագեց, երբ մեր Նախագահ պրն Ռոբերտ Մուգաբեն, իր վերընտրությունը շահելու նպատակով, ընդունեց նոր Հողային Բարեփոխումների Արձանագրություն, որն ամբողջապես դիպչում էր հարուստ սպիտակ ազարակատերերի և որոշ սևամորթ ազարակատերերի, որոնք ընդդիմադիր կուսակցության անդամներ են: Այն հրահրեց սպանություններ և խժժություններ Ջիմբաբվեական պատերազմի վետերանների ու որոշ խելագուրկների կողմից, որ կան հասարակության մեջ: Բազմաթիվ մարդիկ սպանվեցին Հողային Բարեփոխումների այս Արձանագրության պատճառով, որի զոհերի թվում, դժբախտաբար, նաև իմ հայրը հայտնվեց:

Այս նախապատմության արդյունքում ես և իմ ընտանիքը փախանք մեր մայրաքաղաք Հարարեից, որպեսզի փրկենք մեր կյանքերը, և տվյալ պահին ապաստանել ենք Բուլաուայո հեռավոր երկրամասում: Մենք ծրագրել ենք լքել երկիրը և քաղաքական ապաստան փնտրել Եվրոպայում և որոշել ենք Եվրոպա տեղափոխել մեր ընտանեկան հարստությունը:

Որպես իմ հոր ավագ որդի՝ ես պատասխանատվություն եմ ստանձնել որոնելու պարկեշտ գործընկեր, որը կկարողանա օժանդակել մեզ՝ առանց իմ կառավարության իմացության և հակված է կատարելու ամեն ինչ, որ մեզ հարկավոր է, և՛ առանց Հարավային Աֆրիկայի կառավարության իմացության, որը կարծես թե խոսքը մեկ է արել մերի հետ: Ես կանգնած եմ այս դրամագուլիսը Հարավային Աֆրիկայից տեղախոխելու երկրորդանքի առաջ՝ այն սարսափից, որ նույն փորձությանը չենթարկվենք ապագայում, քանի որ երկու երկրներն ունեն նույն քաղաքական պատմությունը:

Ես որոնում եմ այժմ մի գործընկեր, որին կարող եմ վստահել իմ ապագան և ընտանիքս հանձնել այդ պարոնի/տիկնոջ ձեռքը: Այս վերջաբանի համար է, որ մենք զգում ենք ձեր աջակցության կարիքը:

Հարգանքով՝  
Ֆրենք Մբագի

Միջազգային զանգի համար հավաքեք + 88216 52098236  
Էլեկտրոնային փոստ. fmbagi@rediffmail.com

(Թարգմանված է անգլերենից, բնագրի ոճը և ուղղագրությունը պահպանված են):

**Անահիտ Հայրապետյան**

**Թաբու**

(պոլիմեզերեն բառ, որը չի ենթարկվում միանշանակ թարգմանության ժամանակակից լեզուներով)

Դժվարանում եմ ասել՝ ինչն ինչոց է, բայց կարևոր է բարձրությունից չվախենալը: Հաշվարկներ կատարելու ժամանակ չկա, քնարերգությունից հռետորություն մույն ուղով գնացի, տրորեցի այդ ուղին՝ ճամփա դարձնելու անհիմն մտադրությամբ, հետո ճամփան ճամփա պիտի ընկնի ու գնա, ամեն մեկն էլ բայեր կհորինի ու կխուսափի դրանցից՝ իր հորինածից... **Թաբու՞...**

- Շնորհակալություն, դուք ազատ եք:
- Մի՞թե, իսկ դո՞ւք, դուք ազա՞տ եք:

(մեջբերումներ կարելի է անել, ափսոս, ֆիլմերի անունները չեմ հիշում...)

Պատահմամբ աչքս ընկավ մարդկանց,  
Իզուր այսքան ժամանակ վատնեցի,  
Մինչև տեսա տեսանելին,  
Երբ ուղղակի կարելի էր նայել,  
Հանկարծահաս տխրությունն աղաղակեց՝  
Արա՛գ,  
Ժամանակ չկա,  
Աչքերս չռվեցին,  
Հետո սիրունացան,  
Հետո հարստացան,  
Իզուր այսքան չապրեցի...

Կանխորոշում եմ ինձ, սահմանների մեջ դնում ու պտտում ուզածիս պես:

Պատեր ու ծաղիկներ,  
աղբ,  
պատեր,  
ճամփա,  
երկինք,  
դուռ,  
պատեր,  
հորիզոն,  
նորից ծաղիկներ,  
գարշահոտ,  
տիկնիկ,  
սա ով է,  
անմիջապես կատարիր ասածներս,  
չհասկացա,  
լռիո,  
պտուտակագիծ,  
ա. խ, դ, e14, 1297, 2045...  
հերիք է...  
հանգիստ թող ինձ:

Վերջապես տեղավորվեցի իմ մեջ: Դեռ մի քիչ անհարմար է, նոր գնած կոշիկի պես: Գծագրվում են դիմագծերս, որոնց կորցրել էի...

Սահմանների անդուր խաչմերուկում ասելիք եմ փնտրում:

# 36

Կարծում էի՝ փոխվել եմ:

**Թաբուն** բարոյականության ամենահին ձևն է, որը հանդես է գալիս սոցիալապես վտանգավոր հակումների ճնշման պահանջի տեսքով:

**Թաբուն** չի տրվում, ինչպես, օրինակ, չի տրվում աստծո պատվիրանը կամ օրենքի պահանջը, այլ իրագործվում է որպես ինքնասահմանափակում՝ որոշակի գործողությունների կամ էակների հանդեպ ոչնչով չբացատրվող **վախի** ազդեցությամբ:

Գուցե վախ ներսի՞ նկատմամբ...

Ներսը համարձակ է, մութ, անհասկանալի: Աչքերս փակեցի, ներսը դուրս հանեցի, ու ես իջա ցած...  
Ուզեցիր, որ այսպես լինի. հրաբուխը ժայթքեց, մարդիկ աստիճանաբար խելագարվեցին...

(աստծո թագավորությունում են նիրհում բոլոր տկար մտքերը մարդկային, անգամ երբ չես հավատում, ամենավիատ դեպքերում սկսում ես աստված կանչել, ո՞ւմ աստվածն է ամենաուժեղը, հանդգնում եմ հիմարաբանել. մարդկանց պետք է ատվածակռիվ, ավելի պետք է աստվածականչ)

Ինչո՞ւ թույլ տվեցիր մեծանալ...

Երբ աստված որոշեց հեռու վանվել ինձնից,  
Հասկացա նրան,  
Ես էլ վանվեցի,

Քաղաքի պատմությունն ավելի հետաքրքիր է, և հետո շատերը, միևնույն է, կընկալեն այն, ինչ իրենք են ուզում:

Ես միապաղաղության համար ամեն ինչ կվերագրեմ ինձ՝ հաղթահարելու համար սեփական անձը տեսնելու վտանգը:

Մնացած ամեն բան այս պարագայում արդեն անիմաստ է, գոնե ինձ համար:

Հասա ճամփաբաժնին,  
Կածանի նշարվելուց հետո  
Վազեցի  
Հանկարծ չուշանալու համար,  
Քանի որ մեր հորթը  
Կաթը շշով է ուտում,  
Դողողի պես դունչը երկարում է՝  
Ինձ տեսնելով,  
Իսկ տուն գալ չի էլ շտապում:  
Անորոշ վախը ներթափանցեց աչքերովս,  
Երբ նման անիմաստ փոշեկույտում  
Ջավեշտի իր բաժինը տեսա,  
Ուզեցի անթարթ նայել:

(մետաղյա զրնգուն գնացք, այն լինում է մտքե, լիքոտ, և այլն... աստվածները սիրում են ճամփորդել գնացքով, գնացքում թաբուներ չկան, հապա՝ աստվածները օ...)

Ասացին՝ հաճախ խառնում եմ գույները,  
Իսկ իմ պատասխանից հետո պիտակեցին՝  
Խելագար:  
Այդ պահին ինձ կսազեր,  
Օրինակ,  
Գնացքի տակ նետվել,  
Բայց ես անգամ ալարում էի մտածել,  
Ուր մնաց խելագար լինել...

Մարդկանց շարքերը մկրատով կտրեցի, շորիս վրա կարեցի ու քիչ մնաց ուշաթափվեմ սեփական

հնարամտության ընկալումի հաճույքից...

Ոչինչ չհասկացա բացատրված դասից և ուրախացա,

ինձ էլ կարելի է չհասկանալ, ամեն բան կարելի է հասկանալ և չհասկանալ, կամ էլ ճիշտ չհասկանալ, հասկանալ ուզածիդ պես և այլն...

Գյուտարարություն...

Չարկավոր է ֆիքսել. 30.10.03 7:44

Ես կուզեի լինել Աֆրիկայում՝ ընդամենը այնտեղ եղած լինելուս համար, միայն...

Արդեն հետաքրքիր է:

Մասնակիություն մտցնելու նպատակով գործող հերոսներին անուն կտամ, ասենք, օրինակ, ինձ դուր է գալիս Ռոբերտը, իսկ քե՞զ:

Բազմությունը նույնի շատն է, եթե չես ուզում բազմություն լինել, պետք է...

Բայց դու միշտ իմ ասածներից դեմքդ ծամածռում ես, ասես միայն ես եմ, որ խոսում եմ այսպես, կամ մտածում այդպես:

(նման է ժիգ-ին կամ չիս-ին, բայց ոչ այն է, ոչ էլ այն)

Չիսը նա է, որ երեկ երեկոյան եկավ մեզ մոտ, ոչինչ չասաց, նստեց-նստեց, խոր հոգոց հանեց ու գնաց: Չեռուտացույց էի նայում, հանկարծ ինձ տարօրինակ թվաց Չիսի ժպիտը, ոչինչ չասելը, ծուլորեն վերցրի հեռախոսն ու սկսեցի հավաքել թվերը:

– Ալո:

Չարցրի՝ Չիս, ինչո՞ւ եկար:

Չիսը զավեշտով թոթվեց ուսերը, հռչակեց:

Ես դրեցի լսափողն ու շարունակեցի նայել ընդհատած հաղորդումս:

Չաջորդ ամիսն է հիմա: Ես որոշեցի կուտակածս դրամով մի բան գնել, գիտեմ, որ մոտս մնա, ծախսելու եմ անպայման: Ուստի որոշեցի փոշեկուլ գնել: Այն գոնե մեկ-մեկ ինձ էլ կուլ կտա, մտքերս կուլ կտա, փոշին կուլ կտա, ամեն, ամեն ինչ կուլ կտա:

(quies - լատ. հանգիստ)

(այստեղ ինչ-որ բան պիտի գրեի, բայց ալարեցի գրառեմ, իսկ հիմա մոռացել եմ)

Խանութները հերթով շրջեցի, փնտրեցի, մեկի պարկը դուրս չեկավ, մյուսի կոկորդը կամ անիվները: Մեկ էլ հանկարծ Չիսի ժպիտը նշմարվեց խորքում. նա էլ էր փոշեկուլ գնում: Միայն թե նա ոչինչ չասաց, փաթեթը կռնատակին՝ գնաց: Չիսի գնած փոշեկուլից խնդրեցի, վաճառողը տարօրինակ վրաս նայեց. «Էլի նախանձ, հարևանիմից ա ուզում»: Բայց ես նայեցի ու խնդացի, ասացի՝ լավը չի ու դուրս եկա: Երևի վաճառողը զղջաց մտածածի համար, բայց դե արևը շատ տաք էր այրում, ու ես օպերայից ընդամենը մի քանի քայլ էի հեռու:

Մի ամիս էլ կանցնի: Ես հանկարծ կիիշեմ Չիսի երկարավուն ժպիտը, որ նշմարվեց խանութի խորքում, կիիշեմ նրա գնած փոշեկուլն ու կզանգեմ:

– Անահիտ քուրիկ, ձեռնիդ բռնեմ, որ չընկնես, հա... Ես գյուղի տղա եմ, չեմ ընկնի, քաղաքում սենց փոսեր չկան, քարեր չկան: Քաղաքում սարի ծաղիկ չեն քաղում, որ չորացնեն, տները ավլեն, քաղաքում փոշեկուլներ են: Սարի ծաղիկներն էլ կվերանան շուտով, որովհետև արմատախիլ են անում... Չողմերը, քաղաքում...

– Անահիտ քուրիկ, մի վախի, չես ընկնելու, ես քո ձեռնից բռնած եմ...

– Անահիտ քուրիկ, քաղաքում էլ շներ կա՞ն, որսի շներ, Կազբեկի պես, իսկ անտառներ կա՞ն, տեղեպուզիկներ կա՞ն: Անահիտ քուրիկ, ինձ քաղաք տար...

Ծանոթացա Չիսի ընկերուհու հետ: Մենք սկսեցինք խոսել ու ծիծաղել, ծիծաղել ու խոսել: Չետո այնքան ծիծաղեցինք, որ սկսեցինք արտասվել: Չետո այնքան արտասվեցինք, որ Չիսն իր բութ դանդաղկոտությամբ զայրացավ, իբր հիմար բաներով ենք զբաղվում, կյանքի կարևոր ենթամասերն անտեսել ենք, իրերի խորք ու մակերես իրար խառնեց, հետո փքված աքլորի կերպարանքով հայտարարեց իր գաղտնի հետաքրքրությունների մասին... ու հետո այնքան ուրիշ բաներ, որ ես ու Չիսի ընկերուհին սկսեցինք ծիծաղել, հետո էլ Չիսը դուռը

չրիկացրեց իբր թե երեսներին ու դուրս եկավ:

Ես էլ տարվեցի հիմար բաներով:

Գիտակցելը կարևոր է:

- Ինչո՞վ ես զբաղվում:
- ԳՐՈՒՄ եմ...
- Ինչ...

Փոխել

Ինձ,

Ամենքին,

Բղավել,

Սպիտակ ու բաց անդունդը

Այրել:

Թափանցիկ,

Թափառուն,

Սլացիկ անհունում

Հիմարանալ,

Որ ամեն,

Ինչ ցանկանաս,

Որ ասես,

Ինչ ցանկանաս,

Հմայիչ ու փափուկ քայլերով

Տրորել

Ու փոխել ամեն ինչ...

Լուսնին եմ նայում, հիշում, ու հանկարծ կաթկթացող անձրևը ստիպում է շեղվել: Մի հանդուգն կաթիլ ցցվեց ուղիղ քթիս ծայրին, աչքերս պտտեցի, կենտրոնացրի քթիս, ուզեցի դրա հալը տեսնել, մի մեծ կաթիլ էր:

Ամառը մի լավ թրև եկա:

Գարունը, չէ, գարունը ամառվանից առաջ էր:

Աշունը մի մեծ անձրևի կաթիլ կամաց սահեց քթովս, ընկավ գետնին ու վախճանված կլիներ, եթե ժամանակին չնկատեի:

Չիսն ինձ երկար տնտղեց, հետո ասաց, որ ինքն իր ընկերուհուց հեռացել է, որովհետև նա միշտ ծիծաղում ու արտասվում է, իսկ իրեն գաղափարակից է հարկավոր...

Ես հավաքածս գունարով որոշել էի անձրևանոց գնել, բայց Չիսի վիշտն ինձ էլ պատեց, մենք միասին մի քանի հատոր գնեցինք, սկսեցինք թերթել, զարգանալ:

Մի առավոտ, երբ շաքարավազ չգտա թեյը քաղցրացնելու համար, ոտքերս դրեցի գետնին ու իջա ցած: Այն ժամանակ Չիսին ոչինչ չասացի, միայն ապտակեցի, ծիծաղեցի ու արտասվեցի, գաղափարափառը տերմինախառը լուտանք թափեցի ու...

Ներքուստ համոզված եմ, որ ճիշտ եմ: Բարոյականություն, բառարան...

Ֆիլմ եմ նկարել, ուր միայն այծեր ու ոչխարներ են: Հարևանի աղջիկը նայեց, հրճվեց, խոսել չգիտեր, խոսեց... Սա է իրականը, երբ չգիտես ու անում ես:

Բացի՞ր գրականության դուռը, ուզում եմ կարդալ:

Հիմար մտքերի քարավանն ընդլայնում է տեսադաշտս, ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում, և սկսում եմ ապրել այլ տարածությունում, այլ ժամանակում... Երբեմն հետաքրքրվում եմ քաղաքականությամբ, սպորտով... Արևը մայր էր մտել... Ո՞ւր էր մտել:

Նախատիր,

Մայր,  
Փորձիր տեսնել,  
Ընկալել ինձ այսպիսին,  
Կարո՞ղ ես փոխել,  
Փոխիր,  
Շտկիր,  
Խնդրում եմ,  
Ես քո որդին եմ,  
Ե՞ս էլ պիտի խնդրեմ,  
Տես,  
Ախր ես քո որդին եմ...

– Անահիտ քուրիկ, ես էս կարուսելն եմ ուզում, բանան եմ ուզում, արի էս արձանը տուն տանենք, հա՞: Ուզում եմ տելեպուզիկը կուկուռիկին ուտի, ուզում եմ նկարվել, դու ո՞ւմ կողմից ես, Անահիտ քուրիկ, իմ տատին եմ ուզում, մա-մա՛... Լ

Անահիտ քուրիկ, ինձ տուն տար, հա՞, բայց չես նեղանա ինձնից, չե՞... Հաջող, կարուսել, էլի կգամ, չնեղանաս, հաջող...

Փոշեկուլիս մեջ ընդհանրապես շատ բան կա, այ, եթե ամեն տարին ընդամենը չորս կամ հինգ ամիս ունենար, արդեն մոտ ութսուն տարի ապրած կլինեի, մի հարյուր քսանն էլ հաստատ կապրեի ու երկու հազար հարյուր քսանին փոշեկուլս աճուրդի կհանեի:

Պարկը կբացեին, իսկ այնտեղ ես եմ, աստվածները, Չիսի ժպիտը, տելեպուզիկը, մի քանի ք, ք, ք, ք և ուրիշներ...

Մեզ կծափահարեին ամենքը, իսկ արևը կայրվեր քննախույզ հայացքներում...

– Անահիտ քուրիկ, էլի եմ էդ մուլտիկն ուզում...

– Լսիր, գուցե ինչ-որ բան մոռացե՞լ ես...☺

– Ես այն եմ, ինչ մտածում եմ, – ասաց Չիսն ու գնաց իր հետևից...

Ալեքսանդր Յովսեփյան

Առանց ռեմարկների

**Այբ-** Ողջոյն...

**Բեն-** Ողջոյն...

**Այբ-** Ո՞վ եմ ես...

**Բեն-** Ո՞վ ես դու...

**Այբ-** Ո՞վ ես դու...

**Բեն-** Ո՞վ եմ ես...

**Այբ-** Չգիտեմ, չեմ հիշում...

**Բեն-** Ի՞նչը...

**Այբ-** Օտար ենք մենք իրար, անծանոթ...

**Բեն-** Ի՞նչ...

**Այբ-** Երգ է... Երգի խոսքերն էի արտասանում... Ով եմ ես, ով ես դու... Ես Այբն եմ...

**Բեն-** Իսկ ես Բենն եմ...

**Այբ-** Ես առաջինն եմ, դու՝ երկրորդը...

**Բեն-** Դրա համար էլ դու տղամարդ ես, իսկ ես կին...

**Այբ-** Իսկ երրորդն ո՞վ է...

**Բեն-** Մենք ենք, որպես զույգ...

**Այբ-** Իսկ հետո...

**Բեն-** Նույն բանը. մեկ, երկու, երեք...

**Այբ-** Այս ինչ սիգնալներ են... Օ՛, պարզոն, շչակներ...

**Բեն-** Յարսանիք է...

**Այբ-** Միթե այսօր շաբաթ է...

**Բեն-** Այո՛... Ինչ արագ են թռչում օրերը...

**Այբ-** Էլ դու սուս...

**Բեն-** Ջրհեղեղից առաջ էլ մարդիկ հարսանիք էին անում, ուտում, խմում, ուրախանում էին, իսկ Նոյը իր տապանի համար ծառեր էր ընտրում...

**Այբ-** Բիբլիական երկգլխանի այս գեղեցկության դիմաց նստած Այբն ու Բենը էլ ինչի մասին պիտի խոսեն որ...

**Բեն-** Գիտես, թե այն ժամանակ, թե հիմա այս սարը չգիտի, որ իր անունը Արարատ է...

**Այբ-** Եվրոպայի մայրցամաքն էլ մինչև օրս տեղյակ չէ, որ իրեն Ձևսի կնոջ անունն են դրել...

**Բեն-** Իրոք որ...

**Այբ-** Ամերիկայի մայրցամաքն էլ չգիտի, որ իրեն մի իտալացու անունով են կոչում...

**Բեն-** Փիղը, մոծակը, առյուծը, թիթեռը, ծուկն ու արևը, լուսինը, Մարսը, Յուպիտերն էլ տեղյակ չեն, որ մենք նրանց բոլորին անուն ենք դրել...

**Մատուցող-** Ու շարունակելով նորանոր անուններ դնել, մենք բաժանում, մասնատում, բզկտում ենք

անսկիզբ ու անվերջ ամբողջությունը, անծայրածիր տիեզերքը... Ողջույն, կներեք, որ ուշ մոտեցա... Լսում եմ...

**Սուրճ և հանքային...**

**Այբ-** Գարեջուր...

**Մատուցող-** Վե՞րջ...

**Այբ-** Վերջ...

**Բեն-** Դու հասկանում ես, թե մենք որտեղ ենք գտնվում...

**Այբ-** Երևանի սրճարաններից մեկում, որտեղից Արարատ լեռն է երևում...

**Բեն-** Որը չգիտի, որ իր անունը Արարատ է...

**Այբ-** Իսկ մատուցողը ամեն ինչ գիտի...

**Բեն-** Իրոք որ, նա ճիշտ է, անուն դնել նշանակում է բաժանել...

**Այբ-** Ավաղ, այդպես է... Նույնիսկ բացարձակ ճշմարտությանը՝ Աստծուն, մենք բաժանել, տարբեր անուններ ենք տվել, պատկերացնում ես...

**Բեն-** Իրոք որ, անուն դնելով նույնիսկ Աստծուն ենք մասնատել... Աստվածների ինչքա՞ն անուններ գիտենք...

**Այբ-** Նրանց մեծամասնությունը իրենց ուժը կորցրել է... Մի քանիսն են մնացել՝ Կրիշնա, Բուդդա, Յիսուս, Եհովա, Ալլահ... Եվ... Եվ... Եվս-ևս, մտքե թևս...

**Բեն-** Մի ժամանակ ես շատ, շատ էի մտածում Յիսուսի մասին: Բավական էր մի քիչ ակիռով ընդունեի, անմիջապես տեսնում էի Աստծու որդուն, զրուցում էի նրա հետ...

**Այբ-** Աստվածները մեր ուղեղի պրոյեկցիան են... Կրիշնայականը Կրիշնային է տեսնում, բուդդայականը՝ Բուդդային, հուդայականը՝ Եհովային և այլն, և այլն...

**Բեն-** Աստվածները մեր ուղեղի պրոյեկցիա՞ն են...

**Այբ-** Այո, մեր ուղեղի... Յենց նա է այս ամեն ինչին անուն դնողը...

**Մատուցող-** Այդ հիվանդությամբ մարդն այն օրը վարակվեց, երբ օձից գայթակղված եվան, իսկ հետո էլ Ադամը համտես արեցին իմացության արգելված պտուղը...

**Բեն-** Շնորհակալություն...

**Մատուցող-** Խնդրեմ...

**Այբ-** Ադամն ու Եվան հենց կերան արգելված պտուղը, անմիջապես իրենց մերկությունից ամաչեցին ու շփոթված սկսեցին ամեն ինչին անուն դնել...

**Բեն-** Ու Աստվածը, որը չգիտեր, թե իր անունը Եհովա է, դուրս արեց մարդկության առաջին զույգին Եդեմի այգուց՝ դրախտից...

**Այբ-** Իրոք որ, արգելված պտուղն ուտելուց հետո մարդը դարձավ կենդանական աշխարհի միակ մտածող ու խոսող էակը...

**Բեն-** Ու մեզնից բացի ոչ մի կենդանի իր մերկությունից չի ամաչում...

**Այբ-** Մենք ինքներս մեզնից ամաչում ենք ու մեզ դրանից մեղավոր ենք զգում...

**Բեն-** Ուղեղի անբուժելի հիվանդություն...

**Այբ-** Յենց այդ պատճառով էլ մենք չենք բավարարվում մեր բնական պահանջներն ու կարիքները բավարարելով: Ուղեղից ծնված ցանկությունների գետը նետվելով՝ ամեն կերպ պատճառաբանում, հիմնավորում, արդարացնում ենք այդ ցանկությունները ու ամեն կերպ ձգտում ենք իրականացնել դրանք...

**Մատուցող-** Կայենը, որի հայրը օձն էր, սպանեց իր եղբորը՝ Եվայի արգանդից ծնված Աբելին, Ադամի որդուն...

**Այբ-** Կոնյակ կխմե՞ս...

**Բեն-** Կարելի է...

**Մատուցող-** Երկու կոնյակ և... Եվ ոչինչ...

**Այբ-** Աստծու ծրագիրը հենց սկզբից ձախողվեց... Մեր նախահայրը դարձավ ոչ թե Աստծու երկրային որդին՝ Ադամը, այլ օձի որդին՝ Կայենը... Ու մարդիկ սկսեցին սպանել իրար...

**Բեն-** Ու պատվիրեցին. «Մի՛ սպանիր»...

**Այբ-** Սկսեցին թալանել իրար...

**Բեն-** Ու պատվիրեցին. «Մի՛ գողացիր»...

**Այբ-** Այո...

**Բեն-** Սկսեցին շնանալ ու պատվիրեցին. «Մի՛ շնացիր»...

**Այբ-** Ուրիշ սուրբ գրքերում այլ պատմություններ են նկարագրված, բայց ամենուր պատվիրանները նույնն են մնում. «Մի՛ սպանիր, մի՛ գողացիր, մի՛ շնացիր»... Եվ այլն... Եվ այլն...

**Բեն-** Եվ այսօր մեր հիվանդ ուղեղից ծնված քաղաքակրթության մեջ նստած մենք ի՞նչ ենք անում...

**Այբ-** Երևի մարդ-կենդանի մեր տեսակի երկարածիզ հոգեվարքին ենք մասնակցում...

**Բեն-** Երևի... Բայց ինձ թվում է մատուցողը ավելին գիտի...

**Այբ-** Տեսնենք... Մատուցող...  
**Մատուցող-** Լսում եմ...

**Այբ-** Ով ենք մենք և ինչ ենք անում այստեղ...

**Մատուցող-** Դուք Այբն եք, դուք՝ Բենը, ես՝ մատուցողը... Քանի որ Այբը առաջինն է, դուք տղամարդ եք...

**Բեն-** Քանի որ Բենը երկրորդն է, ես կին եմ...

**Մատուցող-** Այո, բայց ես երրորդը չեմ... Երրորդը ձեր զույգն է, իսկ ես հազար ու մեկերորդն եմ...

**Այբ-** Եվ ինչ ենք անում մենք այստեղ, այս սրճարանում...

**Մատուցող-** Կոնյակ, սուրճ, գարեջուր եք խմում ու մեր հեղինակի կարծ, երեք էջանոց նյութն եք դառնում... Այդ նյութը նրանից մի նոր ամսագրի համար են ուզել...

**Բեն-** Եվ ի՞նչ է ուզում մեր միջոցով ասել հեղինակը...

**Մատուցող-** Ուզում է ասել, որ մենք մեր ուղեղի գերիներս, պատրանքներ ստեղծող, վերացող բիոմեքենաներ ենք...

**Բեն-** Ու վե՞րջ...

**Մատուցող-** Այո...

**Այբ-** Իրականում ես իմ «Այբ» անվան հետ կապ չունեմ...

**Մատուցող-** Կապ ունեք, բայց որոշ չափով...

**Բեն-** Իսկ ե՞ս...

**Մատուցող-** Դուք էլ...

**Այբ-** Իսկ մեր հեղինակը նույնպե՞ս որոշ չափով կապ ունի իր անվան հետ...

**Մատուցող-** Այո...

**Բեն-** Իսկ նրա հեղինակը...

**Մատուցող-** Նույնպես... Որոշ չափով...

**Այբ-** Եվ այդպես մինչև վե՞րջ...

**Մատուցող-** Այո, մինչև վերջ... Բայց ոչ առաջ, այլ ետ...

**Այբ-** Ե՛տ... Այսի՞նքն...

**Մատուցող-** Վերջը սկզբի մեջ է, էֆը՝ այբի, օմեգան ալֆայի մեջ է...

**Բեն-** «Ես եմ սկիզբն ու վերջը, ես եմ Ալֆան ու Օմեգան»... Ասում էր Չիսուս անունով մի հեղինակ...

**Այբ-** Աստծու երկնային որդին...

**Բեն-** Ադամը Աստծու երկրային որդին էր...

**Այբ-** Այո...

**Մատուցող-** Սկիզբն ու վերջը մի տեղում են, նշանակում է՝ չկա ոչ սկիզբ, ոչ վերջ, չկա ոչ անցյալ, ոչ ապագա... Կա ներկան, այստեղ, այժմ, հիմա՛... Այնպես որ, ուղեղներիդ զոռ մի տվեք, ոչ առաջ ընկեք, ոչ ետ... Եղեք պահի, ակնթարթի հետ...

**Այբ-** Այստեղ և այժմ...

**Մատուցող-** Այո... Ի՞նչ կցանկանայիք...

**Այբ-** Այստեղ և ա՛յժմ... Կոնյակ...

**Բեն-** Եվ միրգ...

**Մատուցող-** Ուրի՞շ...

**Այբ-** Ուրի՞շ...

**Բեն-** Ուրիշ ոչինչ...

# 42 Արման Մարտիրոսյան Ոչինչ չեմ զգում:

Ոչինչ չեմ զգում: Թռչում եմ: Հագիվ եմ ոտքերս քարշ տալիս: Չեմ հասկանում ուր եմ գնում: Շուրջս մշուշ է, մառախուղ: Սպիտակ մշուշի միջից մի ծանոթ դեմք է երևում: Այո՛, ընկերուհիս է: Սակայն նա մի տեսակ տարօրինակ է քայլում ծուռումուռ, ընկնել-բարձրանալով: Հետո նա կորչում է մշուշի մեջ: Ես հանկարծ վախ եմ զգում, ավելի շուտ՝ տագնաա: Ինձ թվում է, թե մեզ հետևում են: Բերանումս տաքություն եմ զգում: Հագիվ բացում եմ աչքերս ու մշուշի միջից տեսնում եմ քեզ: Դու ինձ ազահորեն համբուրում ես՝ լեզուդ բերանս մտցնելով: Մենք պառկած ենք գետնին: Ես զգում եմ հողի հոտն ու քարերի ծակծկոցը: Ուզում եմ հիշել, թե ինչ օր է այսօր, բայց իզուր: Դու նորից համբուրում ես ինձ: Քո մաշկը գունատության աստիճան սպիտակ է: Աչքերդ երիզված են սևով: Գուցե ներկել ես, գուցե իրականում սև եմ, կամ ինձ է թվում: Ծանրացած ձեռքով բռնում եմ քո ձեռքը: Այն երեսիդ նման ճերմակ է: Հանկարծ դու ընդհատում ես համբուրվելը, գլուխդ կողք ես թեքում, և բերանիցդ սկսում է սպիտակ հեղուկ հոսել: Կանաչ խոտը ծածկվում է սպիտակով: Դու ընկնում ես կողքիս և անշարժանում ես: Ես կրկին տագնաա եմ զգում: Ամուր կառչել եմ ձեռքիցդ, փորձում եմ խոսել, սակայն չի ստացվում: Փորձում եմ ձեռքս հասցնել դեմքիդ, սրբել կարմիր, գեղեցիկ շրթերիդ վրայի սպիտակ հեղուկը: Ծանր ձեռքս երկար ճիգերից հետո մոտեցնում եմ դեմքիդ: Հանկարծ նկատում եմ, որ ձեռքիս վրա վերևից նույն սպիտակ հեղուկից է թափվել: Շուրթերս տաքացել են: Ուզում եմ ասել, որ քեզ հավերժ կսիրեմ, բայց բերանիս մեջ փրփուր է, ու հանկարծ սպիտակ մշուշը սևանում է...

\*\*\*

Ջրափոսի՝ ամպերի ու օդի պես գորշ ու պղտոր ջուրը աջ ու ձախ թռավ կոպիտ կարված զինվորական սև, երկարաճիտ կոշիկներից: Նա փախչում էր արդեն երկար տարիներ: Արդեն երկար տարիներ նա զգում էր ետևում շնչառությունը, ոտքերի ծայրը, լուրջությունը: Նա գիտակցում էր իր ողջ ուժեղությունը, սակայն նա փախչում էր: Նա գիտեր, որ իրեն հետևում են: Օր ու գիշեր, ամեն վայրկյան: Այսօր ամեն ինչ անսովոր էր: Գորշ օր, մառախուղ, երկրի վրա ծանր կախված սև ամպեր: Գոհն անձրև գար: Նա մի ներքին զգացում ուներ: Նա արագացրեց վազքը: Այժմ նրա համար վազելը դարձել էր կյանքի նպատակ: Նա միայն վազում էր: Վազելը նրան դարձնում էր ազատ, և նա իրեն չէր զգում: Ահա նրա առաջ մի մոխրագույն սար է, որի գագաթը մինչև լանջը մխրձվել է ամպերի մեջ: Իսկ նախքան սարին հասնելը անդունդ էր: Խորը, սև, ամեն վայրկյան կարծես պատրաստ կուլ տալու այն ամենը, ինչ կընկնի իր բերանից ներս: Նա մի պահ ոտքերում թու-

լութուն զգաց, ի դեպ, ամբողջ վազքի ընթացքում՝ առաջին անգամ, ապա հաղթահարեց վախը, հավաքեց իրեն և շարունակեց վազքը: Եվս մի քանի մետր, և անդունդը իր ողջ խորությամբ ու մռայլությամբ բացվեց նրա առջև: Նա վերջին անգամ խորը շունչ քաշեց և, թևերը թռչունի նման բացած, նետվեց անդունդը: Ընկնելիս կարողացավ մի վերջին հայացք զգել անդունդի եզրին: Նա տեսավ, որ իրեն ոչ ոք չէր հետևում: Նրա ետևում ոչինչ չկար:

\*\*\*

Թակուն եմ սև, բարձր դուռը, որի վրա փայտից հավերժության նշանն է փորագրված: Մի ակնթարթ սպասում եմ, ապա դուռը բացում է երկար սև շորերով, դեղին մաշկով, աչքերի տակ սև ներկած մի մաշկած տղամարդ: Նրա անհյուրընկալ, ոչինչ չասող հայացքը ինձ ներս է հրավիրում: Ջնարկածի նման առաջ եմ շարժվում: Դուռը ետևիցս ճռնչումով փակվում է, և ինձ թվում է՝ էլ դուրս չեմ գա այստեղից: Նեղ, երկար միջանցքի մուտքի մոտ երկու մեծ մոմակալներ են դրված, որոնց վրա մեղմ հանգչում են երկու տղամարդու մաշկի նման դեղին մոմեր: Սառնասիրտ, անվստահ քայլերով անցնում եմ միջանցքով և մտնում եմ սենյակ: Սենյակի հատակին կարմիր գույնով ինչ-որ նշաններ են գծված, որոնց կողքին էլի մոմեր են: Ես նկատում եմ, որ սենյակը լուսամուտներ չունի, բայց այն լավ լուսավորված է ամենուրեք վառվող մոմերով: Տարօրինակ նշանների կողքին կանգնած են դուռը բացող տղամարդու նման սև շորերով, բարձրահասակ մարդիկ: Իմ՝ սենյակ մտնելուն պես նրանք շրջվում են և իրենց սառը հայացքները ուղղում են իմ կողմը: Անցնում եմ առաջ ու նայում եմ տղամարդկանց սև աչքերին: Նրանց կողքով անցնում եմ և կանգնում նշանների մեջտեղի ազատ տեղը: Մարդկանցից մեկը մոտենում է պատի մոտ դրված արկղին, բացում է այն ու հանում այնտեղից մի փայլուն, կեռ ծայրով, մեծ թուր: Հետո նա վերցնում է թուրը և մոտենում ինձ: Բոլոր սևազգեստ մարդիկ միասին սկսում են երգի նմանվող ինչ-որ բառեր արտասանել՝ ինձ անհասկանալի լեզվով: Ես ամբողջովին մերկ կանգնած եմ, ուզում եմ գոռալ, փախչել, բայց կարծես մեկը մեխած լինի ինձ իմ տեղում: Մարդիկ վերջացնում են իրենց «երգը»: Հասնելով ինձ՝ թուրը ձեռքին մարդը դնում է այն իր գլխին, համբուրում է, անհասկանալի լեզվով ինչ-որ բան է ասում, հետո իջեցնում է ու կտրուկ շարժումով խրում աջ կրծքիցս ներքև, հանում է թուրը և արնահոսող վերքին մոտեցնում ոսկուց պատրաստված, վրան կարմիր, թափանցիկ քարերով մի գավաթ: Այն լցվում է կարմիր հեղուկով: Հետո արյունը դադարում է հոսել: Գավաթից սկզբում թրով մարդը, ապա մնացածը սկսում են կուլ-կուլ խմել արյունը: Հետո ես նստում եմ գետնին կարմիր նշանի մեջտեղում: Թրով մարդը մոտենում է ինձ, և ես վերջին վայրկյանին տեսնում եմ, որ նրա թուրը մոտենում է ձախ կրծքիս՝ ուղիղ սրտիս մոտ...

## Անահիտ Սարգիսեան (Փարիզ)

### Որտեղացի

ա

Ե՛ս սփիւռքահայ  
իսկ դո՛ւն  
հայաստանցի  
կը հարցնես ինձի.  
– Ո՞ր տեղացի.

Դո՛ւն հայաստանցի  
իսկ ե՛ս  
քիչ մը հալէպցի և քեսապցի,  
քիչ մը այնթապցի և պէյրուսցի,  
քիչ մը,  
քիչ մը,  
և տակաւին  
եգիպտացի և ֆրանսացի:

բ

Ե՛ս սփիւռքահայ  
իսկ դո՛ւն  
հայաստանցի  
կը հարցնես ինձի.  
– Ո՞րտեղն է նախընտրելի.  
այստե՞ղ,  
այնտե՞ղ,  
թե՞ այդտեղ:

Ե՛ս  
ինքզիքս հռչակած իշխանուհի  
առանց թագի  
առանց գահի  
որ  
փոխանակ բերդի մը մէջ ապրի  
երազ բերդ շալկած  
անվերջ կը թափառի  
այդտե՞ղ,  
այնտե՞ղ,  
և այստե՞ղ:

գ

Դո՛ւն հայաստանցի:  
իսկ ե՛ս կիլիկեցի,  
դուն տեղացի  
իսկ ես  
անտեղ

թափառական  
մի ոմն  
իշխանուհի:

### Չիշկապօտն

Երբ փոքր էի  
կը փափագէի  
անպայման  
խաղընկերներուս նման  
միգել ոտքի.

յաճախ փորձած էի,  
սակայն բոլո՛ր փորձերս ալ  
մի՛շտ ձախողած.

տարիները գլորեցան  
իսկ մանկական փափագները  
գրեթէ մոռցուեցան.

այսօ՛ր  
դէպի Սիւնեաց սարեր  
երթ ու դարձի ճամբուն վրայ  
ծաղիկներով ներկուած դաշտերուն մէջ  
վեր կը քաշեմ փէշերս  
վար կ'իջեցնեմ տաբատս  
և  
կը մխրճուիմ  
հազար գոյն ծաղիկներուն մէջ  
հարբեցնող բոյրը ռունգերուս մէջ.

անշա՛րժ բնութիւն  
դարերո՛ւ պատմութիւն  
անհատնում լռութիւն  
յաւերժութիւն  
տզզացող միջատ մը  
և վերջապէս  
գլգլացող չիշիկ մը.

այսօ՛ր  
դէպի Սիւնեաց սարեր  
երթ ու դարձի ճամբուս վրայ  
հազար գոյն ծաղիկներով ներկուած դաշտերուն մէջ  
երջանի՛կ եմ  
որ կը պատկանիմ  
այն սեռին  
որ պագած կը միգէ  
դարերու բոյրը  
ռունգերուն մէջ.  
անվարտիք իշխանուհի

*Բանաստեղծութիւններ` ծնած իմակագրութենէ*

# 44 Ուսանողական յուշեր

Արման Մարտիրոսյան  
Նա տեսավ, որ իրեն ոչ ոք չէր հետևում: Նրա ետևում ոչինչ  
չկար:

Անահիտ Սարգիսեան  
ուսանող էի  
այն տարիներուն  
երբ կարագի հերթը  
Երևանի  
մայթերն ու փողոցները  
կը լիզէր.

ուսանող էի  
այն տարիներուն  
երբ Երևանի մէջ  
մէկ  
երկու  
կամ երեք սրճարան  
գոյութիւն ունէր.

մի քանի ատամով  
մատուցող պառաւ կինը  
մաղձը երեսին  
կը բերէր սուրճը  
մատները գաւաթներուն մէջ մխրճած  
շրխկոցով կը տեղաւորէր  
սեղանին վրայ  
թափելով  
թափթփելով  
գաւաթներու պարունակութեան կէտը  
և երեսին մաղձը.

մէկ գաւաթը ճեղքուած  
ուրիշ մը կոթը կտորուած  
միւսներն ալ  
գրեթէ նոյն ճակատագրին ենթարկուած.

գաւաթին մէջ մնացած  
անախորժ պատկերներ ներշնչող  
թափանցիկ հեղուկը

պէտք էր ցնրուր խմել  
և  
մեծ-մեծ աղացած  
սուրճի կտորները  
լեզուին վրայէն հանել  
հաւատալու համար  
թէ  
մի քանի ատամով պառաւին մատուցածը  
իսկապէս սուրճ էր.

կտորած էր  
թափած էր  
սուրճի նման չէր  
կարևոր չէր.  
երջանիկ էինք:

*երջանիկ իշխանուհի  
ուսանողուհի*

## Յայաստանէն վերջին դարձիս

Օդանաւին մէջ  
իշխանական տեղ ունէի:  
Ծիշդ Արարատի կողքին....  
բարձրացայ, բարձրացայ,  
գրեթէ հասայ Արարատին,  
յետոյ կամաց-կամաց  
գրեթէ շոշափելի Արարատէն  
հեռացայ, հեռացայ,  
որբացայ....  
չեմ գիտէր թէ ո՞վ որբ է,  
ե՞ս թէ Արարատը....  
Քիթս ապակիին փակցուցած  
յոնգուր-յոնգուր լացի:

*արտասուքով  
աքսորուած իշխանուհի*

**Կարեն Մխիթարյան**

(Օ՝ Ջալոյանց)

**Դյուցազնապատում**

**Համառոտ ներածական՝ դյուցազնին հերոսից տարբերելու համար**

Իսկապես, հարց է ծագում. ինչո՞ւ չասել հերոս, ինչո՞ւ կիրառել կամաց-կամաց գործածությունից դուրս եկող տերմինը, որն այժմ կիրառվում է միայն ծանրամարտի մրցումներից հետո, այն էլ՝ երբ մերոնցից որևէ մեկը մեղալի է արժանանում: Այսօրվա մամուլում նույնիսկ տարին մի դյուցազն չես գտնի, այնինչ ո՞ր թերթը բացես, լիքը հերոս է:

Կարծիք կա, որ հերոսի սահմանումը սերտորեն առնչվում է սխրանքի հետ. որպես կանոն, հերոսը փրկվում է որևէ մարդու (ավելի հաճախ՝ մարդկանց խումբ) մահից կամ այլ տհաճություններից: Բայց այդ դեպքում թույլ տվեք հարցնել՝ լսե՞լ եք երբևէ որևէ դյուցազնի մասին, որն ամբողջ կյանքում պարապ-սարապ թրև գար: Կտրականապես դեմ եմ այդպիսի դասակարգմանը: Դյուցազնի և հերոսի տարբերությունը քաշային կարգերում է. 90 կիլոգրամից ծանր հերոսը մեխանիկորեն դառնում է դյուցազն: Անպայման պետք է նշեմ, որ երևույթը հակադարձ ընթացք չունի. դյուցազուները չեն նիհարում...

Իր կարճատև, բայց բովանդակալից կյանքի ընթացքում հերոսը, որպես կանոն, անհավասար պայքար է մղում հսկա թշնամու դեմ (քաշային տարբերությունն ընդգծում է սխրանքի մեծությունը) և, սովորաբար, հաղթում (կյանքի գնով կամ առանց դրա): Հիշեցնեմ, որ թշնամին կարող է լինել, ամենաշատը, հսկա. դյուցազուն կամ հերոս թշնամիներ չեն լինում, դա երեխայի համար էլ պարզ է: Եթե թշնամիները շատ են, օգտագործվում է *հրոսակ* բառը: Ոհմակ բառը օգտագործելու համար գրողը պետք է սովորականից ավելի բարկացած լինի: Ընդամենը այսքանը:

**Անսովոր առավոտ**

Նորից հավաքեցին, բերեցին այստեղ: Երեկոյան կտանեն կբաշխեն տներով... Հինգ-վեց տարի առաջվանից, ինկուբատորի ճտերի պես, իմ օրերը նմանվեցին իրար, և ընկճախտը գերազանցեց բոլոր սպասված չափերը: Չանձրացել ենք նույնիսկ ամենահաճելի դեմքերից, իսկ տհաճների մասին չարտահայտվեմ, ասեմ ուղղակի, որ ավելի շատ են: Ինչ որ է, նստած ենք, մեկ էլ հեռախոսը զանգեց թե չէ, Աբոն լսափողը վերցրեց ու՝ «Տիրոջ մերը...», իննին տաս պակաս մարդու կզանգե՞ն, բոզի վաստակ», – դանակը հանելն ու հեռախոսի լարը կտրելը մեկ արեց և... շարունակեց ձանձրանալ: Չայն

չհանեցինք. Աբոն միշտ սրտներիցս է խոսում:

Վաղորդայն սուրճը խմելը սուրբ գործ է: Հիմա բաժակը լվացած հետ եմ գալիս, Լյովը թե՛ Աբոյին տարան:

- Ընչի՞ տարան, արա՛, ընչի՞ համար:
- Դե... Երևի հեռախոսի, էլի՛:
- Բա մեզ խի՞ չուզին տանեն:
- Ա դե, ես ի՞նչ գիդեմ, ականջին փսփսացին, տարան:

– Բա չասի՞ր Արմենթելն ա խառնել, մենք հեռախոս վափշե՛ չունենք, դու մարտական ընգեր ես, թե օռաչ...

Ու կռիվը գնաց... Ի՞նչ ձանձրույթ, տուր թե կտաս շան ճակատին:

Հիմա, կռվից կշտացած, հավեսներս հանած, հեռախոսի լարն ենք կպցնում, որ ոստիկանություն զանգենք, մեկ էլ՝ Աբոյին բերին.

- Հոգաչափ շնորհակալ ենք, պարոն Ջարդարյան, կներեք նեղության համար, հուսով ենք, առաջիկայում էլ կօգնեք մեզ մասնագիտական առումով...
- Հարց չկա, տղեք ջան, լյուբոյ վախտ համեցեք: Գնացին:
- Աբո ջան, ես ի՞նչ խաբար էր:
- Տղեք, խոսք եմ տվե՛ մարդու բան չասեմ:
- Դե, մանրամասն պատմի, էդ երբվանի՞ց ենք մենք մարդ դառե...

Եվ Աբոն պատմեց առաջին հայ արիեստավարժ քիլերի և նրա անդրանիկ ու միակ զոհի նահատակության տխուր պատմությունը:

**Արևմտյան պատմություն**

Քաղաքի՝ բոլորովին կարևոր չէ թե որ թաղամասում, մի, տեսքից խոհանոցային մաղ հիշեցնող ավտոտնակի դիմաց, իրարից մոտ 20մ հեռավորությամբ, երկու դյուցազուների դիակներ էին ընկած: Մեկի ձեռքին բջջային հեռախոս էր, մյուսի՝ կանացի ձեռնային մի ծակ գուլպա: Ոստիկանների և բժիշկների առատությունը տեսարանին ժամանակակից դետեկտիվ ֆիլմի նկարահանման հրապարակի նմանություն էր տալիս, չնայած բոլորը լուռ էին ու շփոթված: Մոտեցող մեքենան իր վրա հրավիրեց հավաքվածների ուշադրությունը. Աբոյին բերեցին:

- Պարոն Ջարդարյան, միայն մի բան ենք խնդրում: Կարո՞ղ եք ապացուցել, որ էս ավտոմատից այ էս մեկն է կրակել:

Երկու դիակները միացնող երևակայական գծի ճիշտ մեջտեղում Կալաշնիկով-47 տեսակի, առանց խզակոթի մի ինքնաձիգ էր ընկած:

- Տղեք, ստե ի՞նչ կա ապացուցելու, հլա դրա աջ ձեռի ցուցամատին ու բթին նայեք: Շորերը որ հանեք,

փորհին ու դոշին էլ կապտած տեղեր կգտնեք: Սաղ որ ըլներ, կարելի էր էս ավտոմատի սղոցած պրիկլաղը ոռը կոխել, որ հասկանա, թե ընչի համար ա: Դե, էդ գլխին քաշելու մասկի մեջ էլ մի էրկու հատ իրա մազերից կգտնեք, էլի... Բայց ինչ նման ա Թոխաթյան Յրանտին:

– Բա մենք էլ կարծում էինք՝ ինքն ա, բայց սա շատ չաղ ա: Անչափ գոհ ենք քեզնից, պարոն Ջարդարյան, որ թուղթը ուղարկենք, կստորագրեք, չէ՞: Մի խնդրանք էլ ունենք. էս մեր ատրճանակները մաքրելու համար չենք կարողանում մինչև վերջ քանդենք, չե՞ք օգնի: Թթի արաղը՝ մեզնից:

– Հարց չկա, տղեք ջան, բայց մի 3-4 մետր էլ հեռախոսի լար ա պետք, փտե՞լ ա, ի՞նչ ա եղել, անընդհատ կտրվում ա:

– Բա էդ հա՞րց ա, ցավդ տանեմ, հենց բաժնից էլ կվերցնենք, գնացինք:

### Տեղայնացում

Արևմտյան զարգացած երկրների հարուստ փորձի փոխառումը ես հերոսություն եմ համարում: Վերը շարադրվածից հասկանալի է, որ փոխառողին, քաշից կախված, համարում եմ հերոս կամ դյուցազն: Կարևոր չէ՝ երևույթը դրական է, թե բացասական, դա առանձին քննարկման խնդիր է... Այլ է հարցը տեղայնացման մակարդակի առումով. այստեղ պարզաբանումներ եմ անհրաժեշտ:

Առաջին հայ, արևմտյան տիպի վարձու մարդասպանը բավականին անշնորհք անձնավորություն էր: Նկատած կլինեք, որ այդ տիպի մարդիկ կյանքում ամեն ինչ անշնորհք ձևով են անում: Դա վերաբերում է նաև Գևորգի առևտրական գործունեությանը, որով նա փորձում էր զբաղվել՝ նախքան արևմուտքի հարուստ կենսափորձի տեղայնացման անցնելը:

Ինչևէ, ընտանիքն աճել էր, պարտքերը կուտակվել, իսկ կրպակը եկամուտ չէր բերում: Կրկնում եմ, դյուցազունները չեն միհարում, և Գևորգը ընդունեց իր առաջին սպանության պատվերը: Հոգու խորքում կասկածելով, որ իրեն ամեն ինչ չէ, որ հաջողվում է, նա երկու շաբաթ շարունակ արևմտյան մարտաֆիլմեր դիտեց և, կարճ մտորելուց հետո, սղոցեց կրպակի վաճառքից առաջացած գումարով գնված ինքնաձիգի խզակոթը: Այն, որ գիտելիքն ուժ է, Գևորգն ինչ-որ տեղ լսել էր, բայց այն, որ ամեն տեսած բան գիտելիք չէ՝ նրա ներկայությամբ ոչ ոք չէր ասել:

Երկրորդ փոխառումը նույնպես ֆիլմից էր. Գևորգը վերցրեց կնոջ ձմեռային հաստ գուլպաներից մեկը և աչքերի համար երկու անցք բացեց: Ավելորդ չեմ համարում նշել, որ բերանի համար կտրվածք անել մոռացավ և հետագայում, երբ տուժողը մոտեցավ դեպքի

վայրին, Գևորգն արդեն ծանր էր շնչում:

Տուժողի մասին ասեմ միայն, որ վատ տղա չէր. գործերը գերազանց էին գնում, կյանքից գոհ էր, ուղղակի մրցակիցները շատ էին և, ի վերջո, նրան «պատվիրեցին»...

Այդ առավոտ էլ, սովորականի նման, իր ավտոտնակի դարպասն էր բացում, երբ հարևան շենքի շքանուտքից հևիհև մոտ վազեց շնչահեղձ Գևորգը ու, սարսափելի ցնցումներով, ինքնաձիգի ամբողջ պահեստատուփը կրակեց հիմնականում ավտոտնակի դարպասին: Ինչո՞ւ՝ հիմնականում, որովհետև մի գնդակ, այնուամենայնիվ, դիպավ տուժողի ոտքին...

Կրակահերթը դադարելուն պես, արդեն ոչինչ չհասկացող Գևորգը դեմ նետեց ինքնաձիգը ու փորձեց փախչել, բայց մի քանի քայլ չարած՝ կաթվածահար եղավ ու փռվեց՝ վերջին շարժումով, արդեն ենթագիտակցորեն, դեմքից պոկելով անտանելի գուլպան:

Ի փառս երկրորդ դյուցազնի, պետք է հայտնեմ, որ նրա շփոթմունքը շատ կարճ տևեց: Արյան շիթը կասեցնելու համար ծախ ձեռքով ազդրը ամուր սեղմած՝ աջով նա ասֆալտին դրած բջջայինից զանգեց տուն, հայտնեց զոքանչին, որ ավտոտնակի մոտ իր վրա մահափորձ է եղել, ու խնդրեց շտապ օգնություն կանչել:

– Շուն շան որդի, էլ հնարելու բան չէ՞ր մնացել... Սրիկա՛, աղջկաս բախտը քոռուփուլչ արիր, բոզարած անասուն, թռնե՛րս որբ եմ մեծանում...

Շարունակելն, ըստ իս, իմաստ չունի: Նշեմ ուղղակի, որ մենախոսությունը երկար տևեց, և տուժողը հասցրեց արյունաքան լինել, բայց նրա վերջին բառերն այնքան ազդեցիկ էին, որ կարմրատակած զոքանչը, խոհանոցային դանակը ձեռքին, վազեց դեպի ավտոտնակ, որտեղ և հայտնաբերեց վերը նկարագրված ողբերգական տեսարանը...

### Վերջաբան

Երկու հսկա, երկու դիակ... Էլ որտե՞ղ է եղել...

Ու ես հիշեցի Կուլիկովյան ճակատամարտին նախորդած՝ վիթխարահասակ Չելուբեյի և դյուցազն Պերեսվետի մենամարտը, որում երկուսն էլ զոհվեցին: Խրտնած մժույզը դեպի թաթարական զորքը քարշ տվեց թամբից կախված Չելուբեյի դիակը, իսկ Պերեսվետը մնաց թամբի վրա (սպանված դյուցազնը վերադարձավ իր գունդը)...

Այսպես ուրեմն: Հերոսից դյուցազն անցումը կատարվում է քաշի ավելացմամբ, բայց անպայման պետք է մի ուղղում մտցնել. քաշը պետք է ավելանա մկանային զանգվածի տեսքով, այլ ոչ թե՝ որովայնի մասում կուտակված ճարպի, երակների լայնացման և կախ հետույքի:

**Հովհաննես Թեբզոյյան**

**00**

**11**

Երկրաշարժից վախենում եմ, մանավանդ՝ տասնմեկ բալանոցից: Դրա համար ուզում եմ բնակարանս վաճառել՝ առանձնատուն գնել: Ավելի ապահով կլինի: Պատերը կհաստացնեն, առաստաղը ամրաձողերով կպնդացնեն, կահույքը կտեղադրեն այնպես, որ չշարժվի:

Իսկ եթե երկրաշարժի ժամանակ տանը չլինե՞մ: Հաշմանդամի սալակին հայտնվելը մեկից մեկ է: Տեր Աստված, բա արտաքինս... Ի՞նչ կկատարվի, եթե մաշկս վնասվի, դեմքիս՝ սպիներ ու կարեր հայտնվեն: Այն էլ այնպիսիները, որ նույնիսկ վիրահատությամբ հնարավոր չէ ուղղել: Սարսափելի է...

**10**

Տասն անց է գրո-գրո րոպե: Ջրո-գրոն չեմ սիրում: Հասկանում եմ՝ ինչու եմ զուգարանների դռներին գրո-գրո գրում: Իբր, եթե մի գրոն քիչ է, մյուսն էլ՝ Ձեզ... Կատակեցի... «Ջրոյից սկսել»՝ այսպիսի արտահայտություն ամբողջ կյանքում միայն ձեռնաշարժությամբ զբաղվող տհասը կարող էր հորինել:

Տասն անց է գրո-մեկ րոպե...

Մինչև մարզանք անեն, լողանամ, մարմինս յուղերով, անութներս՝ համապատասխան օժանելիքով օժեն, սափրվեմ, հագնվեմ՝ տասնմեկը կդառնա: Կարճեմ, կնախաճաշեմ, սպորտային նորություններն ու հանրահայտ մարդկանց անկողնային բամբասանքները կլսեմ, ատամներս կխոզանակեմ ու դուրս կգամ տնից:

Նախընտրում եմ երկաթգծով քայլել: Նույն ճանապարհն ամեն օր անցնում եմ: Չեմ ձանձրանում, որովհետև սիրում եմ տեղանքն ուսումնասիրել... Ըհը... Ուտքերս ակամայից լարվեցին, փշաքաղվեցի... Շրջադարձի վրա, մի աչքը՝ պղնձե արևին կծկվել-սատկել էր ճերմակամազ, կեղտոտ մի շուն: Գանգը ծակ էր: Հրածիզը դիպուկ էր կրակել: Ու՞ր թեքվեմ, ե՞տ գնամ... Լեշի կողքով չեմ կարող անցնել, վրաս դուրս կտա: Ստիպված բարձրացա գործարանի պարսպի վրա ու սատակը շրջանցեցի:

Երկաթուղու տարածքում միակ հավաքարարը բնությունն է: Եթե աղբն ու լեշը չքայքայի, ապա համաճարակը հանգիստ կտեղավորվի մոտակայքում և ապրող բնակիչների տներում:

Բայց բնությունը ձմռանը դանդաղում, լավ չի

աշխատում: Շատ-շատ՝ աղբը ձյունով ծածկում է, որ մշտապես դժգոհ ու քննադատող հայացքները հրճվանքից չփայլեն:

Ըհը, գործարանի ժանգոտած դարպասի մոտ մի այլ շուն է փռվել: Սրա գանգն էլ է ծակ...

Չորս ամիս է անցել, բայց հողը դրան դեռ չի քայքայել, չի կերել: Մի ժամանակ բնակելի վայրերում շուն խփելն արգելվում էր: Ձոհերին հավաքում, տանում էին համապատասխան մի տեղ ու... Ինձ այդպես են ասել: Իսկ հիմա՞... Երևի այդ գործով զբաղվողներին թվում է, թե վերջին տաս-տասներկու տարիների թոհուբոհից հետո ժողովուրդը երբեմն կրակահերթերի մեղեդին վայելելու կարիք ունի: Լավ, սպանում են՝ հասկացանք, գոնե մարմինները թաղեն: Արարիչն էլ է մազալու: Շանն ստեղծելիս գիտեր, որ շան կյանք է ունենալու, վերջում էլ շանսատակ է լինելու: Գոնե այնպես արարեր, որ խեղճերը փոս փորել կարողանային: Հիմա ոչ շիրիմ ունեն, ոչ գերեզմանատուն:

Գլուխս ցավեց... Հիմար մտքերով ընկա ու նորից ուշացա...

**9**

Ինը տարեկան էի, երբ հայրս, ձեռքս բռնելով, բռնցքամարտի դպրոց տարավ: Դաստակս այնպես էր սեղմել, որ արյունս երակներիս մեջ կանգնել էր: Մարզիչը, կապկի նման թռչկոտելով, վերից վար չափեց ինձ ու գլխով արեց.

– Իսան չի, բայց որ բարեկամիս ծանոթն ես՝ կընդունեն...

Ամեն օր, պարապմունքի գնալիս, դաստակս ցավում էր: Ցավը սկսվում էր ճանապարհին ու անցնում էր, երբ դպրոցի շենից ներս էի մտնում: Հաճույքով էի մարզվում: Նպատակս ուժ հավաքելն ու զուգահեռ դասարանի տղերքին քացու տակ գցելն էր: Օր օրի պնդանում էի: Երես չէին տալիս, բայց աչք-ուներով փոխանակած «երկխոսություններից» և ուսիս հասցրած բարեկամական թփփոցներից հասկանում էի, որ գոհ եմ:

Անցավ ինն ամիս:

– Ուզում եմ քեզ հետ խոսել՝ տղամարդավարի, – մարզիչս դեռ կապկի նման թռվում էր, – հը՞, ո՞նց ես որոշել. կյանքդ բոքսի հետ կապելու՞ ես, թե՞ չէ...

– Կապելու եմ, – ասացի ու... ընկա: Տվեց՝ քիթս ջարդեց: Երկինքը պտտվեց՝ ծեփվեց գետնին:

– Հիմա նոր մարդ ես, – պառկեցրել՝ արյունն էր սրբում, – նորից ծնվեցիր... Բոքսը քեզ մարդ կդարձնի...

Քթանցքներիս մեջ խցկած բամբակները հանելով՝ շարտեցի մարզիչիս լուսանկարի վրա:

Անցավ ութ տարի...

– Հույսս դու ես, – մարգիչս թռվռալը վերջացրել՝ կապկի նման կախվել էր մարգածողից, – եթե կրվեցիր՝ վերջ. ես ինձ կարամ կախեմ...

Դիտավորյալ կրվեցի: Հակառակորդը մժեղ էր, մի մատով կարող էի ճգնել, բայց պարտվեցի:

– Արա, էս ի՞նչ արեցիր, – մարգիչս, գոտին ծոծրակի վրա էր գցել, երևի իրոք ուզում էր կախվել, – քո վրա հույս էի դրել...

Դոշերը հավաքեցի ու քիթս քթին հպելով՝ ֆշշացրեցի.

– Սրա մուռը հանեցի...

– Չէ, մարդ չես դառնա, – գոտին, օձի նման գալարվելով, փաթաթվեց մարգիչիս պարանոցին, – չես դառնա...

Է, թող չդառնամ, բայց մաշկս անվնաս կմնա՞... Կմնա...

8

Այսօր դեմքիս բուսնած բշտիկների թիվը ութի հասավ: Հարկավոր է շտապ ինչ-որ բան ձեռնարկել: Երկու օրից կարևոր հավաքույթի եմ հրավիրված, տեսքս անբասիր պետք է լինի:

Ամենամեծ ու յուզուտ բշտիկը քթիս վրա է: Հաստատ ինչ-որ մեկը սիրահարվել է ինձ վրա:

– «Վրա» չեն սիրահարվում, – կկծեր բարեկամիս մայրը, – ոչ կարդում, ոչ ինքնագարգացմամբ եք զբաղվում: Եթե մեր տանն ուզում եք խաղ խաղալ, ուրեմն բարի եղեք խաղի ժամանակ խոսել միայն մաքուր, գրական հայերենով: Համաձա՞յն եք... Նու, դավայտե...

Ի դեպ, բարեկամիս մասին: Դիվանագետ է: Ծանոթացել ենք երկու տարի առաջ, չեմ հիշում ցուցահանդեսի բացմա՞ն, թե՞ գրքի շնորհանդեսի ժամանակ: Կինը ցածրահասակ, թխահեր, դուրս պրծած աչքերով գեղջկուհի էր: Հայացքը բամբասանքով ու երեսպաշտությամբ լեցուն քաղքենիական աղբանոցից այն կողմ չէր անցնում (ինչպիսի՞ պոետիկ արտահայտություն):

Տոթ էր: Սկանուտ իրանս ու կուրծքս կիպ գրկող վերնազգեստ էի հագել: Գեղջկուհին մի քանի շրջան շուրջս պտտվեց ու... ընկավ: Տուն տարան, ասացին՝ իբր արյան ճնշումն էր բարձրացել:

Որոշ ժամանակ անց նորից հանդիպեցինք: Բավականին առաջադիմել էր: Կարողանում էր կցկտուր մտքեր արտահայտել: Շարժումները թեև կոպիտ էին, բայց զգացվում էր, որ ինչ-որ մեկը նրան ճիշտ քայլել և խոսել էր սովորեցնում: Երբ մոտեցավ, թվաց՝ հարբած է:

– Քթիս պզուկ է դուրս տվել, – ասաց՝ մատները

կոտրատելով, – գիտեմ, զգում եմ, որ տակը... որդ կա... Միսս ուզում է ուտի... Ես դրա մերը...

Հայիոյեց ու դանակով քիթը ծակեց: Տարան հիվանդանոց: Երկու օր անց բարեկամս նրան ուղարկեց արտասահման: Մեկ ամսից գեղջկուհին վերադարձավ բոլորովին նոր, եվրոպական քթով: Հարաբերական անդորր տիրեց: Սակայն բարեկամիս քիչ թե շատ խաղաղված հոգին շուտով նորից պղտորվեց: Այս անգամ կինը այտն էր ծակել:

– Ասում է՝ իբր մաշկի տակ որդեր կան, – բարեկամիս աչքերը հուզմունքից այրվում էին, – դրա համար դեմքը ծակեց: Ես մեղք չունեմ... Ի՞նչ անեմ... Գժանոց չեմ կարող ուղարկել, կարիերայիս կվնասի... Ստիպված կատարվածը պետք է թաքցնեմ: Դու էլ ոչ մեկին մի ասա կամ եթե ասելու ես՝ իմ անունը մի տուր...

Ես գիտեմ, թե ինչ որդ էր խլվլում գեղջկուհու մաշկի տակ: Եթե մարդը փորձում է դուրս գալ իր կաշվից ու թաքնվել ուրիշ լաքած-փայլեցված կաշվի տակ, ուրեմն ներսի դեպ գործերը լավ են: Այդպիսինը կամ մերձավորների հոգին կհանի կամ ինքնածակությամբ կզբաղվի...

Մաշկիս տակ որդ չկա, բայց օրգանիզմիս մեջ ինչ-որ բան խախտվել է: Ահա դեմքիս այտուցման պատճառը: Ութ բշտիկ...

7

Ճանապարհը նույն է: Սատկած շների քանակը երկուսով ավելացել էր: Երկուսն էլ աչքերը հառել էին պղնձե արևին: Առաջ անցա: Մտքերով տարված գնում էի, հանկարծ զռնոց լսեցի: Շուն էր: Արհամարհական հպվեց ոտքիս ու պոչը խաղացնելով՝ փախավ-զնաց: Սրան տես... Փողոցային քոտոտ հայվան: Քիչ էր մնում վագեի ու քացով խփեի հետույքին:

Կվնասար ու կսովորեր մեծերին հարգել:

Տուն հասա: Դեմքիս մաշկը վառվում էր, մինչև չլվացվեմ՝ չեմ հանգստանա: Այտերս սպիտակ են, ասես մոմից լինեն: Մոմ ասացի ու հիշեցի: Անցյալ տարի ինչ-որ մեկի խելքին փչել էր մեր ետ ընկած քաղաքում մոմե տիկնիկների ցուցահանդես բացել: Բացմանը ներկա էի: Նայում էի ու մտածում՝ «Որ՞ ի՞նչ»: Ի՞նչ կարիք կա հանրահայտ մարդկանց մոմե կրկնօրինակները ձուլել: Կարիք կարծես չկա, բայց խորհուրդն, ըստ իս, հետևյալն է. մարդն ու մոմը իրար շատ նման են: Չէ, բարոյականության քարոզներ կարդալով ձեր զահլան չեմ տանի: Ո՞վ է ասել, որ մարդը, հանուն հանրության, պարտավոր է մոմի նման այրվել: Այս դեպքում Դարվինի ուսմունքը կարելի է հերքել (գիտունիկները չկարծեն, թե տեղյակ չեմ, որ այդ ուսմունքն արդեն հերքվել է) ու առաջ քաշել մարդու՝ էշից առաջանալու վարկածը:

Բայց նմանություն, այնուամենայնիվ, կա: Մարդը կազմավորվում է մոտի կաթիլների նման կաթիլներից, դյուրաբեկ է, շուտ բռնկվում և հեշտությամբ մարում է:

– Տղամարդն էլ իրեն այդքան կիտակի, – կրեմի նոր տուփը տեսնելով՝ մայրս փնթփնթաց, – եթե այսպես շարունակես՝ ժամկետից շուտ կծերանաս:

Է, մայրիկ, մայրիկ... Տարիքը դեկորացիա է, որը թաքցնում է մարդու ներքին այլափոխությունը: Մարդը դրա դեմն ամրել չի կարող, որովհետև ծնվելիս արդեն գիտի, որ ծերանալու է: Մեր ուղեղը ճաք է տալիս գոյանալու պահին: Սոսնձել հնարավոր չէ: Սոսինձ ասացի ու հիշեցի: Ավետարանի թերթերն անհրաժեշտ է սոսնձել: Վայ, մոռացել էի: Անցյալ տարի այս թիթեռը բռնեցի ու դրեցի գրքի մեջ: Չորացել է՝ էջին ճշգրտությամբ լուսանկարելով իր կաղապարը... Կաղապարը, հոգի՞ն կամ ներքինը թաքցնող դեկորացիայի արտաքին շերտը...

6

Առավոտյան ժամը վեցն էր, երբ տուն վերադարձա: Դուռը բացվեց, շենին կանգնած էր մայրս: Գիշերանոցով էր, ճերմակող մազերը թափված էին կծկված ուսերի վրա:

– Ամբողջ գիշեր չեմ քնել, – ձայնը չոր էր, ասես դամբանական էր կարդում, – ասացի՝ շուտ արի... Ու՞ր էիր...

- Կարծես չգիտես, թե ուր էի...
- Մինչև լույս ինչի՞ մասին էիք խոսում...
- Ամեն ինչի, – վայրկյան առաջ ուզում էի ազատվել հագուստների բեռից, – գիտես, որ հավաքությո՞թի գնում ենք տաս-տասնհինգ հոգով...

– Ամբողջ գիշեր չեմ քնել, – կրկնում է մայրս, երևի շատ է ուզում, որ պատճառը հարցնեն:

- Քեզ ի՞նչ է եղել...
- Ժամը մեկին կրակոցից վեր թռա... Էլի շուն էին խփում...

Միգելու անզուսպ ցանկությունս միանգամից վերացավ:

- Ի՞նչ շուն... Ե՞րբ...
- Ժամը մեկի-երկուսի կողմերն էին...
- Բայց, – տազնապը ցեցի նման քրքրեց հոգիս, – չի կարող պատահել...

– Հոգնած ես, – մայրս քնքշանում, բնագղաբար շոյում է գլուխս, – գիտեմ, սպանել չի կարելի, կենդանիները մեր բարեկամներն են... Իսկ տականքներ կան, որոնք դա չեն հասկանում... Քնիր՝ կխաղաղվես... Ուզու՞մ ես՝ նախաճաշիր, նոր քնիր...

- Մամ, հասկանու՞մ ես...

– Շատ զգայուն ես... Հիմա սպանել՝ սպանել են... Ի՞նչ անենք... Մյուս կողմից որ նայում ես՝ ճիշտ են... Թափառական շները շատացել են, համաճարակի բուն են... Երեխաներին վախեցնում են... Հիշու՞մ ես... Քանի՞ տարեկան էիր, երբ շունը քեզ կծեց, – մորս մազերը բիզ-բիզ են կանգնում, – վայ, էս ի՞նչ էր... Լեղիս ճաքեց... Մի տես, թե էդ ո՞վ է առավոտ-գիշերով դժժում...

Հարևանուհիս, շքամուտքի աստիճանների վրա կանգնած, ճչում էր: Դուրս վազեցի: Աղբարկղի մոտ տղամարդու դիակ էր ընկած: Կատունները նրա գլխի շուրջ հավաքվել, աղեկեզ մլավում էին: Ոտքերս դողացին, բայց ստիպեցի ինձ մոտ գնալ: Գլխի տակ արյան լճակ էր գոյացել: Քունքին չորացած վարդ հիշեցնող, խանձված վերք կար...

5

Հինգ, չորս, երեք, երկու, մեկ... Ազուռ, փոսիկ, փոսիկ, խաչ, ազուռ, ըհը... Խաչի վեցնոցը կղնեմ աղյուսի յոթի վրա... Ազուռի տուզը դուրս եկավ... Հինգ, հինգ, հինգ...

Սպանվածը հինգերորդ հարկի հարևանն էր: Հարձակվել, փորձել էին թալանել... Դիմադրել էր, դրա համար էլ գանգը ծակել էին... Գնացի՝ տեսա... Հոգին ավանդել էր գործարանի դարպասի մոտ, աջ աչքը՝ պղնձե երկնքին հառած:

Ազուռի ութ, խաչի աղջիկ... Ըհը, աղյուսի տղան կղնեմ խաչի աղջկա վրա... Փոսի տուզը դուրս եկավ... Վախճանվածի դեմքն արտացոլվում էր ապակե լիալուսնի վրա: Արտացոլանքից նկարիչը դիմանկար էր անում, որ երեկոյան ժամը տասնյոթին, այսինքն՝ հինգին, հոգեհանգիստը սկսելուց առաջ, նկարը կախեն հյուրասենյակի պատից:

Այրին, փիլիսոփայության դասագրքերը գլխի տակ, հանգիստ պառնկել էր:

– Գիտեմ, դժվար է, – զոքանչը պատերն էր լվանում, – ջահել անուսին ես կորցրել... Բայց խնդրին այլ կերպ, փիլիսոփայորեն մոտեցիր...

– Մամ, ինչու՞ սպանեցին... Ու՞մ էր վատություն արել, – այրին արցունքները հավաքում էր օձանելիքի սրվակի մեջ, – հերիք է... Փոխանակ ինձ մխիթարես՝ հատակն ես լվանում...

Պարզվեց ճարտարապետը մեր շենքը սխալ է նախագծել: Առաստաղի տեղում հատակն են կառուցել, հատակի տեղում՝ պատերը: Ահա թե ինչու էր զոքանչը պատերը լվանում:

– Դու ինչքան կարող ես արտասովոր, – խրատում էր աղջկան, – շատ արտասուքը կթեթևացնի հանգուցյալի հոգին: Ուզու՞մ ես՝ սրվակի փոխարեն դույլ տամ...

– Շներին են էղպես՝ վայրենավարի խփում, – այրին սրվակի պարունակությունը շրջում է փիլիսոփայության դասագրքերի վրա, – դու էիր ասում, չէ՞, որ երկաթգծի վրա սպանված շուն կա... Քիչ առաջ ամուսնուս համեմատեցիր գործարանի դարպասի մոտ փռված շան հետ:

– Ոչ, ի՞նչ եք ասում, – արդարանում են ու զգում, որ կեղծիքից ուղեղս ճաքճքում է, – ո՞վ է ձեզ ասել...

– Սև շունն ասաց... Նա, որը երկու օր առաջ արհամարհական հպվեց ոտքիդ ու պոչը խաղացնելով հեռացավ...

– Սուտ է, – գանգիս ռելիեֆը ծածկվում է յոթ բալանոց երկրաշարժից, – գլուխս ինչու՞ է ցավում...

Ազուռի յոթ, խաչի յոթ, փոսիկի տաս, փոսիկի չորս ու հինգ անորոշ խաղաքարեր՝ սատկած շների ու վախճանված հարևանների նկարներով...

Գնամ սողայաջուր խմելու... Դուռը բացում են, որ դուրս գամ, բայց ճերմակ սավանով փաթաթված հանգուցյալն ինձ ետ է հրում...

– Մորգից են գալիս՝ ժամանակ չունեն՞... Ուշադիր լսիր, թե ինչ են ասում... Պատից լուսանկարս կհանես, տեղը երկաթգծի վրա սատկած շան նկարը կկախես... Ես ի՞նչ պառավական գուշակությամբ ես զբաղվում... Դիահերձարանից որ գամ, մինչև թռչելս մի գիշեր կա... Բլոտ կխաղանք...

Աղյուսի տուզ, խաչի տուզ ու հինգ ճաքճքած նուռ...

Արթնացա... Միշտ այդպես է, երբ քնած ժամանակ կռակիս վրա են շրջվում՝ մղծավանջը ծակծկում է ուղեղս...

Վեր կացա, լույսը վառեցի: Նուռ չուտե՞մ... Սառնարանի դուռը բացեցի... Վախեցած նռները փախան... Ափիս մեջ կծկվեց մի խեղճ, ճլորած մանդարին...

4

Չորս տարեկան էի, երբ մեր բակում ապրող շունը կծեց ինձ: Փողոցային կեղտոտ լիրբ էր: Փոքր երեխա էի, բայց հիշում են, թե ինչպես էր ընկել հարևանի հովվաշան ետևից:

– Վալող, – հարևանուհին ամեն օր խրատում էր ամուսնուն, – աչքդ շան վրա պահի... Որ էդ քոսոտ էգի հետ շուլալվեց՝ էլ վերջ...

Վալողը չկարողացավ աչքը շան վրա պահել, և արդյունքում գտարյուն, ազնվացեղ հովվաշանից անհայտ ծագում ունեցող էզր չորս լակոտ ծնեց: Երեքը սատկեցին, մեկին էլ հարևանուհիս սպանեց:

Այդ օրը մայր շունը կատաղած էր: Խաղում էի, երբ հարձակվեց ու... Ա՛... Ա՛... Ա՛... Ա՛... Ա՛...

Մայրս էր ճչում: Սափրվելը թողեցի՝ վազեցի

հյուրասենյակ:

– Ի՞նչ է եղել, այ կնիկ, – սրտիս խփոցից հասկացա, որ ուղեղս շտապ օգնության կարիք է զգում:

Մայրս ջութակի տուփը ձեռքին քարացել էր:

– Ես ոչինչ չէի փնտրում, ազնիվ խոսք, – ձայնը բարակել, ծվծվան էր դարձել, – ուզում էի փոշիները վերցնել ու...

– Ի՞նչ ես քիթդ ամեն տեղ խոթում, – ուղեղս կարգադրեց բարկանալ: Ըստ երևույթին կարծում էր՝ հարձակում գործելով կկարողանա իմ պաշտպանությունն ապահովել:

– Դեռ գոռում ես, հա՞, – մայրիշխանության գրահը կասեցրեց հարձակունս, – սա ի՞նչ է՝ բացատրիր, թե չէ... թե չէ՝ չգիտեմ, թե ինչ կանեն...

– Չե՞ս տեսնում, թե ի՞նչ է...

– Ապրես, կույր էլ դարձա... Հարցն այն չէ, թե սա ի՞նչ է, հարցն այն է, թե սա ինչ է...

– Ինչ որ է, համենայն դեպս հիստերիայի առիթ չեն տեսնում...

– Հիմա ամեն ինչ պարզ է, – մայրս սկսում է խելահեղ արագությամբ պտտվել սենյակում, – հիմա հասկանում են, թե գիշերներն ուր ես գնում, հիմա հասկանում են, թե... թե... թե ո՞վ սպանեց հարևանիս...

– Ո՞վ սպանեց...

– Միայն չասես, թե դու... Ուզու՞մ ես ասել... Դու ես սպանե՞լ...

– Ջան... Որդուդ մարդասպան էլ դարձրեցիր...

Մայրս արգելակելով՝ մեխվում է տեղում:

– Ի՞նչ... Ուրեմն ճիշտ է... Ես այդպես էլ գիտեի...

Ոսկու գրամը չգիտե՞ս ինչ արժի...

– Ինչի՞դ է պետք...

– Ինչ ունեն-չունեն կծախես, տունս էլ կփոխեմ, բայց չեն թողնի, որ դու բանտում փոտես...

– Ի՞նչ բանտ, ի՞նչ բան... Այ մեր, հանգստացիր, հանգստացիր ու լսիր...

Ձեռքից բռնում, նստեցնում են բազմոցին:

– Հիշու՞մ ես երեկ առավոտյան ովքեր եկան մեր տուն...

– Ովքե՞ր... Հա, էն գինվորականները...

– Հա-հա... Հիշու՞մ ես, չէ՞, որ տաս-տասնհինգ րոպե զրուցում էինք...

– Քսան րոպե... Քսան րոպե սպասեցի՝ մինչև եկար-նախաճաշեցիր...

– Հատուկ հանձնարարությամբ էին եկել: Ասում էին, որ հարևանիդ սպանությունը պատահականություն է: Կազմակերպված հրոսակախմբի գործ է...

– Վայ, որ էդպես է՝ գնամ խանութ, մի ամսվա ուտելիք առնեմ, որ...

– Որ՝ ի՞նչ...

– Որ միջև հրոսակախմբի վնասագերծելը տնից դուրս չգանք...

– Այ էդ վնասագերծողներից մեկը ես եմ...

Մորս շարժիչը կրկին աշխատեց: Նրան բռնելու հույսով վազում էի տնով մեկ:

– Լսիր, մամ... Ախր երեք տարի կրակել եմ սովորել... Մերժել չկարողացա... Հանգիստ եղիր՝ մեռակ չեմ լինի... Լավ էլ վճարելու եմ...

Մայրս շնչասպառ նստեց բազմոցին: Ծնկի եկա նրա առջև:

– Դե ի՞նչ, – աչքերը խոնավացան, բայց ձայնը խրոխտ ու ոգեշունչ դարձավ, – եթե մարդկության պաշտպանության համար է՝ չեմ կարող արգելել... Գնա գավակս, հայրենիքը քեզ չի մոռանա...

3

Հույսս դու ես: Նման դեպքերում մարդ ոչ այնքան ընկերոջը, որքան զենքին պետք է վստահի: Բայց առավել կարևոր է, որ զենքը քեզ վստահի: Ամեն օր երեխայի նման խնամում եմ փայտե կոթով երկաթե բարեկամին... Երեկվա կատարվածն ինձ երբեք չեմ ների: Ձենքը միշտ կրկնակի կողպեքով գաղտնարանում պետք է պահել: Մորս ի՞նչ խելքին փչեց բացել ջութակի տուփը: Երբ փոքր էի, ուզում էր, որ ջութակահար դառնամ:

- 1. Ավտոմատի քաշն առանց սվիչի - 3600 գրամ
  - 2. Ուղիղ գծով կրակոցը - 350 մետր
  - 3. Հրաձգության հեռավոր նպատակակետը - 1000 մետր
  - 4. Վազող թիրախի վրա - 525 մետր
- Մինչև հինգ մետր վազող թիրախին մոտենում եմ: Հույսս դու ես...

2

Կեսգիշեր էր, երբ տնից դուրս եկա: Աղբանոցի մոտով անցա ու լապտերս վառեցի: Արյան բծերը դեռ երևում էին: Ափսոս, հարևանս լավ տղա էր: Երկու-երեք տարի առաջ էր արտասահմանից վերադարձել: Ասում էին՝ բանկային գործունեությամբ է զբաղվում, մեծահարուստ է: Ավելի ճիշտ՝ էր:

Ճանապարհը նույն է: Երկաթգիծ, գործարանի պարիսպ, ժանգոտած դարպաս: Շրջադարձին չհասած՝ տարօրինակ աղմուկ լսեցի: Թփերի կողմը գնա՞մ... Ուրքս ինչ-որ բանի դեմ առավ: Թու, սատկած շուն էր: Էլի վրաս

դուրս կտա: Թռա լեշի վրայով: Խշխշոցը կրկնվեց: Չայնը դարպասի կողմից էր գալիս: Ավտոմատս լիցքավորելով՝ առաջ անցա: Ապակե լիալուսնի վրա արտացոլված ստվերն հետզհետե լայնացավ ու դանդաղաքալ մոտեցավ ինձ...

1

Մեր տուն եկած զինվորականները կարգին տղերք էին: Նրանցից մեկը մեր զուգահեռ դասարանից էր: Հաճախ նեղացնում էր ինձ: Վեցերորդ դասարանում (այն ժամանակ արդեն մի տարուց ավել էր, ինչ զբաղվում էի բռնցքամարտով) համբերությունս հատեց: Հո քացու տակ չզցեցի հարիֆին, հո չծեծեցի: Երեկ հիշեցրեց այդ մասին: Ասաց, որ մուռ չի պահում:

Ստուգման էին եկել: Երկու ամիսը մեկ գալիս, ավտոմատս քանդում, հավաքում, թղթերը ստորագրում ու գնում եմ:

– Գիտես, չէ՞, – խոստովանեց կրոսեր լեյտենանտը, – քեզ նման քչերն են իրենց զենքին հետևում: Ուզեմամ էլ՝ մի հատ կեղտ չեմ կարող գտնել:

Լիալուսնի վրա արտացոլված ստվերը մոտեցավ, արհամարհական հավեց ոտքիս ու պոչը խաղացնելով՝ փախավ-զնաց: Քոստոս փողոցային հայվան: Վազեցի շան ետևից, հասա ու սապոգի ծայրով հո չխփեցի դրա հետույքին: Վնգստալ էլ չհասցրեց: Տեղնուտեղը մնաց: Ուխ, կայֆ էր... Սրա նմաններին քացով պետք է սատկացնես, փամփուշտն ափսոս է: Շան ցեղ: Չորս տարեկան երեխա էիք տեսել՝ ոտքը կծեցիք, հա՞: Մինչև հիմա սրունքիս վրա ատամների տեղերը երևում են: Չեր քթից եմ բերելու, պոռնիկ հայվաններ... Մոտեցա, լեշը կոխկրտեցի: Գանգը դեֆորմացվեց, աչքերը դուրս թռան: Սա՛ մեկ... Գործարանի դարպասի կողմերում մի շուն էլ կա, բույն է դրել: Հերթը դրանն է: Մատս ինչու՞ է ցավում: Թու, եղունգս է կոտրվել: Քնելուց առաջ չմոռանամ խարտել ու կրեմ քսել:

0

Ճանապարհը նույն է...

00

Ըստ հավաստի տվյալների՝ այս պատմվածքը գրելու ընթացքում հեղինակի ձեռքով, նրա ներկայությամբ կամ անմիջական մասնակցությամբ ոչ մի կենդանի չի գրիվել...

**Արաքս Պողոսյան**

**Վարդեր**

Նրանք կիսում են մեզ հետ տարածությունը՝ առանց տարածքներ ճշտելու,  
Նրանք գողանում են մեզնից մեր հայացքը, որ նյութին գերի՝ իրենց չի նկատում,  
և պահում քնքշորեն կարմիր նվաղումների մեջ:

Նրանք մեզ են հավում թավիչ գոյությամբ՝  
մեծահոգաբար մեզ հետ կիսելով իրենց բաժին հավերժությունը:

Նրանք չափազանց ձույլ են մահվանը  
և այդ մասին լռում են՝ միայն ծաղկման ցնծությանը մեզ մասնակից անելով:

Մարդկային դատարկ լռության մեջ  
նրանք խշխշում են՝ բացվող թերթերի առատությամբ,

Նրանք ուրիշ առաքելություն չունեն գեղեցիկ լինելուց գատ.  
ինչպե՞ս սովորել նրանցից գեղեցկություն չկեղծել,  
Ներկայի մեջ այդքան քիչ ներկա՝  
նրանց ինչպես է հաջողվում մեր օրը՝ չափազանց ներկա,  
ծայրեծայր լցնել իրենց հոտավետությամբ:

Վարդերը  
նրանք և կան, և չկան:

Չկան մեր աչքերի անդրադարձներում,  
երբ մեկ հայացքով ենք փորձում նրանցից վերցնել և սպառել թովչանքը,  
որ չի մանրվում մինչև իսկ հավերժության մեջ,

Չկան, երբ վազքուղի դուրս եկած օրվա մեջ  
չենք հասցում դիրքավորվել բոլոր այն դիտակետերում,  
որտեղից միայն հնարավոր է հետևել,  
թե ինչպես են նրանց կոկոնները հաղթահարում ամոթխածությունը  
և բացում առազաստն իրենց շառագույն,  
հետևել, թե ինչպես են շնկշնկում նրանց ծանր գլխիկները՝  
արդուզարդի ողջ պաճուճանքով,  
ինչպես են տնքում նրանց ցողունները՝ ծանրության ներքո նվաղում:

Վարդերը.  
նրանք և կան, և չկան:

Կան, երբ մաշկագերծի զգայունությամբ ենք զգում նրանց թավշյա մաշկը,  
երբ սիրելու մեր առողջ բնագոյն ենք փրկում՝  
գուրգուրելու պահին նրանց աննյութեղեն գոյությունը,

երբ համրանում ենք՝ նրանց ունկնդրելու համար,  
երբ փակում ենք աչքերը մեր՝ պինդ-պինդ պահելու համար նրանցում,  
ինչը տրվեց մեզ իրենցից անհատույց,

և գիտենալով, որ սկսվել է պահը նրանց թռչունմի՝  
մենք չենք բացում մեր աչքերը,  
որովհետև դա ամենաանտանելի ցավն է այդ պահին  
մնացած բոլոր ցավերի մեջ:

**Նա չկար**

Այսօր էլ կարողացար օրդ սկսել- ավարտել առանց ինձ:

Առավոտյան քեզ չարթնացրեց Սերը՝  
իր անիրական հպումներով,  
նա քեզ հետ չէր նաև,  
երբ հագար օրդ սկսող՝ կոկիկ հարդարված դիմակդ,  
նստեցիր նախաճաշելու,  
վերջին պահին ուղղեցիր ժամացույցդ՝ օրվա ռիթմին համաչափ,  
դուրս եկար փողոց՝ կարևոր մարդու շտապող քայլերով:

Սերը,

Նա քեզ հետ չէր,  
երբ մուրացկանի ձեռքը  
մի քանի թղթադրամ խցկեցիր մեծահոգաբար:

Նա նաև չկար, երբ թափառական շանը  
շոյեցիր առանց սրտխառնոցի  
և զգացիր ոջլոտ մորթի տակ թաքնված անտերությունը:

Դու հիացնումքով նայեցիր կողքովդ անցնող գրկված զույգին,  
որ տանում էին Սերը՝ զգուշորեն՝  
աղջկա մազերի ալիքներին փարված  
և տղայի բազուկներին նստած:  
Նայեցիր նրանց, և նա կրկին չկար:

Սերը,

նա չկար, երբ օրվա գեղեցկուհին տրվեց քեզ՝ հարմար մի տեղում,  
իսկ դու հոշոտեցիր ցանկահարույց մարմինը՝  
խուսափելով համբուրել շուրթերը:

Նա չկար,

երբ դու Սիրո մասին կարծիքներ էիր հայտնում՝  
նյութը լավ իմացողի կեցվածքով.  
քեզ ունկնդրում էին նրանք, որոնց դեռ չէր և կամ հենց նոր էր այցելել Սերը:

Այսօր քեզ այցելեց մեկ ուրիշի Սերը՝  
զգույշ շրջադարձերում՝  
նա կարող է խրտնել ամբողջ կյանքի համար:

Իսկ Սերդ, որին այսօր էլ շրջանցեցիր,  
վաղն արդեն քեզ չի բարևի,  
պարզ պատճառով՝  
նրան բարևած կլինի ուրիշը:

**Գրիգոր Պըլտեան**  
(Փարիզ)

**Դարպաս**

Գրելու համար դուրս պետք է ելլեն տունէն:

Դառնալ, թափառիլ քիչ մը քաղաքին մէջ, քալել որևէ ուղղութեամբ, մանաւանդ երբ շրջապատը արդէն շատոնց ծանօթ է: Յրուիլ: Յրուել ուշադրութիւն ու միտք: Գտնել անցք մը շեղ, շեղուածք մը ես ինձմէ, որուն ծայրը, ո՞վ գիտէ...: Այլանալ: Սթափիլ: Գտնել տեսանկիւն ու հեռանկար:

Քաղել հոսկէ հոնկէ մայուածք մը, գոյն մը, ինքնաշարժներուն աղմուկը, անելի մը մէջ, յանկարծ յայտնուող տանիքներու դիզուածքը, զինկի հարթեկ գիծեր, շեղ կամ ուղղադիր, երբեմն կղմիմտրի մնացորդներ, բուխարիկներ, որոնց բերանները մերթ բաց են մերթ փակ, ցուիքներ, որոնցմէ վար կը կաթի քանի մը շիթ ջուր, առտուան ջաղբէն մնացող, քալուածք մը մայթին վրայ, իսկ սիւնին վրայ՝ կորսուած կատու մը կը փնտռուի, մասնաւոր հատուցում, կիմը կը կանգնի ցուցափեղկին առջև ուրկէ կը նշմարեն դէմքը, սև ակնոցը, ապակիին մէջէն կ'անցնին ինքնաշարժները, կը ճչակեն, կը խռնուին զառիվերին մինչև անկիւնը, ուր միշտ նոյն սևամորթ պոռնիկը կը կանգնի, կաշիէ տաբատ հագուած, յետոյքը տուած պատին, մէկ ծունկը միւսին վրայով, սրածայր կօշիկը երկարած մայթեզրին, կը բարևէ, կը ճանչնանք զիրար տարիներէ ի վեր, երբեմն կը շաղակրատենք, մարդու փրկի՛չ, կ'ըսեն, կը ծիծաղի, նոյն կատակն է տարիներէ ի վեր, մինչ մայթանիւով տղաք կը կտրեն միջոցը, կը սուլեն, կը սուրան, մեծաքանակ հագուստեղէնի խանութներ՝ Փիդիաս, Թամար, Զգայութիւն-Խենթութիւն, Ք'Արա, Զերմէս, Անահիտ, աստուածները բոլորն ալ վերադարձած են արդէն, մօտէկներ կ'ուզուին, առնուազն մէկ մեթր ութսուն սմը հասակով, շէնքի ճակատին՝ երկու Սփինքս, դուռը կը բացուի, մարդը սենէն կը պոռայ՝ ժամանա՛կ չունիմ հիմա, վաղը՝ մէկու մը որ ներսն ըլլալու է, կ'աճապարէ, ինչպէս բոզի մը այցելուն, որ ետև չ'ուզեր դառնալ, Նեղոս փողոց, Աղեքսանդրիա, Գահիրէի անցք, տարաշխարհիկ արևելք մը տարաշխարհիկ ծառերով, յունա-թրքական ճաշարանէն խորովածի հոտեր կը փախին, եռանկիւն պուրակին մէջ՝ փաքիստանցիներու խումբ մը կը խօսի բարձրաձայն, նստարանի ծերունին գաւազանով աղաւնիին հետ կը խաղայ, հացի փշրանք կը ցրուէ, մինչ քաղաքապետարանի ջրցան մեքենան իր կանաչ տռտռոցը կը սփռէ, քիչ մըն ալ զովութիւն:

Արևելեան երկիրներէն զբօսաշրջիկներ կը դառնան կը նային Սէն Մարթէնի կամարակապ դարպասին, ճակտին քանի մը լատիներէն նախադասութիւն, որոնց իմաստը չեն հասկցած, գիտեն միայն Anno domini, կը կրկնեն ես ինձի Anno, Anno, քանի մը զարդաքանդակ, գրախանութը կարծես աճուրդի հաներ է սնանկացած հրատարակչատան մը ամբողջ մնացորդ արտադրանքը, գիրքերը կը բանամ, կը գոցեն, նախադասութիւն մը կը կարդամ, Ludovico Magno շինեայց զդարպասս այս, Anno domini, քանդակի մը վրայ ծեր աղանի մը կծկուեր է, գլուխը փետուրներուն մէջ խրած, թերևս քիչ ետք, դարձիս, արդէն վար ինկած կ'ըլլայ, իսկ աւելի ուշ՝ ճգնուած, իրիկուան պտոյտիսը մեթրոյի մուտքին մօտ խճողում մը կայ, սև շուկայի սկիզբ մը, գողցուած ապրանքի վաճառք, հեռադիտակ, լուսանկարչական մեքենայ, քուարձէ ժամացոյց, ելեկտրոնիկ խաղեր, մէկը ձեռքին քսան վարդոնց փունջ մը կ'առաջարկէ, ուրիշ մը կը մօտենայ, ճամբա՞ն ցոյց տամ, մուրացկան մըն է, որ օրօրուելէն կը բռնէ կայարանին ուղղութիւնը, որուն շէնքը հոն կարծես կքած է ամպի կոյտի մը տակ, և դեռ թերթավաճառը կայ, հարիւրաւոր թերթեր, ամսագրեր, ամեն նիւթի մասին, ամեն ճաշակի համար, նախընտրութեան ու սիրոյ, Էրոս ու Կէյ, բայց մինչև ե՞րբ, մինչև ո՞ւր: Զեծանիւն վրայ նստած կ'անցնի դատարկապորտութեան աստիճանին հասած Monsieur Louis, դո՛ւն ինչպէ՞ս ես, կը պոռայ, մէկ թևը դեկին, միւսով աղբամանները կը բանայ, կը զննէ բովանդակութիւնը, տունը թափօններու արքայութիւն մը պէտք է ըլլայ, չեն պատասխաներ, հեծանիւի ետևէն կը ծփայ վերարկուին քղանցքը, կ'օրօրի, ոչինչ պէտք է նետել, հոս ամեն ինչ կը պահուի, կ'ամբարովի, կը դառնայ արխիւ, սահմանուած է չմոռցուելու, չանհետանալու, պայմանաւ որ աղբահաւաք կառքերը մաքրած, պարպած չըլլան աղբամանները:

Քիոսքին քովէն կը բացուի անցքը, որ ինքնին արևելեան շուկայ մը կը յիշեցնէ, Սուք-Սորսոք մը, Զալէպի փակ շուկան, Պանքոքի բաւիղները: Գիշեր ցերեկ բանող խափշիկներու վարսավիրանոցներ, իւրի հոտ, քիմիական բաղադրութիւններ, մելտրամի թատրոնը տարիներէ ի վեր նոյն խաղը կը ներկայացնէ, Կինս կը կոչուի Մոռիս, մայթէն երկդիմի էակ մը կը քալէ կոնքերը օրօրելէն, մէջքի մերկ մորթին վրայ՝ կապոյտ կիտուածք մը, կը մտնէ ափրիկեան ուտեստեղէնի խանութը, աժան, գրեթէ ձրի պահածոներ, խմիչքի փոշոտած շիշեր: Բօմեօ՝ ժիւլիէթի համար և ժիւլիէթ ինձի համար: Երբ դուրս կ'ելլէ, կը ժպտի, ինչպէս նիգարակուացի Չեփէն, յեղափոխութենէն առաջ, ամեն գնով դրամ շահելու պատրաստ, կարևորը չորրորդ աշխարհ չիյնալն էր, հո՞ս: Երբեմն թաղէ թաղ ոչ միայն

տիեզերք կը փոխես, այլ ժամանակաշրջան, բարք, բարոյական, բնագանցութիւն, կարծես բոլոր տեղերը, բոլոր շրջաններն ու քաղաքակրթութիւնները կը գոյակցին, կը համակցին, մէկը միւսին վրայ ծաւալած քիչ մը, մէկը միւսէն քիչ մը հեռու, տեսակ մը քոզմոփոլիթ երագի իրականացում իր ցեղային ու տոհմային յենակէտերով, ընկրկումներով:

Ձնջած ժամանակս կը վերադառնայ, որքան ալ կարծես որ չկայ, անիկա կը շրջապատէ գիս, թէև պաշտօնական չէնքերու բոլոր ժամացոյցներն ալ կա՛մ չեն բանիր կամ ալ սխալ ժամ ցոյց կու տան, քանի որ վստահ եմ ճիշդ ժամը այն է որ երէկ թէ առջի օր փոխեցինք, տան մէջ միշտ կը պահեն ժամացոյց մը հին ժամով, միշտ նոյն ժամացոյցն է տարիներէ ի վեր, այն որ բերեր եմ հետս, մինչև հոս, և կը լարեմ, ամեն առտու ատիւնելու ծեսն ետք, չեմ համարձակիր նետել, կամ թէ լքել տուփի մը մէջ անտարբէր իրի մը պէսը իրէ մը անելի բանի մը վերածուած է անիկա, յիշատակի՞ մը, Սուք-Սորոսքի մուտքէն գնուած ըլլալո՞ւն, ընդմիշտ ջնջուած տեղէ մը մնացորդ ըլլալո՞ւն, թէ անոր համար որ առաջինն է որ գործածած ըլլամ, որ ճամբորդած ըլլայ երկար ատեն, հետս ապրած, այնքան որ թերևս կարելի է ըսել թէ ան ապրած է իմ ժամանակս, միշտ ներկայ՝ բոլոր արարքներուն որոնց տէրը կը կարծէի թէ էի, անոր խունացած խորքը, մաշած ֆոսֆորէ սլաքները փնտռած եմ միշտ երբ նոր մը գնելու անհրաժեշտութիւնը եղած է, ժամացոյցը այդ է, միայն ա՞րդ:

Չեմ կրնար որոշել, անոր տևական ներկայութիւնը գուցէ ապահովութեան զգացում մը կու տայ, կարծես թէ պէտք չունենայի յարմարելու պայմաններուն, կարծես թէ անիկա ըլլար միակ ցուցիչը իսկական ժամանակին, կարծես թէ կեանքս կը մնայ այնպէս ինչպէս որ էր, կամ անոր նոյնութիւնը գիս կը կապէ ոչ այնքան անցեալի մը, ապառնիի մը, որքան ինչի մը որ հիմնովին անըմբռնելի է, անասելի, անբռնելի, անհպելի, և, որ, խորքին մէջ, ինչ մըն ալ չէ, արդէօք ասո՞ր համար հիները զայն նոյնացուցեր էին, այսինքն՝ աստուածացուցեր էին, Ջրուանին, անոր որ կը սպասէ հազար տարի, անոր որմէ կը ծնին երկուութիւնն ու բախումը: Իսկ ինչ ալ ըլլայ առասպելը, որ մտածելու կերպ մըն է, ժամանակը կը ծնի հատումէ մը, որ իր մէջն է, ժամերը որ կը յայտնուին, կը շարժին, կը դառնան կեդրոնի մը շուրջ, կարծես քակելով, փորձել քակելով միւսը, միւս ժամանակը, ան որ կը ժամուկի պիտի ըսէի, կը ժամահարուկի, ան որ կը դառնայ ուրիշ, կը համրուի, կը հաշուըուի, ժամանակը թիւն է շարժումին, ըլլալն ալ գոյաւորուիլ թիւին մէջ, թիւ դառնալ, թուիլ, ժամանակը... կը դառնայ ռիթմ և ընթացք, կը ժամանէ քայլ առ քայլ, սանդուխտ առ

սանդուխտ կարծես կը վերադառնայ, կը դառնայ ինքն իր վրայ, մինչ այդ բոլորը, բոլոր մակերեսները որոնք հոլովուեցան, որոնց վրայէն անցայ, օտարեցին գիս, տարին քաղաքի այդ անհատուն միշտ խուսափող, միշտ ինքզինք պարտադրող զանգուածին, որ ականջիս մէջ տևական աղմուկ է, տևական շնչոց մը, տեղատուող հեռաստան մը մոխրագոյնի, կանաչի, երբեմն կապոյտի, տարիներու յուշարձանային կուտակում մը ինչպէս հին յաղթողները շատոնց մոռցուած լեզուներով իրենց քաջագործութիւնները կը քանդակէին, Ես՝ որդի Մենուայի, որդի Մեծն... և այլն... սաքան սպանդ, սաքան գերի, սաքան ոսկի, կ'աւանդէին անմոռացութեան դաս մը, յաւերժացնելով ոճիրն ու իր արմատները, մեղքն ու իր ճեղքերը, սերն ու իր անհատունը դիրքերը, հարա Կրիշնան ու Կամա Սուտրան, այս բոլորը, կ'ըսէի, գիս հեռացուցին ինձմէ, մոռցուցին այն որուն կառչած էր միտքս, պատկերը կամ բառը, որ կրնար նախադասութեան մը սկիզբը դառնալ այն ատեն երբ կ'իջնէի աստիճաններէն և որ հիմա երբ կը բարձրանամ, ծեռքս նամակներու, թերթերու, պահարաններու ծրարը ուր աշխարհը մէկէն դարձած է տեղեկութեան ու խօսքի ծալուած անծայրածիր էջ, հիմա երբ, շնչակտուր եղած, ոտքս կը դնեմ վերջին սանդուխտին, կը յայտնուի անիկա փակ դրան մը պէս որուն բանալին ներսը մնացած է, կը թուի թէ նորէն կորսնցուցի ռիթմը, որ այլևս կրնամ աշխարհը տեսնել միայն կղպանքի մը բացուածքէն, դէպի ներս կամ դէպի դուրս:

Ամեն ինչ կը սկսի հիմա իսկ, Anno domini, ատենն է կարծես որ աղօթեմ, կամ գտնեմ յիշոցի նմանող հմայաբառ մը: Սրբազան ծես մը, կամ անոր նմանող բան մը, որ չըլլայ ծիսային, արարողական, հանդիսաւոր: Իսկ իմ պատրողական գաղթս յանգեր է, կարծես կծկուեր է ահա մեկնակէտին: Առաւօտեան պտոյտը աւարտած է շատոնց և մօտեցեր է պաստառի կտորին, որ կը թուի դուրսէն մնացորդ մը, տունի մը նման, որ երագեր եմ, անոր ներքին ճարտարապետութիւնը յօրինել եմ մտովին, իրերն ու տեղերը որոշել, պարագծեր մանաւանդ պարապը՝ նախկին թոնիթին պէս անհրաժեշտ ու կեդրոնական, հիմա պէտք է մտնեմ որոշ կանոնի մը մէջ, լքեմ միգամածային թափառումը, հրաժարիմ պահ մը, գոնէ պահ մը, մէկ լեզուէն միւսը անդադար անցքէն, տարութիւններէն, որ աշխուժութիւնն է և տկարութիւնը նոյն ատեն մտքին ինչպէս զգայութիւններուն, մարմնին, այն տպաւորութեամբ որ միշտ, ամեն քայլի կը հատեն երկու թաղամասեր բաժնող սահմանը, երկու երկիրներ, որոնց միջև կը գտնուիմ տևական սահմանագնացի մը պէս, որ հարկադրաբար պիտի կազմակերպէ իր կեանքը, անոր

56

տայ կեդրոն մը, միշտ փոփոխուող կամ միշտ խախուտ կէտ մը, յօրինէ իր կեցութիւնը երկի մը նման, կամ ինչպէս շերամը կը ստեղծէ իր խոզակը, գիտնալով հանդերձ որ անկարելի է հոն մնալ, հաստատուիլ, աշխարհը վերածել շարժանկարային կամ զօրութեանական իրականութեան մը, մտածել զայն իբրև վրիպանքը մեծ վէպի մը, անոր քարացումը, պէտք է նորէն ելլեմ, դէպի անծանօթ ուղղութիւն մը, գիշեր է, խարխափեմ, կորսուիմ, տեսնեմ նորէն, գուցէ նո՛ր տեսնեմ այն բոլորը որ մոռցայ ու գտայ, ստուերներու փախուստին և այլութեան մէջ, թերևս պիտի վրիպիմ, թերևս պիտի դպիմ ի վերջոյ կամ չկարենամ հանդիպիլ անանուն դէմքին, անոր որ կը դեգերի քաղաքին մէջ և որ անկասկած զիս կը փնտռէ որպէսզի ըլլայ ինքզինք, քանի որ ես ալ իրեն պէս, իրեն չափ, անանունն եմ անունիս տակ:

Երբեք չեմ հարցուցած թէ ո՞ր ծնած է, ո՞ր կը բնակի, ի՞նչ է անունը անոր որ պոռնիկ կոչեցի, ատոնք կը ձգեն փողոց խուժող, անձնագիր և ինքնութիւն ստուգող ոստիկանական ջոկատին, թմրեցուցիչի հետամուտ շուն մը առաջ քշած: Երբ հանդիպինք կը խօսինք լեռնէն ձորէն, հին ծանօթներու պէս որոնք ոչինչ ունին իրարմէ պահելիք, մէկս գիտէ միւսիս հոտը, միւսիս

տկար կամ զգայացունց կէտերը, ամուսիններ՝ որ այլևս կը կրկնեն նոյն շարժումները, ամեն մէկը ասպատանած ինքն իր մէջ, բայց կը մնան միշտ վերապահ իրարու հանդէպ, տեսակ մը չըսուած բայց իրարու հասկնալի հեռաւորութեամբ, կը գոյակցինք ինք հետզհետէ սկսած է մասնագիտանալ արհեստին մէջ, նախընտրութիւն մը ցոյց կու տայ դէպի կաշին, փայլուն, ողորկ, մանաւանդ սև, կը սպասէ օրուան երբ պիտի քաշուի ասպարէզէն գիւղ մը, ծննդավայրը կամ նման տեղ մը, վերջապէս քիչ մը մայրութիւն պիտի ընէ, քիչ մը կնիկութիւն, սովորական, շատ սովորական երագ մը, իսկ ես իր դէմքը սևեռած պահուս, այտոսկրի կնճիռ, կոպերու հաստ մանուշակագոյն, սպիտակ ու կանոնաւոր ատամնաշար, կը շարունակեմ փնտռել ճշգրիտ բառը, դէմքը որուն շուքը անցաւ և որ պիտի ջնջէր ժամանակը: Այն ատեն միայն կ'անդրադառնամ որ կրնայի նայիլ քաղաքի հրապարակներէն որևէ մէկուն վրայ զետեղուած ժամացոյցներուն: Ոչ թէ որովհետև բոլորն ալ խանգարուած են, այլ անոր համար որ բոլորն ալ կը բանին կատարելապէս, կէտը կէտին, Ջրուանի մեծ պաշտամունքով տոգորուած:

**Գոհար Նիկողոսյան**

**Ծաղկի տաբու**

... Ամենասկզբում ավագն առատ էր: Յետո, մի-ամտությունից էր, թե ինչից, մեծ մասը սրան ու նրան տվեցի: Ուզողին տվեցի, նվերի շնորհքն էլ չունեցանք ու ...

Ու լուսի հսկա գերանի կողուկուշտից սորացած մի քանի միլիարդ հատիկով գոհացա: Մի ծաղկաբոյ կկանգներ, եթե բլրեի: Դեռ չէի իմանում, որ հետո ինձ պետք է գալու՝ ինչքան շատ, էնքան լավ: Բայց ո՞վ էր ամեն ԱՍՏՕՈՒ ՕՐ երկուհազար ամերիկյան դոլարանոց տուն առնողը, հայաթում էր՝ մի մարդաբոյ շիկավագ:

... Արդեն... ՄԵՆԱԿՅԱՑԻ խաղեր էի տալիս... թե՛ ո՞ր օրվա միայնակն էի, շատ էլ չէի հասկանում: Ամեն բարլուսին, արթնանալուն պես փնտրում էի հեռագնա լուսին՝ եսիմորերորդ երկնքում: Արդեն թափանցիկ, ամպառճ լուսնին աչք դրած, աչք դրած, կիսաքուն-կիսաքուն ես հոգում էի պետքս:

Կան մարդիկ, կեղտոտ գործի վրա կարդալ են սիրում: Ես ուրիշ տիպ եմ՝ արտաթորելիս սիրում եմ շշմած, ուշիմ, էշացած նայել: Մինչև վերջացնեն: Ասես հայացքով ամաչում, ապա ամաչեցնում եմ այդ՝ ինչ-որ բանին, և այդ ինչ-որ բանն էլ, ինչպես համոզվեցի, լուսինն էր դարձել: Տես, թե ոնց եմ տառապում. ուտել սիրում եմ, խմել՝ առավել, բայց կերած-խմածից ազատագրվելը հեջ էլ ինձ սազական գործ չէ, այ իմ հեռագնա լուսին: Յեղելիս՝ թե տառապում եմ: Ինչ մեղքս թաքցնեմ՝ սիրում եմ ռիթմերով ապրել, ամեն օր՝ միևնույն գործողությունները, նույն հերթագայությունը, նույն գոհարագերմանաճշտապահությունը... ու իմ նմանը զուգարան չունի՞, միայն չորս պատն է: Ոչ ջուր, ոչ հակադարձ... տունս էլ չորս պատնանի է, դուռն էլ ներառյալ. ոչ հեռախոս, ոչ հեռուստացույց, ոչ էլ շինարարական խելքը գլխին հեռանկար...

...Շիվար էի մնում, հանապազօր-ռիթմիկ, ներդաշնակ-ներդաշնակ՝ իմ ախմախ վիճակից: Էժան տունն էլ էս է՝ վրես ինչ թանկ է նստում:

...Իմ բախտից էր՝ հենց իմ գլխով ամեն բան սեփականաշնորհիվեց՝ ուրիշի սեփական բակով. ոչ ջուր ունեն ընդունելու, ոչ էլ՝ կոյաջուր՝ ճամփելու: Դրացին «2» կուլ տվածի պես մենակ «2է» կասի: Տուն ծախողն ու երբեմնի ինձ առնող, հիմի էլ տուն առնողը ինձ ոսկի սարեր խոստացան, դե, թող չհավատայի: Խոստացան իդեալական խրճիթ: Բայց հենց որ տեսան, որ էլ փաստաթղթի մոմենտ չկա, և գրված օրենքն իրենց չի՞ էլ սպառնում, խելոք-խելոք պոչները քաշել քաշեցին:

Ուն էլ որ ասեի՝ ինձ խաբել են, կասեի՞մ՝ է՛... թող չխաբվեիր... կարգին տուն ընտրեիր... էհա՛, թող

ունենայի՞... սեփականատերերիս մտիկ. էս աշխարհից ի՞նչ ենք տանում. կհարցներ ՅԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

...Էս կոճակս ջղայնացած-ջղայնացած կոճկելուց մի շնիլոն անգամ բուլավկայով եմ փոխարինել: ...Ոչ էլ՝ մարմին, ոչ՝ անուն, ոչ էլ՝ հոգի. ոչ էլ՝ անուն... պատասխանում եմ՝ թողնում եմք, միայն՝ թողնում, նվիրում, տալիս, ցփնում, լքում, կորցնում, ցանվում եմք, ախր... փիս բան է անզուգարան ապրելը, ու երևի՛ արդեն սիրտը լիքը ժողովուրդ եմ դարձել...

Ու զուգարան չունեցող մարդն անկարող է գյուտարար կանգնել, ավելի շուտ չունեցածս ԲԱՆԸ կկանգնի ու գող կնստեմ:

Պետքարանի բնագավառում, սակայն, ես գյուտարարի խաղեր էլ տվեցի: Կղանքը ամեն առավոտ խնամքով լցնում էի մոմլաթի մեջ, բերանը պինդ կապում ու առավոտ կանուխ էլ աղբանոց էի տանում... Այդ գյուտն իրեն չարդարացրեց: Ախորժակս իջել էր միևնուս անսահմանություն: Օդ ու ջրի չափ անհրաժեշտ էր առավել արդյունավետ միջոց հայտնագործել՝ արտաթորանքից հարյուր տոկոսով և առանց որևէ կորուստի ազատագրվելու համար:

Յետո... շաբաթ մեկ անգամ՝ ստեպ-ստեպ ես իմ արտաթորանքը սրտացավորեն մի մեծ դուլի մեջ էի հավաքում. կոկիկ, սոկիկ... միամիտ մարդը գլխի չէր ընկնի՞ ի՞նչը ու՞ր եմ տանում և ինչո՞ւ:

– ԻՆՉՈՒ՞Ն էս էլ չգիտեր՝ զաչե՞մն? ու why? վա՛յը ... ՎԱ՛Յ... մի օր էլ ընդհանուր գծին չհասած՝ ոտնաձայն առա ու այնպես արագացրի, որ ուղիղ ոտքերիս շփեցի ողջ պարունակությունը:

Բայց... ինչ խոսք. ես չզգվեցի՝ վիճակս, անզորությունս, լավատեսությունս ավելի զգվելի էին: Տուն թռա ու մտքի առկայծում ստացա: Ես հայտնագործեցի վաղուց հայտնագործվածը: Խոսքը փոս փորելու մասին չէ, ուր սովորաբար ընկնում է փորողը. էնքան անշնորհակալ չեմ, որ վախճան կամենամ ինձ կամ ուրիշին...

Ամեն առավոտ, հեռագնա լուսնի աղամանդալուրթանույն սահանքին պլշած, նախորդ օրվա հիասթափություններից և մարմնավորիս աղբից ազատագրվելուց անմիջապես հետո, ես կատվագույն հաճույքով էի կեղտս հողով, ավելի ճիշտ՝ ավագով թաղում, անհետացնում... Այն ավագով, որից շատ քիչ էր մնացել՝ ընդամենը մի քանի միլիարդ հատիկ, ճշգրիտ՝ մի ծաղկաբոյ: Քիչ էր մնում կեղտս թաքցնելուց հետո մի հատ էլ մլավելի ու մի հատ էլ չորեքթաթեի արդեն չքվածը՝ ուրախությունից: Ուր որ էր, հա՛ . «Իմ մեջ արթնանալու էր ԼԵՈՒՄԻՆԱՐԴԻ աստվածային կերպարը», ու այս խոսքը պատմվածքիս որպես բնաբան կսագեր, բայց բնաբանի հավես էլ չմնաց...

Մի ծաղկաբոյ՞... բայց այդ մի ծաղկաբոյն էլ իր

գործը տեսնում էր՝ հաջորդող հինգ տարիների ընթացքում դեռևս հողի էլ չէր վերածվել՝ ավազի ու հողի միջև էր տատանվում:

Քամու և անձրևի պարզևած փոշեջրի, ապա ցեխի շնորհիվ շատանում էր ու շատանում...

Այնուամենայնիվ... որքան են սիրում բառն այս՝ այնուամենայնիվ ... են փոքրիկ հողամաս էլ ունեցա՝ մի քփաբոյ, ուր, սեփական փորձով հանոզվեցի (և հարգարժան ՌՌԲԻԶՈՆՆ էլ կհամաձայնվեր երևի)՝ ամենամենամենահարմարը ԾԱՂԻԿ աճեցնելն էր...

Ախր ... ԾԱՌԵՐԻ տունները սևանում էին, միանշանակ, դեղձի, սալորի ու տանձի շիվերը նույնն էին թվում... ԱՎԱԶԻ տակ բետոն կա... դե... մատղաշ արմատը բետոնի հետ զահլա չունի՝ ինչքան հասկացա:

Աներես ծաղկասերմերը՝ քամու բերած, հողի պահած, որքան աննկատ որ ժամանում, նույնքան աննկատ էլ ծլում, բացվում ու այդպես էլ արևտեսին չէին դիմանում: Կիզիչ իրավիճակին չդիմանում, էլ ետ՝ հողավազին հենվում, խոնարհվում էին՝ զուգործը հենց նոր պրծած, թունբան վերամարմնող ցիցքամակ կնգա նման:

... Արևածաղիկներ բացվեցին երեք գարուն վրավրա, հերթ-հերթի: Պայմանավորվածի պես էին, բայց հենց որ արևին դեմդեմի եղան, այլընտրանք չունեին, երևի... ամոթու գետինն էին մտնում, որ... կղանքի ծնունդ են... ու վայթե՝ իմ ամոթից չորացան, թե չէ ... արևից բացի մեկ էլ՝ արև են սիրում: Խեղճացան, թեքվեցին, ընկան, վերացան, ցախկվեցին ու ցխկվեցին:

Իսկ ես... մտնում էի ԱԼԵՆ ԳԻՆԶԲԵՐԳԻ ԱՐԵՎԱԾԱՂԻԿԻ ՍՈՒՏՐԱՆ իրենց համար էլ կարդալ: Բոլոր երազախաբություններս, իղձերս, ինքնամոռացումներս, տվայտումներս այդ օրերին կոչված էին ՍԸՐ ԳԱՅԼՇԻ արտը ջրելու:

Կակաչ-մակաչ էլ էր մեկ-մեկ հայտնվում ու ... մեկ էլ տեսար՝ հաշված ժամերում վերացան...

Տան աջակողմյան ցանցապատը ծայրեծայր, իմ տունը, իր բետոնահատակ բակով ինձ առանձնացնում են, մարդավարի, իմ այն հարևաններից, ովքեր նույն հասցեակիրն են՝ ինձ հետ: Առհասարակ իմ տունն իր բակով հիշեցնում է մի բացօթյա վանդակ. ասես՝ հազվագյուտ գազան են որ կամ: Ու երբ իմ վանդակում են, դուռս ներսից են փակում աշխարհքի վրա: Կամ էլ՝ բանտապետով կալանավոր են, բանտապետ՝ ես, կալանավոր՝ ես, գազան՝ ես, վարժեցնող՝ ես: Աջակողմյան՝ հասցեակիր հարևաններս ջուրս կտրեցին՝ ես գիտեմ, գիտեմ... բայց այնքան ծանծարալի է զոհ թվալը, խեղճ լինելը, նվճվալը... Շարունակ ինքս խնդրում են այդ վատությանը չարժանանալ... զոնե՝ ինքս ինձ բարեկամ մնամ, խնդրում են... ԲԱՄԲԱՍԱՆԹԸ մի

մեծ պոռնիկ է՝ լիարժեք բավարարվելու համար է սովորաբար ծնվում: Դե լավ, բամբասանքն էլ մինչև վերջ տանեն:

...Շարունակ, շարունակ, շարունակ, ինչ հիշում են, նրանք ցատկում ցանցերիս, իմ էլեկտրական լույսն էլ էին տանում իրենց քաջածանոթ, ինչ-որ մի երկնային ճանապարհով: Դա... երրորդ վատությունն էր արդեն: Չորրորդը երկաթացանցս մի լավ ճնռթելն էր, հինգերորդն՝ էն, որ շարունակ իմ թաղով ու իմ բակով ադամորդու վաստակներն էին վազվզում, միամիտ մարդը հենց կիմանար, թե իմ համար են ըտենց խառնվել՝ իրար: Գիշեր-ցերեկ քթիս տակ տղուկներ ու տղուկներ էին վազվզում ցատկոտում: Վաղուց էր՝ ցավի ու առեղծմերիս հետ դաշն էի ապրում և ամենամենամենաշատը վեճերից էի խուսափում: Ջահել-ջուհուլի աննախադեպ արշավանքները իմ ՏՈՒՆ - ՄԱՐՄԻՆՆ ԷԼ ՏԱՆՍ հետ էին մշանադրել: Դե... ինձ ՍՈՒՐԲ կամ ՄԻԱՆՉՆՈՒՅԻ չեն պատկերացնում, է՞ն աչքերը, որ ես ունեն... ով գիտե՝ ես ինձ խելքահան արեցի, որ էս օրն ընկա: Թեև այդպես էլ բզկտված, բոզոտված ու պոզոտված ԾԱՂԻԿ ԵՍ չնմանվեցի, բայց երկաթե ցանցերս տափակ անեկոտի օրն ընկնում ու դռանս հասցեագրված՝ ինձ ՀԱԿԱՄԱՅՐ հանել ջանացողների կեսգիշերային-անպատեհ թակոցները չէին դադարում... Հազվադեպ էի ՕՐԵՆՔԻՆ դիմում, երբ արդեն հանում էին ՀՈԳԻՍ, ՈՍՏԻԿԱՆԱՏԱՆ կամ ԴԱՏԱՐԱՆԻ շենքից բավարարված էի դուրս գալիս՝ օրենքն իմ կողմից էր, ու ինձ շարունակ ինքնապաշտպան էին ճանաչում անգամ... հոգիս հանող-հունողները...

Ստածում էի, դինջ, դինջ, հենց մի քիչ էլ մեծանամ, ասենք՝ քառասուն, մառասունում, մի մեծ, խելքը գլխին քարեպատ կշարեն :

Շուրջ երկու տարի փախչում էի տնից, ծանոթ, հարևան, բարեկամի տանը գիշերում... մերձավոր հասկացության այս երեք տեսակից մեկական ընտանիք ասես հենց՝ անորոշ պոկվում և ինձ գրկաբաց էր ընդունում... Ամենուր ինձ գրկաբաց էին ընդունում... բացի՝ իմ տնից, ուր ընդամենը մի մարդ էր կոչված լինելու՝ ԻՆՔՍ... Փախչելով փախչում էի՝ երբևէ չխամրող հույսով, թե ԱՍՏՎԱԾ մեծ է...

Իվերջո. մտահղացումի արժանացա՝ ԾԱՂԻԿ ՏԱԲՈՒ:

... Կողակից հարևանուհուս որդին կալանավարից ժամանեց, անձրևի սերմանած ընտիր ցեխահողը իմի բերեց, ու իմը ինձ նվիրեց: Յոթնամյա հողը ես սիրով ընդունեցի, նվերի նման ու նույնիսկ ափսոսեցի խառնել իմ սարքած հողին՝ կղանքի ու շիկավազի շարունակական խառնուրդ... Մաքուր հողը բազմաչարչար ցանցի տակ երկարումեկ փռեցի:

«Մաքուր հող է... մաքուր հող է... մաքուր հող է» շեշտում էր երբեմնի ազատագրկվածը. ես պատրաստ էի այդ նախադասությունը լսել անվերջորեն: Այդ օրը ԾԱՂԿԻ ՏԱԲՈՒՆ իմ ներսից հերկինս կարկառվեց եղենական ծաղկի անհոգությամբ:

Արդեն համոզվել էի՝ զուգարանամերձ հողանասիկում ոչինչ չէր աճում՝ նույնիսկ ծաղիկները հանդիպակաց արևի ու ընդոտնյա կղզոցի կոնտրաստին չդիմացան, անգամ ազռավները այդ կողմում չէին դռռում, լքված էր... ի՞նչ էր ... ցողուն, թե՞ շիվ, արևին ակն ընդ ական լինելուց չէր, որ փչվում էին:

Էրեկ-էսօր ազատության արժանացածի ցեխահողը, ես, ինչպես կրկնում եմ, ցանցի երկարությամբ մեկնեցի, ու իմ տան մուտքն ավելի նեղացավ, տեղից՝ նեղ էր... ցանցին, ինձ, տանս շատ էինք չարչարել... առաջին տարին ձեն-ձուն չկար: Յետո մոլախոտ աճեց, չտեսնված, չլսված բուրոդ, վայրի շուշանների մի եղենային մոլախոտ... նրա կողքին ծվարած մի ծաղկաթուփ, որոնցից շատ կա քաղաքիս ամենատարբեր պուրակներում, խելքը գլխին շինությունների պարտեզիկներում... մոռագույն, արևադեղին, վարդակարմիր ծաղիկներ ... մեկ երկուսն էլ՝ հալալ կեսով մոռ ու հալալով էլ՝ դեղին բացվեցին: Անձրևոտ օրերին փթթում, գերում ու գրավում եմ, արևոտ օրերին՝ մի ծաղկի պես փակվում: Մոլախոտը, որ պար է բռնել ցանցն ի վեր, այդ ծաղկից ընդամենը մի թուփ է հանդուրժում իր կողքին: Նոր ծնվողը չի աճում. մուրազը փորումն է մնում: Եթե ունի մուրազ, փոր ու նման բաներ ... Այս՝ ամենափոքր դագաղաչափ տարածքում մեկ էլ՝ հոպ, մի խաղողի որթ հայտնվեց, տարին մի տերևով ավելի է բարձրանում, աշուն չեղած կռվվում, անհետացողի հաշիվ է դառնում:

Խաղողենիս էս տարի էլ իրեն չարդարացրեց մոլախոտի ու ծաղկի հետ յուր չի գնում, իրա ծնվելուց էլ է փոշման մնում, մեռնելուց էլ...

Հողը փոքրիկ դրախտի նմանվեց՝ հենց էս, երրորդ տարում:

Ես էլիուէլի, երդում կերածի պես հանապազօր կղանքն ու կենաց ջուրս հողին եմ բաշխում, ապա տուն մտնելուցս առաջ ամեն անգամ պարտեզիս նայում ու քրթմնջում եմ.

...ՇՈՒՏՈՎ՝ մոտակա տարիներիս մեջ այս մոլախոտն էլ, խաղողն էլ կբարձրանան... ԿԲԱՐՁՐԱՆԱՆ, ու համեղ արցունքազիլաներ հիշեցնող որթը շուշանների հետ մեկ կլինի ու կպատի, վերջնական, ցանցը՝ վարից վեր... էլի ու էլի, էլի ու էլի կբարձրանա... ԾԱՂԿԻ ՏԱԲՈՒՆ իր գործը կտեսնի նաև՝ ինձանից դուրս, հո միշտ բանալի չի՞ մնա: Կգորեղանա՝ ոչ մեկը չի էլ ցանկանա անգամ ոտք դնել իմ ցանցին լույսս տանելու համար... հոգեբանորեն, մի տեսակ, թե՞ երկու, արդեն

կարևոր էլ չի, չի կարողանա՝ այդպես է...

Ծաղիկը կամ շահույթ է բերում, կամ՝ գեղագիտական հաճույք պարգևում, կամ՝ երկուսը միասին:

Ցանկացած ծաղիկ, սակայն, խելքից դուրս դառնում է... այդ մենք ենք, այդ թվում և՛ ես, նրան կարգել կանացիության խորհրդանիշ: Ծաղկի մեջ կա և առնանդամ վարսանդը, և առէջ-քածոները...

Պատիկ ծաղկի մեջ մի ողջ հարեմ կա, դառնությունն էլ՝ վրադիր:

Ծաղիկը... վաճառվում է, գնվում... կարևոր է, ուրեմն: Ինձ վաճառելու շնորհքն էլ չունեմ...

Ծաղիկը մեռելատներում կյանքի մասին բարբառող միակ էակն է : Կենդանի տաբու է ԾԱՂԿԻ ՏԱԲՈՒՆ՝ ինչպես բոլոր-բոլոր տաբուները:

Դժվար թե՛ խաղողի հետ թև-թևի համբարձվող ծաղիկներին, որ ի վերջո վարագուրելու են ցանցապատը, հաղթել կամենա-կարենա՝ մարդկային մեղսահակ, հարձակվողական, մոլար հոգին:

ՍԱ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ Է. եթե հսկա քարեպատ շարեն կամ էլ թե չէ՝ երկաթյա դարպասներ կանգնեցնեն, ոչինչ այնքան ճոխ չի ազդի մարդ, մարդկայինի վրա, որքան որ՝ ծաղկած մոլախոտի երկնային թռիչքը:

Խաղողը տաբու չի դառնա, չէ՛... կծերանա, տանիք կղառնա, կթվա ԵՐԿՆՔԻ՝ երկինք աչքից կախ ընկած հայկական արցունք, գիլա-գիլա կհայեցվորի ինձ էլ՝ իր վերջնակետին: Թող տանեն խաղողներս՝ ճուճ, ճուճ... ինձ ընդամենը թող մի ճուճ մնա, դա էլ է տարբերակ՝ ճիշտ ապրելու համար... Տանեն, տանեն, տանեն՝ ինձ իմ արցունքներն էլ չմնան... ԹՈՂ ՈՉ ՄԻ ԶՈՂ ՉՍՈՏԵՆԱ ԵՐԿՆՔԻՆ՝ ինձանից բացի... քիչ վերև... ինձ դրախտի բույր է հուշվում արդեն...

Եթե ավելի շատ ընկնեի կռիվների մեջ, քան ընկա... և եթե՝ ավելի շատ կուլ գնայի ինձանից անմեղ զոհ ստանալ երազողների ասուխոսին, քան գնացի... ավելի շատ կարտասվեի. մարմինս հողաչեն է՝ ցեխաջուր կղառնար... կքշվեր... Շատ արտասվեի՝ կցամաքեի, կամ էլ՝ թե որ արևն ուժեղ լիներ, արևածաղիկ էլ ծնվեի՝ ուժեղ արևի, ուժեղ արևի չէի դիմանա... Դե լավ, դե լավ, թող արցունքս չհոսի՝ թող ինձ մնա:

...Շուշաններս... խենթացնող բուրավետ են՝ հոտևան: Ու երբ... շատ շատանան, մեղուներս էլ կշատանան, ու՛խ, եկողին կխայթեն, ինձ՝ ոչ:

Արյունս քաղցր չէ, այլ՝ նեկտարի չափ դափդառը:

«Դու՛ ժենշինա... ժենշենի՛՝ ԿՅԱՆՔԻ ԱՐՄԱՏԻ հոտն ունես ու համուհոտը՝ մեր դառը կյանքի»... անխղճավարի հաճոյախոսում էր ինձ՝ իմ հանճարեղ ամուսինը, երբ մենք ընտանիք ունեինք, ու իմ ու իր հորինած երեխաների ներկայությամբ ինձ... ՍԵՐ էր խոստովանում...

60

Դառն է մարդկային կյանքս՝ երևի... մա՞րդ եմ՝ կին լինելուց առաջ: Ցանկացած տաբու, վաղթե՞ուշ, հաղթահարվում է, իսկ տաբուներին փոխարինելու է գալիս քաղաքակրթությունը: Քրիստոնյան ածապարում է, էութենաբար...

...Այս ամառ ես աժդահա ՌՌԲԵՆՑ ծաղկատանը ծաղկաթերթիկ ավլող էի աշխատում: Թեև սա մեկ այլ պատմվածք է, սակայն ինձ ի՞նչն է խանգարում ինքս ինձանից մեկ երկու տող պարտք անելը, թոցնելը... Հինգ օր դիմացա: Հաճույքով, հաճախ՝ ձեռքով էի վերցնում արագորեն ցեխակոլոլ դարձող ու ծանրացող թերթիկները, գլխիկները, տերևիկ, տոտիկ, ոտիկները... Ձեռքով հատիկ-հատիկ վերցնում, թաքուն-թաքուն հաճույք էի ստանում իմ աշխատանքից: Բայց՝ մեկ է, իմացվեց, և աժդահա ՌՌԲՆ ինձ «տարօրինակ» հռչակեց: Գնալով ավելի ու ավելի դուրը չէի գալիս: Ես զգում էի, որ կաշխատեմ ոչ թե մեղվաչափ, այլ թիթեռաչափ ժամանակ: Ոչ ավելի:

Հաշված օրերում ոտքերս սառը բետոնից ճաքճքում, փորս ցավում, սրտում էր սպառնացող լուծի մոտալուտ ու զագրելի լծից: Հինգ հարյուր դրամ օրավարձը պահ առ պահ մի՛ֆ էր թվում, որին արժանանալ էր հարկավոր... Քրիստոս տաբուատերին ինչպե՞ս կօգնի:

Ծաղկատերերի կոպիտ ու անտաշ դիտողություններից «Ախչի, թռի, ախչի ստոպ, stop! ախչի ձեռն հանի, ախչի էս ընչե՞ս ունիտազը մաքրելուց թրջել»... ինձ քարերի միջից հերոսաբար ելևարած ծաղիկ էի թվում պահառապահ:

...Ծաղիկների բարակիկ ցողուններն ու փշերը բզկտում էին ձեռքերս, եղունգներս իրենց-իրենց կոտրվում, մատներս կոպտանում, կոշտանում ու տձևանում էին հաշված թուփերում, ժամերում, օրերում...

Հիմնական աշխատանք չէր դառնա, չէ՛...

Ակնարկ էլ կար՝ իմ կին լինելու ակնարկը: Բայց ես արդեն տարվել էի ձրի, վայրի, ինքնակոչ ծաղկի տաբուով:

...Այդ ծաղիկներին սկսեցի վերևից նայել... Շահութաբեր են... իսկ վաճառվող ծաղիկները նման են այն պոռնիկներին, որոնց մարմինները մաշվու, թռչում են ոչ թե՛ շատ կենակցելուց կամ ձեռքեծեռք անցնելուց, այլ՝ այլևս սիրահարվել չկարողանալու գերհոգ-նածությունից...

...Եթե խելք դնեի, ինձ լավ էլ գին կտային, բայց խաղող-արցունքատուփն էտելու տեղյակ ես այս միտքն էի էտում՝ ինքս ինձ խաբրտելով, իբր, ծաղիկն ինձ համար ոչ շահույթեցի կդառնա, նրա Հայրենիքը Դրախտն է, ուր ոչինչ չի վաճառվում կամ գտնվում, ոչ՝

նվիրվող ու նվիրելի էակ... ոչ՝ անվավեր ոտանավորի առաջատար խորհրդանիշ: Ոչ՝ նախշերի ակտիվ առաջնորդ ու ոչ էլ... ու ոչ էլ, ու ոչ էլ՝ սգահանդեսի ցնծուն մասնակից: Ոչ ծննդյան և այլ և այլ տոներ զարդարող վառվռուն միանձնուհի ու ոչ էլ՝ փառունակ մեղվախարեմի՝ ըղձալի ՀԱՐՍ:

Ծաղիկն ինձ համար տաբու է... տաբու է... մոզական... մոզական... մոզական... ամենահզորը՝ տաբուների մեջ: Սրտագին փափագում եմ, որ անց չկենա: Նախնադարյան մարդը հաղթահարեց, ես՝ չէ...

Դեռ հավատում եմ, որ մարմինս այն ցողունն է, որին դիմակայող, ընդհատող գլուխս արև, անձրևի, քամու խենթ սիրահարն է: Տիեզերաբանտուն:

Այ՛...այ՛...այ՛...

Շարունակ մարդ-մարդկայինին հոգեպես դավաճանում, կենակցում եմ բնության երևույթների հետ... Հոգևոր սեքսը մարմնիս է սպառնում... Ու մեկ-մեկ Քրիստոնյայի կերպարն ինձանից այնքան է հեռանում, որ չի դադարում ՄԻԱԿԸ լինելուց: Հեռվից պարզ եմ տեսնում՝ կիզիչ չէ... լուսավոր է...

Հեռու է... ՄԻԱԿՆ է... Մարդկային կարճառոտ կյանքը ընդամենը՝ ծաղկի տաբու է, հորինված մի բան: Այնպես ուզում եմ, որ չվերանա... Ծաղիկները և ծաղկանմանումի կոչվածները՝ կին, երբևէ անպաշտպան չեն: Նրանց պաշտպանել, պաշտպանում են և կպաշտպանեն իրենց գույնը, բույրը, հմայքը...

Նրանց տրորում, վերացնում, գնում ու վաճառում են ամեն քայլափոխի, նրանց հետ վարվում ճիշտ այնպես, ինչպես՝ ծաղիկների:

...Փարավոնների հետ թաղում էին կանանց... Հիմա փռում են շիրմաթմբերին՝ կանայք են ամենալավ սզացողները: Մեռածին ամոթով չեն դրկում, ամոթով չեն թողնում մեռած այս աշխարհում:

Երանի չվերանա այս տաբուն՝ անհնարին է ճահճուտում նոր մարդու կերպարն անթեղել, գեթ այս պահիս անհնարին է... Աժդահա ՌՌԲԸ: Դժվար թե կանանց շարքերում իրեն սազական ընկերուհի ճարեր... պստիկ, մստիկ, ծաղկի նման աղջիկ է սիրում, որ ծաղկի օրը գցի... կոպիտ խոսքերով, կոպիտ շարժումներով, բայց սրտի մեջ՝ մի անմեղ, գոնջուր մանուկ... նա, սակայն, ծաղիկներին ամենաամենամենասազական ընկերն է, որ կա: Ծաղկի չափ քաջ էր. դիմացկուն... անհաղթելի... ամեն մի առէջում մի-մի աժդահա կա նստած, լսո՞ւմ եք՝ սզում են Վարսանդարևի՝ մարած բնությունը: Սզում են, լսու՞մ եք՝ սզում են:

...Իշաճա՞նճ, թե՞ բոռ, հասարակ մեղո՞ւ, թե՞ թիթեռ, թե՞ իմ նման զավզակ էգ մի՝ ամենքիս է երբևէ հիացրել մի գիշերում բացվելու ԾԱՂԿԻ ՍԽՐԱՆՔԸ:

2003 թվական

**Արամ Յովհաննիսյան**

**Սրտախորովը**

– Էդ ի՞նչ բանի ես:  
 Ամուսինը շրջվեց ձայնի կողմը:  
 – Շարունակիր, թե՞ պրծար:  
 Բենոն հապճեպով ծածկեց ամոթույքը:  
 – Բաց արա, – կինն առաջացավ, – ձեռքդ մի կողմ տար, տեսնեմ:  
 – Սիրան, անհարմար է, դուրս արի:  
 Կինը բռնկվեց.  
 – Հլա ես ամաչե՞մ, խուժանի մեկը: Ի՞նչ էիր անում:  
 – Սրբիչը տուր:  
 – Այդպես էլ մնա, թող հեռուստատեսությունից գան նկարեն, անամոթ:  
 Բենոն փորձեց հասնել կախիչին: Նեղլիկ լոգարանում շարժվելու հնար գրեթե չկար:  
 – Կեղտոտ ձեռքերովդ հանկարծ ինձ չդիպչես:  
 – Գնա, – Բենոն ջանում էր չգրգռել, – թող հագնվեմ:  
 – Գնալը հետո կտեսնես: Ջուրն ինչու՞ ես բացել, իբր, լողանում ես:  
 Ամուսինը ձեռքը երկարելով՝ անջատեց ցնցուղը:  
 – Շատ է տաք, մտնել չի լինում:  
 – Դենքիդ գույնն էլ քրից է, հա՞: Հայելու մեջ քեզ տեսե՞լ ես:  
 Բենոն ձայն չհանեց. առանց նայելու գիտեր՝ մաշկն ամբողջ, այտերը՝ առանձնակի, շառագունել են, կասկարմիր կտրել:  
 – Ջզվելի, մտքով ու՞մ հետ էիր: Սպասիր լույսը բացվի՞, պատմելու եմ թաղին:  
 – Սիրան, թվացել է...  
 – Հինգ րոպե դուռը պահած քեզ եմ հետևում, հեջ՝ վերացել, անտերդ էիր գրտնակում, հիմա ասեմ՝ թվացե՞լ է:  
 – Քեզ ո՞վ էր խնդրել բացեիր, ինչու՞ մտար, – դիմադարձեց, հետո զգաց՝ սխալ է թույլ տալիս: Տխմար, – մտքում շարունակեց՝ այս անգամ իր հասցեին, – փոխանակ ստուգես՝ լավ փակեցիր, նրան ես մեղադրում: Դե գնա տակից դուրս արի:  
 – Չբացեի, հա՞, որձատ շուն: Հիմա եմ հասկանում՝ ինչու ես գիշերները կինո նայում: Ինձ ուղարկում է քնելու, իսկ ինքն աչքերը պլշում է էկրանին: Տո, դու ի՞նչ տղամարդ ես, նրանք այնտեղ սեր են անում, իսկ... – Սիրանը հեծկլտոցով դուրս նետվեց: Շրխկոցով գոցված դուռը մասամբ ի բաց հանեց կնոջ սրտմեղանքի չափը:

Բենոն նստեց լոգատաշտին: Ծնկներում ուժ չկար: Հուզմունքից, շոգից, նաև սպասվելիքի երկյուղից ու ամոթից սիրտը թալկել, արյուն գրեթե չէր մղում: Մթագնել էր և միտքը: Այնքան էր հասկանում, որ պիտի լոգարանից դուրս գա կամ, գոնե, բաց պահի դուռը:  
 Մի կերպ ցամքոցով չորացավ, հագավ ներքնաշորերն ու, հասնելով հյուրասենյակի բազմոցին, փլվեց վրան: Հեռուստացույցը միացած էր մնում, անջատեց, հանգրեց նաև լույսը:  
 Այդպես մնաց, երևի, կես ժամ: Դարձյալ կմնար, եթե հեռախոսը չզնգար: Ընդոստ ելավ տեղից, փութաց միջանցք: Մինչ կհասներ, կինը վերցրեց լսափողը: Կբաշմ-կպոկեմ լարը, չի հասցնի պատմել, – վճռեց Բենոն:  
 – Սխալ համար եք հավաքել, – կնոջ ձայնի խիստ քաղաքավարական երանգը ամուսնուն հուսավորեց. գուցե կարողանա հաշտվել:  
 – Սիրան, ներիր:  
 Կինը պատասխանի չարժանացնելով՝ մտավ ննջարան: Բենոն գնաց ետևից.  
 – Սիր...  
 – Անունս չտաս:  
 – Էլ չի լինի:  
 – Կուզես՝ տարին-տասներկու ամիս անտերդ բռնած ման արի:  
 – Հարկ չկա կոպտելու:  
 – Նրբազգացիս տես...  
 – Ես քեզ առաջվա պես սիրում եմ:  
 – Ինձ ե՞ս ապուշի տեղ դրել:  
 – Ամենևին:  
 – Վերջին անգամ ե՞րբ ենք իրար հետ անկողնում եղել:  
 – ...  
 – Աչքերիս մեջ նայիր:  
 – Չեմ հիշում:  
 – Ես էլ եմ մոռացել:  
 – Դա չէ գլխավորը:  
 – Բա ո՞րն է կարևոր՝ պոռնո ֆիլմերն ու քո էդ մունդառ արա՞րքը:  
 – Դրանում դու ևս մեղավոր ես:  
 – Այսի՞նքն:  
 Բենոն լռեց. դժվարանում էր բացատրել:  
 – Ի՞նչ ես բերանդ ջուր առել: Եթե բացվել ես, մինչև վերջ գնա:  
 – Բան էր, լեզվիցս թռցրի՝ ուշադրություն մի դարձրու:  
 – Արդեն ասել ես: Տեր կանգմիր բառերիդ, արարքներիդ:  
 – Հոգնել եմ:

62

Ինձնի՞ց:  
 – Կյանքի միօրինակությունից:  
 – Էդ էլ փոփոխություն՞ն էր: Չլինի՞ մահ  
 դավաճանում ես:  
 – Ինքդ քո ասածին հավատացի՞ր:  
 – Քեզնից ամեն բան սպասելի է: Եթե այդպես է,  
 ինչու՞ չես բաժանվում: Ավելի հետաքրքիր մեկին  
 գտնեիր:  
 – Ես ուրիշի կարիք չունեմ: Իմ կինը դու ես:  
 – Էի:  
 – Եվ՞ ես:  
 – Այսքանից հետո՞:  
 – Ի՞նչ է եղել, որ...  
 – Հեջ:  
 – Մոռացիր, պրծնի գնա:  
 – Մոռանա՞մ: Բենո տղա, առաջինը քո  
 գործատեղն եմ գնալու:  
 – Կխայտառակվե՞նք:  
 – Այդ մասին վաղ մտածեիր:  
 – Դու էլ հետը:  
 – Ոչինչ: Բա՞ չէ, լռեմ, կուլ տամ:  
 – Եթե ուզում ես, կհեռանամ տնից, եղած-չեղածը  
 կթողնեմ քեզ, միայն թե՛ մարդու բան չասես, թող մեր մեջ  
 մնա: Մեծսիրտ եղիր:  
 – Էլ պրծավ... Ամեն բան պատմելու եմ:  
 Բարեկամներիդ ասելու եմ, որ քո պատճառով երեխա  
 չեմք ունենում, որովհետև... անկարող ես, ամուլ: Հերիք  
 է՝ ինչքան լռեցի: Եկել, մեծահոգությունից է խոսում: «Ինձ  
 հետ հետաքրքիր չէ»: Մեռնեմ քո հետաքրքրական  
 հոգուն... Ելնելն ու իջնելը մեկ է լինում: Իբր, զո՞րծ արեց,  
 խռնփոցն էլ կապում է... Եղավ քանի՞ տարի:  
 – Այդ ինչե՞ր ես դուրս տալիս, – Բենոյի ներսում  
 փոթորիկ էր:  
 – Ինչ լսեցիր:  
 – Հավատալս չի գալիս: Դու՞ ես:  
 – Իհարկե ես եմ: Վիրավորվեցի՞ր: Թե՞  
 ճշմարտությունը չեմ ասում; Կուզե՞ս ստուգե՞նք, – կինը  
 ետ տարավ վերմակը: – Մոտեցիր:  
 – Տրամադրություն չունեմ:  
 – Քեզ թվում է՞ ես ունե՞մ: Ել վրաս:  
 – Փողոցային կնոջ պես ես քեզ պահում:  
 – Ախ, դրանց էլ գիտես: Մի սրան հայիր... Թե չէ՛  
 դու պակասն ես:  
 – Ի՞նչ է ուզածդ:  
 – Ուզում եմ հետաքրքիր դարձնել կյանքդ:  
 – Վերջացրու:  
 – Սա միայն սկիզբն է: Եթե մութ է, վառիր  
 գրասեղանի լուսամփոփը: Գրավիչ լինելու համար, ինչ  
 ես կարծում, չփոխե՞նք լամպը: Դարակում կարմիրը կա:

Հասարակաց տների գույնն է՝ կրքահարույց...  
 – Սուս, ի սեր Աստծո...  
 – Նրա անունը գոնե դու մի տուր:  
 – Քեզ համար եմ ասում:  
 – Թե Աստված լիներ, փափագ ունեի՞ մի զավակ  
 կտար, – առպահ անկեղծ տրտնջաց, հետո իսկույննեթ  
 խոհը քշեց անգիտակցականի ոլորտը: – Սպասիր՝ ուրիշ  
 բան մտածեցի. տեղափոխվե՞նք մեծ սենյակ: Եթե ոչ մի  
 ալիքով էրոտիկ ֆիլմ չլինի, հոգեպահուստ պոռնո  
 կասետ կունենաս, հը՞... Ձայնը շատ չենք բարձրացնի,  
 որպեսզի չշեղվենք:  
 – Ինձ ե՞ս ձեռ առնում:  
 – Չէ՛ ինչու՞: Ամենահարմարը գորգին է: Հլա  
 պատկերացրու. դու ներքևից, ես՝ քո վրա: Վա՞տ միտք է:  
 – Լիրբ, քեզ այդ գիտելիքները որտեղի՞ց:  
 – Սկսե՞նք, և կհամոզվես, որ միայն տեսականին  
 չեմ տիրապետում; Աշխարհը ոչ քեզնով էր սկսվել, ոչ էլ  
 քեզնով կպրծնի:  
 – Անզգամ:  
 – Շարունակիր: Ավելի կոպիտ: Վիրավորիր,  
 որքան կամենում ես: Ոտքի տակ առ: Դա ինձ, հավատա,  
 հաճույք է պատճառում: Ափսոս, մտրակ չունենք,  
 ծաղկեիր, – նա աթոռի թիկնակին դրած տաբատից  
 քաշեց-հանեց գոտին: –Սրանով էլ կարելի է, պահիր:  
 – Խելքդ թռցրի՞ր:  
 – Դեռ ոչ: Բայց... ուզում եմ, որպեսզի հեշտանքից  
 մոռանամ մարմնի, հոգու ցավ և... տրվեմ, տրվեմ:  
 Ափսոս սակայն, դա քեզ հետ հնարավոր չէ, որովհետև  
 դու պակասավոր ես: Պակասավոր ես:  
 – Սսկիր: Էլ չասես: Կարող եմ ափերից դուրս գալ,  
 ինձ չտիրապետել:  
 – Դու՞:  
 – Հա, ես:  
 – Քո մեջ ու՞ր է ործություն, – Սիրանն անսպասելի  
 կտրվելով բարձից՝ թեքվեց և, ձեռքը երկարելով, բռնեց  
 ամուսնու ամորձիները:

Բենոն բնագրով ընկրկեց, բայց ոչ զգալի. կինը ցավ  
 պատճառելու մտադրություն չունեց: Նույն պահին  
 առնակն ուղղվեց, պնդացավ, և նրան տիրեց վայրկյան  
 առաջ կնոջը տակն առնել-ճզմելու ցանկությունը:

\*\*\*

Քրտինքն առու-առու հոսում էր, բարձր փախել էր  
 մի կողմ, վերմակն ընկել հատակին, վիհից խուսափելու  
 համար ոտ ու ձեռով Բենոյից բռնված Սիրանն ամեն  
 զարկից ցնցվում էր, հենարան փնտրում, և խորխորատը  
 չընկնվելու միակ հույսը ամուսինն էր, որ մղվում, մղվում  
 էր առաջ, թաղվել-սուզվել էր կամենում կնոջ  
 խառնարանում, խորանալ ջեռոցի խորքերում, հասնել

սրտագոգալին, ուրկից եկող և կոնքամիջում եփ եկող արյան տրոփը առնուց փոխանցվելով՝ քլունգվում էր կենակցի քունքերում: Ապա խփոցը դարձավ խլիրտ, և վայրկյան անց արտավիժած ցփոնը ներսից օժեց Սիրանին: Սերմնոցը սրսփաց, բացվեց՝ պտղավորվելու համար զավակատուն առնելով ամենակայտառ սաղմնյակին, իսկ մնացյալը Բենոյինով հանդերձ վանեց դուրս:

Առժամանակ անց նինջը թոթափելով՝ ամուսինը ելավ անկողնուց:

- Էլի մնայիր, - գորովով նկատեց կինը:
- Գնամ բաղնիք՝ մաքրվեմ:
- Ինձ էլ ջուր կթողնես:
- Բաքի կեսը մնում է:
- Շուտ կգաս:

Բենոն լողացավ, դուրս եկավ պատշգամբ: Ծխախոտ չէր վերցրել, բայց ալարեց ետ գնալ: Ընդարմության մեջ կանգնել, հայացքը հառել էր խավարին: Մեղմիվ սոսափում էին ծառերը: Հատուկեմտ պատուհաններում լույս կար: Հարկերից մեկում երեխա էր լալիս:

Շրջվեց, աչքն առավ մարզվելու համար պատշգամբով անցնող հեծանից կախ պարանոցերին: Անկյունում աթոռակն էր, վրան՝ ցանցատաշտում

արդուկի սպասող ճերմակեղենը: Տարավ մի կողմ, նստարանը փոխադրեց մարզողակների տակ, ելավ, թոկերից մեկը պտտեց պարանոցի շուրջը, մի կերպ ծայրն անցկացրեց միջով, այնուհետ թափով մի կողմ հրեց հենարանը:

Սիրանը, որ լոգարանում էր, չլսեց աթոռի վայր ընկնելն ու Բենոյի կոկորդից ելնող խռխռոցը, չտեսավ նրա՝ փրկվելու համար մյուս պարանից ձեռքերով բռնված մնալու բնագրական ճիգերը: Մանրակրկիտ լողանալուց, սրբվելուց, վարսերը ֆենով հարդարելուց հետո, երբ լռությունը դարձավ անհանգստացնող, գնաց հյուրասենյակ, մտավ խոհանոց, ուղղվեց պատշգամբ...

- Բենո, - ճչաց՝ տեսնելով առաստաղից կախված ամուսնուն, - էս ի՞նչ արիր, սրտախորով:

Արմեն Շեկոյանի բանաստեղծության դիտարկում երեք եղանակով

(իտերատիվ վերլուծության փորձ)

Թռչունների շուկա

A Ես այսօր գնացի թռչունների շուկա...
B «Ըհը, Պրևերից թխեց, մեկին՝ մեկ», –
կարդալով տողա՝ հիացած կըճըվճըվա
նույն թերմաշ գրչակը և շնչակտուր կտուրա՝
«Գրական թերթում» մի սյունակ սևացնելու,
և, ստանալով նախորդի հոնորարը,
աստիճաններին մի պահ կանգ կառնի,
հուշիկ կհաշվի նորից դրամը,
նորից կըճըվա՝ հասե՜ք, հա՛յ-հարա՛յ...

C Բայց արդեն զարուն է, և ես, խոսքը մեր մեջ,
իսկապես գնացել էի թռչունների շուկա,
զի աղջիկներս թութակ էին ուզել՝ կարմիր
ու կապույտ, և շուկան ոչ թե Սենայի ափին էր,
այլ՝ մեր քաղաքամոր Ավան թաղամասում,

D և, խոսքը մեր մեջ, ինքս էլ ուզում էի
թութակի երգ լսել - իսկական, ոչ թե
վարձու թութակի:

Արդեն զարուն է:

[1] Եթե նկրողը ինքնաբավարարման կեղծափոխություն է, ապա այսօր գրելը (գրողական գիրը) նույն նկրողի կեղծափոխումն է, ընդ որում, հնարավոր է դարձել ընթերցել ոչ միայն գիրը, այլև լինել այդ գրից ծագած նյարդային զգայափոխության մեջ. գիրը նյարդայնացնում է, որովհետև նրա հետ մեր միստիկական կապի քայքայումը ոչ այնքան հավատ է թողել իր հանդեպ, որքան մեզ է փորձության տանում՝ ինչքան կարելի է դիմանալ. հավատալ Գրին ու չհարցնել ինչո՞ւ:

[.....]

Հայ գրականության մեջ բնագրային կասկածները կամ վերապահումները ինքնատիպության խնդրում հուշում են, որ մենք՝ հայերս, ծագումնաբանական բարդույթ ենք ունեցել և ունենք: Մեր ծագման (կենսաբանական բնագրի) մեջ, թվում է, ինչ-որ անպատվաբեր փաստից ենք խուսափել, ինչը և կեղծափոխվել է մեր (գրական) արժեքների ինքնուրույնության վրա կասկածի, թեև, տվյալ պարագայում, սա բացատրվում է հայ գրականության մեջ աստիճանակարգային (հիերարխիկ) կառույցով, ընդ

որում, վերջին շրջանում այնքան չի մտահոգել գրականությունը «գլխավորողի» ապահովությունը, որքան՝ մնացյալների ենթակա լինելու պայմանը, այլապես այդ հիերարխիկան այժմ փլուզված չէր լինի, և, Սևակ ասելով, կարծրացած պայմանականությամբ, չէի ուզեմ եմթադրել անպայման Պարույր Սևակ և ոչ՝ նաև Ռուբեն Սևակ: Այդ ես չէի ուզեմ եմթադրել, բայց մտածելակերպը կարծրացած է և դժվար թե հաղթահարվի, քանի վերջնականապես չենք հասկացել, որ աստիճանակարգությունը հայ գրականության մեջ փլուզված է:

Այս «չհասկանալուց» է ծնվել Արմեն Շեկոյանի բանաստեղծությունը. սա ծաղր է նրանց նկատմամբ, որ դեռ երեկվա մեջ են և ավելին են «հասկանում», քան բանաստեղծի այս թվացյալ «չհասկանալն» է: Հեզնանքը սկսվում է այդ հասկանալ-չհասկանալուց, որը առաջադրված է երկակիության խաղով: Հիերարխիկ մոտեցումները սպառվել են, բայց բանաստեղծը ձևացնում է, թե ոչինչ չգիտի, և բանաստեղծություն է սկսում այնպես, որ բացահայտորեն առիթ տա «տող թոցնելու» մեջ մեղադրանքի. միաժամանակ ակնհայտ է, որ սա այնքան էլ խաղ չէ: Եթե աշխարհում Պրևեր չլիներ, մենք չպե՞տք է թռչունների շուկա գնայինք և եթե գնացել ենք, ինչո՞ւ չպետք է գրենք հենց այդպես. Ես այսօր գնացի թռչունների շուկա...

[2] Իտերատիվ վերլուծության մեջ հնարավոր են տրամաբանական անստուգություններ, որոնք կարող են և չլինել, եթե նախասահմանում ենք, թե յուրաքանչյուր դեպքում ինչ իմաստով ենք iterum-ը գործածում: Բանաստեղծական արժեքը որքանով բազմանշանակային է որպես վերլուծության առարկա, նույնքան վերլուծական մոտեցումը պետք է բազմանշանակային լինի՝ հիմք ընդունելով իտերատիվ-լրացյալության սկզբունքը. չբացառել վերլուծական լրացյալ հնարավորությունները: Iterum-ի գաղափարը ինչ-որ տեղ կարելի է սրբապատկերային համարել: Տեսնելով «ընդհանրացված» սրբի, քան կոնկրետ ինչ-որ սուրբ անձի, այսինքն՝ ունենալով բնագրային կասկածներ, շատ ավելի հավատացած ես լինում, որ առնչվում ես սրբության հետ՝ քո ձեռքի տակ հենց բնագիրն է:

Ցանկացած վերլուծություն iterum-ային է:

Գեղարվեստական տեքստը (բանաստեղծական լինի, թե ոչ) իրականության պատկերավոր վերլուծություն է (հմնտ. վերարտադրություն): Նույն գեղարվեստական տեքստի վերլուծականը դառնում է «վերլուծվածի» վերլուծում, այսինքն կատարվում է իտերումային գաղտնագերծում. այնպես որ մեր վերլուծականը կարող ենք համարել Ա. Շեկոյանի բանաստեղծության օրգանական շարունակություն, այլ կերպ ասած, *ես այսօր գնացի թռչունների շուկա...* բանաստեղծությունը այժմ արդեն ես եմ գրում, ինչպես, iterum-ի համաձայն, նույնը արել է Ա. Շեկոյանը Ժ. Պրևերի առնչությամբ:

[3] *ես այսօր գնացի թռչունների շուկա...* բանաստեղծությունը տեքստային նմանողական և տարբերողական խաղի վրա է կառուցված: A տարբերակ. Պրևերը ներկա է (ի դեպ, գուցե ոչ ոք բնագրային կասկածներ չունենար, եթե հեղինակն ինքը «չմատներ» իրեն): B տարբերակ. Պրևերը ներկա չէ («ինքն իրեն մատնած» հեղինակը փարատում է հնարավոր բնագրային կասկածները): Տեքստային խաղ է, ուր հնարավոր է դառնում iterum-ը իր բոլոր դրսևորումներով: Կարող ենք և պնդել՝ A և B տարբերակները վերջնական չեն, որովհետև.

... ես, խոսքը մեր մեջ,  
իսկապես գնացել էի թռչունների շուկա,  
զի աղջիկներս թութակ էին ուզել...

Ասացինք՝ բանաստեղծությունը անընդհատորեն լրացյալ խնդիր է առաջադրում: A տողը զուգորդություն է. ի վերջո, Պրևերը ունի այդպիսի տող, և ոչ ոք չի կարող ժխտել, բայց և գեղարվեստական ցանկացած տեքստ զուգորդության արդյունք է: Սա նորություն չէ և ոչ էլ որևէ գրողի կամ գրականագետի հայտնաստեղծում: Պրևերի A տողը իր հերթին զուգորդություն է, հետևապես Ա. Շեկոյանը ճիշտ է.

...կարդալով տողս՝ հիացած կըճրվճրվա  
նույն թերմաշ գրչակը և շնչակտուր կսուրա՝  
«Գրական թերթում» մի սյունակ սևացնելու...

որովհետև չկա այլ տեսակ (առանց զուգորդության) գրականություն: Բանաստեղծությունը այնքանով է իտերատիվ-«հակառակ կողմից» իմաստով, որքանով խաղ է, և այնքանով է խաղ, որքանով «փոխլրացողական» է, ընդ որում, այս ամբողջը թերի կլիներ առանց գվարձալիի առկայության: Բանաստեղծը չափազանցում է այդ գվարձալին.

... և, խոսքը մեր մեջ, ինքս էլ ուզում էի  
թութակի երգ լսել - իսկական, ոչ թե  
վարձու թութակի...

Չափազանցում է, քանի որ բանաստեղծության սկզբում ասված է. կգա մեկը ու կասի՝ թութակի երգ ենք լսում («ըհը, Պրևերից թխեց, մեկին՝ մեկ» տողը սա է նշանակում), ինչը D տողը («ինքս էլ ուզում էի թութակի երգ լսել») դարձնում է բացահայտորեն ինքնահեզման, քան կարող է առաջին հայացքից լուրջ թվալ: D տողը ծաղրի պես է հնչում. Պրևեր փնտրողներ, իսկ գուցե ես ինքս ի՞նձ եմ լսում: Սա գվարձալիի չափազանցություն է, քան, կրկնում ենք, լուրջ կարող է հնչել: Սա է, որ բանաստեղծությունը դարձնում է «անբռնելի» այն իմաստով, որ չես կարող ասել՝ որտե՞ղ է հեզմանքը Պրևեր փնտրողների նկատմամբ, որտե՞ղ է ինքնահեզմանքն առ այն, որ ինչպիսի շրջանցիկ մտածողություն էլ գործադրես իրավիճակ փրկելու, միևնույն է, ինքդ քո սարքած խաղի զոհն ես - բնագրային կասկածները քո երևակայության հետևանք են: Եվ իրոք, ո՞վ է և ե՞րբ պնդել, թե սույն բանաստեղծությունը Պրևերից է «թռցրած», հետևապես բնագրային կասկածներից ծագած գրողական ներող իր կեղծափոխության մեջ ավելին պետք է ինքնահեզմանքի հակված լինել, թեև այնուամենայնիվ հստակ սահմանագիծ չկա՝ հեզմանքից ինքնահեզմանք: Այլոց հեզմելը փրկություն չէ, առավել ևս՝ B տողին հաջորդում է ենթադրականը (կճրվճրվա, կսուրա, կհաշվի, կճվա...) և ոչ թե՛ կատարվածը-տեղի ունեցածը, ուստի մեր «ո՞վ և ե՞րբ է պնդել, թե այս բանաստեղծությունը Պրևերից է թռցրած» հարցը բնավ էլ հռետորական չէ: Այլոց հեզմելը խոչընդոտող է, ինքնագոհություն է, որը Ա. Շեկոյանի այս գրվածքի հետ քիչ առնչություն ունի:

Կարելի էր չէ՞ A տողը այնպես կեղծափոխել, որ ոչինչ չմնար նրանից, բայց արդյո՞ք այդ գնով ձեռք բերված ինքնուրույնությունը կլուծեր ընդհանրական մի բան՝ Գրի արժանապատվությունը, քան այստեղից կամ այնտեղից «չթռցնելն» է: Գիր-մշակութային կուտակումները «գրելը» (գեղարվեստական գիրք, անկասկած) դարձրել են բնագրային ողբերգություն . մի կողմից՝ ամեն ինչ ասվել է, ամեն ինչ գրվել, թվում է՝ ասելու կամ գրելու ոչինչ չի մնացել, մյուս կողմից՝ հենց այն «չխորամանկելն» է, չկեղծափոխելը, որ ասացինք A տողի առնչությամբ - մինչև ե՞րբ պետք է ցույց տանք, ձևացնենք, թե Գրի արժանապատվություն ենք փրկում, մինչև ե՞րբ պետք է գնալ... թռչունների շուկա և հենց այդպես էլ չգրել՝ *ես այսօր գնացի թռչունների շուկա* : Նա, ով գրում է սա, և իր տողն է (քանի որ ինքն է գրում), և իր տողը չէ (քանի որ գրել է արդեն Պրևերը):

... և շուկան ոչ թե Սենայի ափին էր, այլ մեր քաղաքամոր Ավան թաղամասում.

Այս տողերում «լրացողականը» A տողի առնչությամբ ոչ թե խնդիրը բարդացնելու համար է (այլ ծայրահեղություն կլիներ A տողը Պրևերի հետ առհասարակ չկապելը), այլ ցույց տալու, որ ամեն ինչ այնքան է պարզ-առօրեական, որ ոչինչ էլ չի պատահի, եթե շուկան գտնվի ոչ թե Սենայի ափին, այլ... Ավան թաղամասում: «Ավան»-ով ոչ թե ժխտել «Սենան», այլ լրացնել (այս բանաստեղծությամբ Ա. Շեկոյանը ոչ թե ժխտելու փորձ է արել ֆրանսիացու գրվածքը, այլ «հակառակ կողմից» լրացնելու): Ինչ վերաբերում է B տողին («ըհը, Պրևերից թխեց, մեկին՝ մեկ»), անհատականության ռեակցիա է, բայց ոչ այն ռեակցիան, որը ես Պրևեր չեմ սիրում ժխտողականը դարձնում է միջոց իր ես-ը ընդգծելու, ցույց տալու իբր բնագրային ողբերգության մեջ չէ, ուր ոչ այնքան Պրևեր չսիրելն է կարևորվում, որքան այդ չսիրելը ի ցույց դնելը,

չնկատելով, որ հենց Պրևերն է օգնում իր անհատականության ձևավորմանը:

\* Մեթոդը, որ գործածել ենք, Ա. Շեկոյանի պոեզիայի շուրջ մտածումների արդյունք է:

\*\* Iterum, լատ. 1.կրկնողական, բազմապատկական 2. հակառակ ծայրից, մյուս կողմից, մեկը մյուսի մեջ, փոխլրացողական: Այստեղ iterum-ը գործածում ենք նոր իմաստով, հիմնված հետևյալ օրինակների վրա. 1. Ջոսայ Ռոյսի խտրացիոն քարտեզը – A (1) քարտեզը պատկերում է A(1) տարածքը (Ռոյսը նկատի ունի Բացարձակի և Վերջավորի հարաբերությունը): A(1) տարածքում գտնվում է նույն A(2) քարտեզը, որը պատկերում է նույն A(2) տարածքը, որի մեջ նույն A(3) քարտեզն է իր A(3) տարածքով... և այսպես շարունակ: Բորխեսը «Դոն Կիխոտի թաքուն դյուբանքներում» փիլիսոփայության մեջ որպես արտացոլման հնարք մեջբերում է Ռոյսի ամբողջական հատվածը, որը վերաբերում է խտրացիոն քարտեզին, և զուգահեռում է գրական նմանատիպ հնարքների հետ: 2. Է.Ֆիկլը նույն իմաստով է iterum-ը գործածում՝ խաղը զեղանկարչության մեջ բացատրելու համար: 3. Ռուսական матрешка –ի կառուցվածքը. մի տիկնիկը «լրացնում-կրկնում» և, միաժամանակ, դառնում է հաջորդի «հակառակ կողմից»:

**Արծուի**

**Կրկին վերադարձ**

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր՝  
պայծառ ստվերների և մթին լույսերի աշխարհը,  
որտեղ ապրում եմ աշխարհի ամենալավերը  
և աշխարհի ամենավատերը,  
որտեղ դատապարտված եմ եղել ծնվել, մեծանալ, ընտանևորվել,  
որի համար ուշքս չի գնում, սակայն վերադառնում եմ մշտապես:

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր՝  
աքսորավայրը հայրենասերների,  
որտեղ մարդիկ շարունակում են դառը դատել և դատարկ նստել,  
որտեղ դարերով կուտակված աղբ կա և թախիծ,  
որտեղ դեռ խմում են հայրենիքի և ծնողների կենացը,  
և որտեղ շատ հարսներ շարունակում են ձեռքով լվալ  
սկեսրայրների սպիտակեղենը:

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր,  
որը համառորեն չի կայանում որպես պետություն,  
որը քեզ համար չի անում ոչինչ, այլ միայն պահանջում է,  
որտեղ առայժմ հարկ չկա արտաշնչելու և ներշնչելու համար,  
որտեղ մի կողմից շարունակում են պալատներ վեր խոյանալ,  
իսկ մյուս կողմից մարդիկ քրքրում են աղբամանները,  
որի մի զգալի մասը դեռ մնում է աղետի գոտի,  
չի դադարում արյունահոսություն-արտագաղթը  
և շարունակվում է հոկտեմբերի 27-ի դատավարությունը:

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր՝  
հաբքած բիրդան աղաների, չարքաշ մշակների,  
հաստավիզ թեկնածուների, մաղծաղեն սպասարկուների,  
իրենց իշխանությունը բանեցնել սիրող  
մանր և խոշոր եղջերավոր չինովնիկների,  
ուրիշների դժբախտության վրա փող շինողների,  
ինքնաբավ աստղիկների, լոտո խաղացողների,  
կոմունիզմի նոստալգիայով ապրողների,  
իրենց ճակատին ծածկագիր չընդունողների,  
եհովաջիների, Ալֆրեդի սենյակցիների,  
քսենոֆոբ-քսենոֆիլների և հոմոֆոբ-հոմոֆիլների աշխարհը...

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր,  
որտեղ շարունակում են կարծել, թե աշխարհի կենտրոնն  
իրենք են որ կան,  
և որ իրապես հավատում են, թե իրենցն ուրիշ է,  
որտեղ յուրաքանչյուրն իրեն ավելի խելացի է համարում կողքինից,  
և որտեղ կանայք իրենց թագավոր են կարծում, ոչ թագուհի:

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր՝  
սևազգեստ և անժպիտ աշխարհը  
մի քանի սիրուհիավոր մաշոների,  
թիթիզ գյամշոների, սրճամուլների, վերավաճառողների,  
մուկ տշողների, ավտոն թոցրած վարողների,  
անկապների, թսիկների, ուզվորների,  
շրջանակվածների և պատենավորվածների,  
մեծապատիվ և փոքրապատիվ մուրացկանների,  
լարիսկանների, պոռնոկույսերի, խաչագողերի,  
հորոսկոպով գրամտ ստացողների,  
պսևդոտառապյալների, դիլերների,  
աչքը օտար ճամփեքին զցածների,  
հավերժ գործազուրկների,  
անվերջ դժգոհողների,  
մի բուռ արտոնյալների  
և մի ծով չարտոնյալների աշխարհը...

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր,  
որի պագող պիտուխլամիշ պապայի տղերքը  
ամռանը անցորդների գլխին դուլներով ջուր են լցնում,  
իսկ ձմռանը՝ խփում սառեցրած ձնագնդերով,  
որտեղ օրը ցերեկով մարդ են սպանում և մնում անպատիժ,  
որտեղ երեկ էներգետիկ տեռորի են ենթարկել սեփական ժողովրդին,  
իսկ այսօր մաքուր ջուրը խառնվում է կեղտաջրին  
և ոռոգում մարդկանց չարչրկված ստամոքսները,  
իսկ մարդիկ բժշկի չեն դիմում՝ փողի զրոյության պատճառով,  
որտեղ մականունավոր կլաններն իրար դեմ են ելնում,  
որտեղ քրեական անցյալով մարդիկ են այսօր շինում երկիր (երկիրը),  
և ամեն ինչ դրված է վաճառքի:

Ես կրկին վերադառնալու եմ իմ երկիր՝  
որտեղ տևական կայուն անկայունություն է,  
որը մշտապես ժամանակավոր դժվարությունների մեջ է  
և դարեր շարունակ՝ անցումային իրավիճակում,  
և մեռնում ու հարություն է առնում իր ծննդյան պահից:  
Կրկին վերադառնալու եմ ծննդավայրս,  
որի անցյալը չքվում է աչքի առաջ,  
և որը վերածվում է մի դիմագուրկ գոյության,  
որտեղ սակայն ամեն օր ինձ համոզում են, թե  
«էրեկ վատ էր, քանց վուր էսօր»,  
բայց և որտեղ երբեք ինձ չի լքում  
հրաբխի վրա ապրելու զգացողությունը:

Այսքանից հետո տրամաբանական հարց է առաջանում,  
թե ինչո՞ւ եմ, այնուամենայնիվ, կրկին վերադառնում...

Որովհետև չունեմ ավելի լավ տարբերակ,  
որովհետև հենակետերս այնտեղ շատ ավելին են,  
որովհետև այնտեղ եմ կերտել իմ փոքրիկ, գողտրիկ տիեզերքը,

որովհետև այնտեղ ինձ են սպասում իմ կեսը և մեր միության արդյունքները,  
որովհետև այնտեղ դեռ կան մարդիկ, որոնց հետ արժե նույն նավակում մնալ,  
որովհետև այնտեղ ամեն քայլափոխի ինձ ողջունում են,  
և որովհետև մեզ այնտեղ էլ վատ չեն կերակրում,  
և դեռ գործում է «Հովեր» կամերային երգչախումբը,  
իսկ Սարգիս Խաչենցը շարունակում է իր գրքերը հրատարակել,  
որովհետև այնտեղ կարող ես հարևանիդ դուռը ծեծել կեսգիշերին,  
որովհետև այնտեղ դեռ մարդը մարդ է,  
և վարդից վարդահոտ է գալիս ու սալորից՝ սալորահամ,  
որովհետև այնտեղ ես քչերից մեկն եմ և ոչ, ինչպես այստեղ, շատերից մեկը,  
որովհետև նախընտրում եմ գյուղում թագավոր լինել, քան քաղաքում՝ իշխան,  
որովհետև այնտեղ դեռ դիմանում եմ,  
դեռ դիմանում եմ,  
դեռ դիմանում եմ...

Նոյեմբերի 26, 2003  
Սան Ֆրանցիսքո

70

**Նարեկ Նիկողոսյան**

**Ծեր մահր  
կամ**

**«СССР-ում ծնվածը...»**

Եր՛ն, ճր՛ն...

Նա ճռում էր ծերությունից ու փորձում էր գտնել: Փորձում էր գտնել ծնողներին:

Բաժակ, աթոռ, լամպ, դանակ, ժամացույց, ներկված պատ (որ արյան հետքը չերևա), հին ռադիոընդունիչ...

Նոր ռադիոընդունիչ. «խոսում է...»:

Նրանք ոչ ոքի չէին սպասում, նրանք ճաշում էին սև ու սպիտակ աշխարհում: Հասկանում ե՞ք, նրանք քաղցած էին:

Ջր՛նգ, զր՛նգ...

Պտտվում էր սեղանի շուրջ նստածների՝ սեղանի վերևի կարմիր հագուստով կախված արևը... Ու ոչ ոք չէր խոսում բացի ռադիոընդունիչից, երբ լսվեց ժամանակի հոսանքի գյուտը՝ զանգի ձայնը, որը նման էր կարմիր դեմքերով մարդկանց երգին՝ «Կրակ», որը բացում էր մարդկանց երրորդ՝ վերջին աչքը: Ջանգի ձայնը չէր դադարում, բայց ընտանիքի ու նրա նոր խլացած աշխարհը այնքան լուռ էր, որ...

Լսվում է ծերունու արցունքի շառաչումը:

«Ինչու՞», – հարցնում էր դավաճանված բանվորը:

«Ինչու՞», – հարցնում էր գեղեցիկ (Բերիան նրան նկատել էր) բժշկուհին:

«Ինչու՞», – հարցնում էր ցարի ձեռքը համբուրած պապը:

Նա «ինչու՞» չասաց:

Երբ ինչ-որ շատ ծանոթ կաշվից պատրաստված սապոգներով, կոստյումներով ու գլխարկներով մարդիկ մտան թղթե պատերով հանրակացարան, ամեն ինչ արդեն որերորդ անգամ նորից կրկնվեց: Նա մենակ էր, մայրը դրսում էր, պապը՝ երկնքում. նրա կողքին էր միայն նոր ռադիոընդունիչը:

Նրա կողքին էր հին ռադիոընդունիչը, որը միակ բանն էր, որ սևուսպիտակ էր, իրենից բացի. նրանք միմյանց հասկանում էին:

Ծերունին Ստալինի նման կանգնեց, նա իր ոտքերի տակ տեսավ սևուսպիտակ նոր ռադիոընդունիչի ձայնից ալեկոծվող պապու ջարդված գլխի արյունը, գունավոր աշխարհում դա գունավոր գորգն էր: Նա մայեց իր դիմաց և տեսավ «Աստրա»-ի ծխի նման իրար խառնված անցյալն ու ապագան, նա ուզեց դուրս գալ այդ ծխով լցված սենյակից: Մոտեցավ դռանը:

Մոտեցավ դռանը, այդ ծուխը սևուսպիտակ նոր

մեքենայի ծուխն էր, որը տաքացրեց մոր՝ արցունքով թրջված մարմինը:

Նա թարթեց աչքերը. էլ հին լուսանկարներում երևացող իր երկար մազերը չէին խանգարում: Նա ցրտից ծարավեց ու հայտնվեց խոհանոցում, վերցրեց շաքարամանից թունավոր գդալը և...

Եւ զգաց բաց հոսանքի հիշողությունն ծնող հաճույքը, զգաց Ստալինի մահը իր երակներում, զգաց չթաղված հոգու հանգիստը, զգաց այդ վերջապես...

Բայց իր աշխարհում չմահացած «հրեշը» թաղվեց թեյ սիրող ուսուցչուհու, բիզնեսմենի և դպրոցականի հետ անկախ երկրի գերեզմանոցում:

Ասում են՝ չթաղված մարդկանց հոգիները մնում են աշխարհի վրա, և դա այնքան ժամանակ է շարունակվում, մինչև նրանց մարմինները վերջնականապես չեն թաղվում: Նման մի «չթաղված» էլ ԽՍՀՄ-ն է ու մարդիկ, ովքեր մինչև օրս ապրում են ԽՍՀՄ-ի օրենքներով:

Ասում են նաև, որ չթաղվածների հոգիները սնվում են ողջերով:

**Հավատացյալը կամ երեք հարցերը**

Նա մյուս բոլոր պատերի միջով անցնել երազող մարդկանց նման ամեն օր առավոտյան և գիշերը իր մտքերը հանում էր զբոսանքի, որպեսզի նրանք մաքրվեն զգացմունքներից ու մարդկությունից: Նա դրանք ամուր կապում էր իդեալականով, որ գտնելու գայթակությունից զրգռված մտքերը չփախչեն: Նա երաժշտության միջոցով վարժեցնում էր իր մտքերին՝ սովորեցնում կեղծել՝ այսինքն թաթը տալ, կամ սիրել՝ այսինքն հաչել:

Այդ գիշեր նա իր աչքերի բահով կրակ էր փորում, երբ զգաց, որ իր մտքերը, դավաճանելով տաք ու փափուկ երազներին, հեռացել են գտնարան կամ ճմրթված լեզվով ասած «իրականություն»: Նա դուրս եկավ և քայլեց մի ամբողջ տողատակ, մայեց յուրաքանչյուր ցանկության տակ, բայց ստի հոտից բացի ոչինչ չգտավ: Արդեն լսվում էին «Աստվածաշունչ» կրակոցները. նա գիտեր, որ շուտով Բարևները կարթնանան, և ուշ կլինի: Մի ամբողջ կարոտ ու անհանգստություն նա փնտրեց իր մտքերը: Եվ միայն հուսահատության մշուշի մեջ նա գտավ նրանց: Այդ ժամանակ նա համտեսեց ամենախլացուցիչ տեսարանը՝ մտքերը զգացել էին աստվածային կրակոցը հարցերի հետ անկողնում համբուրվելու ժամանակ...

Նա թաղեց իր մտքերը հարցերի հետ, իսկ գերեզմանաքարին գրեց «Ո՛վ եմ ես, որտեղի՞ց եմ սկսել, ու՞ր եմ գնում»: Իսկ ինքը դարձավ հավատացյալ:

*Նվիրվում է Քրիստոսի մահվան 1968 ամյակին ու ինձ...*

## Աշուղ Փլեյըր

«Ընթերցողների գործեր» ինտերնետային էջից  
[http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=62](http://www.bnagir.am/?go=readers&r_work=62)

## Մարդա երկու տող (օգնեք մեզ, ընտրեք ձերը... տիրու մերը)

Ման են գալիս քուչա-քուչա,  
Ախ, իմ կյանքը քոռուփուչա:

Ման են գալիս յանա-յանա,  
Քեզ սիրելը կայֆ ա, ջանա:

Ման են գալիս վեր ու վար,  
Թարս է նայում մենքն, հավար:

Ման են գալիս քաղաքում,  
Մատաղի փող հավաքում:

Ման են գալիս անդադար,  
Ես նոր հայ են, դու՝ թաթար:

Ման են գալիս «Յամ-յամում»,  
XX ORBIT են ծանում:

Ման են գալիս պահակով,  
Ինձ ասում են դող ու կով:

Ման են գալիս դուդուկով,  
Կայնում-փչում մոստի քով:

Ման են գալիս, վետվետում,  
Կամա սուտրա են ցիտում:

Ման են գալիս անխափան,  
Դեպուտատ են փիս խափլան:

Ման են գալիս, նավարկում՝  
Ալֆրեդի սենյակում:

Ման են գալիս բազարում,  
Առուտուր են բաշարում:

Ման են գալիս անթրաշ,  
Աբիժնիկ են փիս մանթրաշ:

Ման են գալիս օղերով,  
Պապայի ճոխ փողերով:

Ման են գալիս Դուբայում,  
Մուծվում Դունչին, բա էլ ում:

Ման են գալիս, սատարում՝  
Ընտրությամբ բոլ այս տարում:

Ման են գալիս գլխիկոր,  
լխի, գլխի, գլխիկոր:

Ման են գալիս, հոտոտում,  
Փողոտ հարիֆ բռնոտում:

Ման են գալիս «Դիմակ»-ում,  
Արտիստներին պիտակում:

Ման են գալիս երթերում,  
Ընդդիմության թերթերում:

**Նագարեթ Կարոյան**

**Հանդիպող ուտոպիաներ և ուտոպիական հանդիպումներ**

Արդյո՞ք արտիստական շարժունակությունը ժամանակակից ուտոպիա է:

Երկրորդից երրորդ հազարամյակների անցման շեմին, Խորհրդային Միության փլուզումով պատմության գիրկն անցած գաղափարախոսական հակադրությունից հետո, երբ որոշ արևմտյան մտավորականներ դեռ նոր էին պատմության ավարտի մասին հայտարարություններ արել, ուտոպիայի թեման վերարդիականացնելու փորձը ինքնին կարծեք թե թափանցիկ ուղերձ է պարունակում իր մեջ. միլիենարիստական գիտակցության բացակայության և կոմունիստականի՝ նորերս կրած պարտության պայմաններում եթե ոչ վերահառնեցնել, ապա գոնե խոսել աշխարհի այնպիսի ներկայացման շուրջը, որի առանցքում ինչպես եռնատ Բլոխն է ասում, հույսի սկզբունքն է դրված:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ այդ արժարժունները զերծ լինելով համակարգային՝ գաղափարախոսական, քաղաքական կամ տեխնոլոգիական ներկայացումներ հետապնդելուց ուտոպիան ակտուալիզացնում են լեզվական իրողությունների դիրքերից, մոդալ առումով: Թեման ինստրումենտալիզացնելու այս ռազմավարությունը փոփոխությունների է ենթարկում գոյություն չունեցող տեղի մասին դասական պատկերացումը: Ի տարբերություն Թոմաս Մորի կղզու ժամանակակից ուտոպիան չունի արտատարածական կամ հետժամանակային զետեղվածություն, այլ միշտ զբաղեցնում է միջտարածական և միջժամանակային դիրքեր: Ժամանակակից ուտոպիան ոչ թե անհնարինն է այս աշխարհի նկատմամբ, այլ անորսալին՝ փախչող-հեռացողը այս աշխարհի մեջ: Լինելով այս աշխարհից՝ այլ-ի առումով այն լիակատար չէ, միաժամանակ ուտոպիա է այնքանով, որքանով անմատչելի է և անըմբռնելի: Այսինքն, անշարժությունից հանվելու և շարժման մեջ դրվելու արդյունքում այսօր ոչ միայն շարժունակությունն է հանդես գալիս իբրև ուտոպիայի դրսևորում, այլև ուտոպիան ինքն է շարժունակ: Ժամանակակից ուտոպիան բացահայտելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա շարժունակությունը, այսինքն այն պետք է դիտարկել շարժման, փոփոխականության մեջ: Նման դիտումը հնարավոր է միայն մի դեպքում՝ երբ հայտնի են ուտոպիայի դեգերման եզերքները:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ես կխոսեմ ժամանակակից արվեստի տարբեր միջավայրերում տարածում գտած որոշ համոզումների մասին, որոնց ուտոպիականությունը տեսանելի է միայն առավել

ընդհանուր կոնտեքստում:

Դրանցից մեկը ժամանակակից արվեստի ինստիտուցիոնալ համակարգի կայացմանն է վերաբերում: Ժամանակակից արվեստի գործիչների արդեն տասնամյակից ավելի է տևող փորձերը ամրացնելու ինստիտուցիոնալ համակարգը, հիմնված են այն համոզմունքի վրա, թե այստեղ հնարավոր են հաստատություններ (ժամանակակից արվեստի թանգարաններ, ինստիտուտներ, գալերեաներ և արվեստի սրահներ, պարբերական թողարկումներ ունեցող ֆորումներ, արվեստի բազմատիրաժ հանդեսներ և այլն), որոնք լեգիտիմության առումով ընդունակ լինեն մրցակցել արևմտյան հաստատությունների հետ, համապատասխանել դրանց ստանդարտներին, դառնալ արվեստագետների և ստեղծագործությունների ներկայացման ու արժեվորման անառարկելի կենտրոններ: Սակայն շարունակ ինչ-որ բան խանգարում է: Ժամանակակից արվեստի ինստիտուցիոնալ համակարգը հետխորհրդային երկրներում ոչ մի կերպ չի պնդանում: Հիմնարկությունները, որոնք ստեղծվում են մեծ վերապահություններով կարելի է կոչել որպես այդպիսին: Դրանք կարծես թե ունեն ներկայացուցչականության պակասորդ և ոչ մի կերպ չեն կարողանում դառնալ ժամանակակից արվեստի հաստատման ատյաններ: Մենք՝ արվեստի գործիչներս, սրա պատճառները փնտրում ենք հիմնականում դրսում տնտեսական ճգնաժամի, մշակույթի ոլորտում օրենսդրական դաշտի բացակայության, ընդդիմադիր գեղագիտության՝ հիմնականում ազգայինով սքոլված ակադեմիական հաստատությունների ճնշումների, պետական ձախավեր վարչարարության և այլն պատճառներում: Բայց այս ամենի հետ մի միտք երբեք հանգիստ չի տալիս. հիմնարկային համակարգը արդյո՞ք կդառնար հաստատուն, եթե մի հրաշքով հնարավոր լինի վերացնել վերոնշյալ խնդիրները:

Հետխորհրդային տարածքի ժամանակակից արվեստի միջավայրերում տարածված մյուս համոզմունքն այն է, թե հետխորհրդային հեղինակները կարող են ճանաչում գտնել ժամանակակից արվեստի արևմտյան միջավայրում, և խնդիրը միայն նրանց արդյունավետ ներկայացման մեջ է, ինչը թույլ կտա հաղթարել արևմտյան ինստիտուցիոնալ համակարգի պաշտպանական բնագծերը: Այս համոզմունքը ծագումով հարակից է առաջինին, քանի որ արևմտյան միջավայրի մեջ ճանաչման ատյանի որոնումը պայմանավորված է ոչ միայն դրա անառարկելի հեղինակությամբ, այլ տեղական ինստիտուցիոնալիզմի թուլությամբ ու հեղիեղուկությամբ:

Այս տարիների ընթացքում հետխորհրդային երկրների արվեստագետներից որևէ մեկի՝ Արևմուտքում ճանաչում չգտնելու հանգամանքը վկայում է, որ այստեղ նույնպես ինչ-որ մի բան խանգարում է. Մենք՝ ժամանակակից

արվեստի դերակատարներս և արվեստագետներս, դրա պատճառները փնտրում ենք ամենուրեք՝ արևմտյան գործիչների կանխակալ վերաբերմունքի, անձնական կապերի բացակայության, հրեական դավադրության, լեզուներին և տեխնոլոգիաներին չտիրապետելու կամ մեկ ուրիշ խոչընդոտի մեջ: Սակայն արդյո՞ք խանգարող այս հանգամանքների հրաշափառ վերացումը կհարուցեր արևմտյան միջավայրում հետխորհրդային տարածքի ժամանակակից արվեստի հեղինակների ճանաչման շքերթ:

Այս առաջին և երկրորդ համոզմունքների համադրության մեջ ընթեռնելի է մի երրորդ համոզմունք՝ թե հնարավոր է ստեղծել ժամանակակից արվեստ՝ շարունակելով հիմնվել հեղինակային պատվախնդրական այն նպատակների վրա, որոնք մոդեռնիստական արվեստի ընդհանրական առանձնահատկությունների շարքում էին: Խնդիրը միայն կամային որակներն են: Բայց ժամանակակից արվեստի ստեղծագործության համար էական է արդյոք հեղինակային հավաստիության հանգամանքը:

Ինչպես արդեն նշեցի, հետխորհրդային երկրների ժամանակակից արվեստի միջավայրերում տարածված այս համոզմունքների ուստոպիականությունը ընթեռնելի է միայն արևմտյան կոնտեքստում:

Ուստի կցանկանայի մեկ-երկու խոսքով անդրադառնալ Արևմուտքում տիրող իրավիճակին: Այն պահին, երբ հետխորհրդային միջավայրերում ջանքեր ենք գործադրում ստեղծելու կայուն ինստիտուցիոնալ համակարգ, այստեղ տեղի են ունենում փոփոխություններ, որոնք, ունենալով հանդերձ մշակութային-քաղաքական բովանդակություն, խորապես ուղղված են ընդհանրապես ներկայացուցչականության դեմ:

Դիտարկենք, դիցուք, այդ առումով ընդգծված գործառույթ ունեցող հաստատություններում արվեստի պարբերական համաժողովներում ընթացող վերափոխությունները 90-ականներին: Դրանք միտված են մի կողմից չեզոքացնելու հաստատությունների գործառնական ավտոնոմիզացիան, որի արդյունքում դրանք ոչ միայն կորցնում են իրենց կապերը անհատական ստեղծագործական տարերքի հետ, այլև, դառնալով անտարբեր ներկայացվող նյութի հանդեպ, սկսում են ինքնուրույն գործառույթ դրսևորել:

Մյուս կողմից էլ՝ վերափոխություններում իր արտացոլումն է գտնում հետսառըպատերազմյան եվրոպայի մշակութային-քաղաքական իրողությունների հետ հաշվի նստելու ժամանակակից արվեստի գործիչների պատրաստականությունը:

Հիմնական կոնցեպտը, որը դրված է այդ ինստիտուցիոնալ զարգացումների հիմքում, շարժունակությունն է: Սակայն ինչպես Մանիֆեստայի երրորդ թողարկման համակարգողներից մեկը՝ Ֆրանչեսկո Բոնամին է

դեգերող տևանքի կապակցությամբ նկատում, քիե՛նայե՛ի բոլոր չորս թողարկումների հետագիծը (Ռոտերդամ, Լյուքսեմբուրգ, Լյուբլյանա, Ֆրանկֆուրտ) մշակութային-քաղաքական քարտեզի վրա տեղադրելիս նկատելի է դառնում մի իրողություն. հետխորհրդային երկրների արվեստագետներին համագործակցության մեջ ներգրավելու եվրոպական որոշ մտավորական շրջանակների փորձը, իրագործման մեջ առանձնապես չի համընկնում արևմուտք-արևելք խզման գծի հետ:

Այսինքն, ակնհայտ է, որ Շարժունակության կոնցեպտը օպերացիոնալ ու մշակութային-քաղաքական խնդիրներին արծագանք լինելով հանդերձ՝ միաժամանակ ժամանակակից արվեստի ինստիտուցիոնալ համակարգի՝ ներկայացուցչականությունից դեպի այլընտրականություն կատարած խորհրդանշական տեղաշարժն էր արտացոլում: Այս երևույթը առավել ակնհայտորեն դրսևորվեց վայրի հետ այնպիսի խորը հիմքերով կապված հաստատության գործունեության մեջ, ինչպիսին Դոկումենտան է: Վերջին թողարկման 5 պլատֆորմները տեղադրելով աշխարհի չորս տարբեր տեղանքներում, Օկվուի էմվենցորը իրականում տրոհում է Դոկումենտայի անցկացման ավանդական վայրը իբրև ֆիզիկական տարածություն:

Վայրի ու պահի (ինչպես քանդակի մյուստերյան նախագծում) տրոհումով միաժամանակ և՛ դեպի հանդիսատեսը, և՛ դեպի արվեստագետը արվող մերձեցումը հաստատությունների կողմից ոչ այլ ինչ է, քան ինքն իրենից (տվյալ դեպքում ներկայացուցչականությունից) հրաժարում:

Արևմտյան ինստիտուցիոնալ համակարգում առկա փոխակերպումների ահա այս ֆոնին, երբ ի հայտ են գալիս այլընտրական այնպիսի կազմավորումներ, որոնց հատուկ չէ կայունությունը, ներկայացուցչական հիմնարկություններ ստեղծելու անհրաժեշտության մեր՝ հետխորհրդային միջավայրի արվեստի գործիչներիս համոզմունքը, իրապես ասած, թվում է *ուստոպիական*:

Նույնը կարելի է պնդել ժամանակակից արվեստի արևմտյան միջավայրում ճանաչում գտնելու նպատակի վերաբերյալ. այն պահին, երբ հետխորհրդային երկրների արվեստագետներին մտահոգում և հուզում է ներկայացված լինելու խնդիրը (այս առումով հիշատակման է արժանի թեկուզ Ալեքսանդր Բրենների ԻՆՉՈՒ ԻՆՉ ՉԸՆԴԳՐԿԵՑԻՔ ԱՅՍ ՑՈՒՑԱՏԱՆԴԵՍԻ ՄԵՋ խորհրդանշական աղաղակը), Արևմուտքի արվեստագետները հեզմանքի, երբեմն պարզ դժգոհության կամ ուղղակիորեն արտահայտած բողոքի տեսքով արմատական և անխնայ քննադատության են ենթարկում ներկայացուցչականությունը և ինստիտուցիոնալ համակարգը մշակութային արտադրության տեխնոլոգիական բոլոր մակարդակներում:

Հանս Հակկեն, օրինակ, Դոկումենտայի 10-րդ թողարկմանը շրջանառության մեջ դրված Միասնական մշակույթ պլակատում «Հովանավորությունը գրախոսության ձև» հեգնական տեքստով պասկազերծում է մշակութային տեխնոլոգիան իր «Էմբրիոնալ», արդեն իսկ նախագծային ընտրության փուլում:

Հիշենք Կոշուտի պատգամը, թե արվեստագետը պարտավոր է պայքարել իր ստեղծագործության իմաստի համար: Ինչպես կարելի է պայքարել արդեն գոյություն ունեցող ստեղծագործության համար. եթե արվեստագետը նկատի չունի այն պայքարը, որը տարվում է հանուն իմաստի տնօրինման իրավունքի կամ ըննդդեմ այն վեր-իմաստավորման, որ տեղի է ունենում ներկայացման մեջ:

Դանիել Բյուրենը իր հերթին բազմիցս արտահայտած այն դժգոհությամբ, թե արվեստագետները ծառայության մեջ են համակարգողների մոտ, ներկայացուցչականի ոլորտը նկարագրում է մշակութային-արտադրողական ուժերի «դասակարգային» բևեռացման մեջ:

Ինչո՞վ է պայմանավորված արվեստագետների այս կոշտ ընդհանրությունը ինստիտուցիոնալ համակարգի և ներկայացուցչականության հանդեպ:

Իվ Սիշոն իր «ժամանակակից արվեստի ճգնաժամը» գրքում վերլուծելով 90-ականների առաջին կեսին ֆրանսիական մամուլում ծավալված բանավեճը ժամանակակից արվեստում տիրող կացության շուրջը, հանգում է կարևոր մի եզրակացության. նրա կարծիքով եթե նույնիսկ առկա է որևէ ճգնաժամ, ապա վերջինս պետք է փնտրել ոչ թե ստեղծագործության, այլ դրա ներկայացման ոլորտում: Դեռևս 18-րդ դարում ձևավորված արվեստի և նրա հասարակական դերի վերաբերյալ գեղագիտական պատկերացումները՝ չհամապատասխանելով հանդերձ այսօրվա ստեղծագործական իրողություններին, չեն գիշում իրենց գերիշխող դիրքերը:

Եթե արվեստագետների քննադատական կեցվածքը, բողոքական և ըմբոստ վարքագիծը դիտարկենք ֆրանսիացի փիլիսոփայի վերոնշյալ եզրակացության լույսի ներքո, կարող ենք առաջադրել այն տեսակետը, թե դրանք արվեստագետի հանդեպ ներկայացնողի «գերակա» դիրքը փոխելու և ներկայացման իրավունքը վիճարկելու նպատակ են հետապնդում:

Եթե ինստիտուցիոնալ ոլորտում դա տալիս է արդյունքներ (տեղաշարժը դեպի այլընտրականություն ոչ այլ ինչ է, քան ներկայացման ընկրկումը կերտումի հանդեպ), ապա ստեղծագործության ոլորտում այդ պայքարը հակառակ հետևանքներ է ունենում: Կերտողական ամբողջական ստրատեգիաներ, անգամ եթե դրանք հիմնված են զուտ կոնցեպտների վրա (ինչպես ասենք կոնցեպտուալ արվեստը և Լենդ արտը մասնավորապես), դրսևորում են հղացման նկատմամբ ներկայացման ասպեկտի գերիշխանությունը հաստատելու դիտավորու-

թյուն: Պոստմոդերնիստական արվեստն ամբողջությամբ վերախաղարկման և մեկնաբանության ստրատեգիաներով ուղղակի գույք է ներկայացման ասպեկտի, որ հնարավոր է դառնում հղացումը պասկազերծելու շնորհիվ:

Նույնը կարելի է ասել նաև ստեղծագործության արտաքին ոլորտին մասին: Արարողական և ծավալատարածական անցողիկ տեսակների՝ պերֆորմենսի և ինստալացիայի կենտրոնական դիրք գրավելը ժամանակակից արվեստի տեսակային բազմազանության մեջ, հղացման հանդեպ կատարման, մեկնաբանության ու ներկայացման գերիշխանության ևս մի վկայություն է:

Եթե փորձենք ամփոփել՝ ներկայացուցչականության դեմ պայքարը ինստիտուցիոնալ ոլորտում ընթանում է նաև ներկայացման իրավունքի համար արտիստների կողմից մղվող պայքարի միջոցով: Արվեստագետի ինքնության մեջ տեղի ունեցող փոխակերպումները, հեղինակային ինքնությանը փոխարինելու եկող ներկայացուցչական (ինչպես Չ. Ջեյքսոն է անվանում) ինքնությունը վկայեց ներկայացուցչականության դեմ պայքարի համոզմունքի ուստիականությունը:

Իրականում ժամանակակից արվեստի հետխորհրդային միջավայրերում տարածում գտած հանդուժանքներն ունեն ընդհանուր ուստիական մի հիմք՝ քայլը դեպի ուրիշը, հանդիպակացը, անհատապաշտական գաղափարները, դեպի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական արժեքները, որտեղ արվեստը ընդամենը արտահայտվելու ազատության դրսևորումն է:

Այնինչ արևմտյան միջավայրերում առկա շարժունակությունը ընդհանուր մի ուրվագծի մեջ դիտարկելու դեպքում, կարող ենք ասել, որ մի կողմից հեղինակային ինքնության նահանջը ներկայացուցչականի հանդեպ, մյուս կողմից հենց ներկայացուցչական հաստատությունների այլընտրական վերակազմակերպումները միասնաբար հրահրում են մի հեռացում հեղինակային-անհատական արժեքներից դեպի ստեղծագործական համագործակցության կոլեկտիվ դաշտերը:

Այժմ եթե փորձենք շարժունակության այս երկու դրսևորումները համադրել մի հարթության վրա, կուրվագծենք փոխանակման մի վայր, որն ուստիական է: Քանզի իրագործման մեջ ենթադրում է մի տեղանք, որտեղ արվեստը, լինելով իրագործված (տարալուծված ամեն մի առարկայի ու երևույթի մեջ), որպես այդպիսին գոյություն չունի, բայց որտեղ միայն արվեստագետներ են (թող որ հետխորհրդային) հանդիպում: Սակայն վայրն այդ ոչ թե անհնարինի, այլ հնարավոր մի հանդիպման պարագան է, որի շրջանակներում ոչ թե հանդիպումներն են Ուստիական, այլ շարժուն Ուստիաներն են հանդիպում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<i>Վահան Իշխանյան</i> <b>Արևածաղիկները չեն թառամում</b>	4
<i>Ջաս Սուպերպոետ</i> <b>Աշնանային լիրիկա կամ լիրիկական աշուն</b>	10
<i>Արման Գրիգորյան</i> <b>Կեցցե հեղափոխությունը</b>	16
<i>Եղիշե Չարենց</i> <b>Անտիպ</b>	20
<i>Վահե Ավետյան</i> <b>Բրայթոն Բիչ</b>	22
<i>Լուսինե Ստեփանյան</i> <b>Փոքրիկ քաղաքի մեծ առնետները</b>	27
<i>Սամվել Յավրյան</i> <b>Անծանոթ աշխարհ</b>	31
<i>Վահրամ Մարտիրոսյան</i> <b>Հարգելի Տիկին/Պարոն</b>	34
<i>Անահիտ Հայրապետյան</i> <b>Թաբու</b>	35
<i>Ալեքսանդր Հովսեփյան</i> <b>Առանց ռեմարկների</b>	40
<i>Արման Մարտիրոսյան</i> <b>Ոչինչ չեն զգում:</b>	42
<i>Անահիտ Սարգիսեան</i> <b>Որտեղացի</b>	43
<i>Կարեն Մխիթարյան</i> <b>Դյուցազնապատում</b>	45
<i>Հովհաննես Թեքոյան</i> <b>00</b>	47
<i>Արաքս Պողոսյան</i> <b>Վարդեր</b>	52
<i>Գրիգոր Պըլտեան</i> <b>Դարպաս</b>	54
<i>Գոհար Նիկողոսյան</i> <b>Ծաղկի տաբու</b>	57
<i>Արամ Հովհաննիսյան</i> <b>Սրտախորովը</b>	61
<i>Մանասէ</i> <b>Արմեն Շեկոյանի բանաստեղծության դիտարկում երեք եղանակով</b>	64
<i>Արծուի</i> <b>Կրկին վերադարձ</b>	67
<i>Նարեկ Նիկողոսյան</i> <b>Ծեր մահը կամ «СССР-ում ծնվածը...»</b>	70
<i>Աշուղ Փլեյըր</i> <b>Մարդա երկու տող (օգնեք մեզ, ընտրեք ձերը... տիրու մերը)</b>	71
<i>Նազարեթ Կարոյան</i> <b>Հանդիպող ուտոպիաներ և ուտոպիական հանդիպումներ</b>	72

76

